21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

2 (60)

ԵՐԵՎԱՆ

2015

21-ՐԴ ԴԱՐ
տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **2 (60), 2015**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի
Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

Ալեքսանդր Կորնիլով
Նիժնի Նովգորոդի Ն.Ի. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր (Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արամ Սաֆարյան
Բանասիրական գիտությունների թեկնածու

Արթուր Աթանեսյան
ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

Բաբկեն Վարդանյան
«Հայկ հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական

Գագիկ Հարությունյան *(համակարգող)*
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան
Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր (Մոսկվա, ՌԴ)

Հրանուշ Հակոբյան
ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դաբաղ
Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Սեյրան Օհանյան
ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ

Սերգեյ Գրինյան
Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Սևակ Սարուխանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ք.գ.թ.

Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 2 (60), 2015թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Սևակ Սարուխանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Աննա Ժամակոչյան
Արեստակես Սիմավորյան
Էդուարդ Դանիելյան
Սերգեյ Սարգսյան
Վահրամ Հովյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Հայաստան – Սփյուռք. նոր մարտահրավերներ …….. 5

Ալեքսանդր Մանասյան
Հայոց ցեղասպանություն. քաղաքական
վերիմաստավորման հրամայականը
Մեծ եղեռնից 100 տարի անց ...……..……..…... 16

Յանոս Խարալամբիդիս
Ահաբեկչության «Լեռնեյան հիդրան» ……..……..... 34

Արման Նավասարդյան
Պրոֆեսիոնալիզմի և դիլետանտիզմի
անհամատեղելիությունը դիվանագիտական
գործընթացներում ……...…….. 52

Արեստակես Սիմավորյան, Վահրամ Հովյան
Հայագիտական կենտրոնների խնդիրները .....…... 62

Ստալ Սարդարյան
ՀՀ դերը Սփյուռքի հայապահպանության գործում …..... 75

Թամարա Վարդանյան-Այվազյան
Ազգային քաղաքականությունն Անդրկովկասում
1920-1930-ական թթ.
«Արմատավորման» առանձնահատկությունները ..…... 91

Սամվել Մանուկյան
Ինտեգրացիոն դիրքորոշումների կառավարումը
Հայաստանի հասարակությունում ……..……... 107

Դավիթ Սարգսյան
Եվրաինտեգրման ընկալումները
հայաստանյան մամուլում ……..……... 135

Հուշագիր հեղինակին 147

ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓՅՈՒՌՔ.
ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Գագիկ Հարությունյան*

Բանալի բառեր՝ Հայաստան, Սփյուռք, աշխարհակարգի փոփոխություն, մտավոր ներուժ։

Ցեղասպանության 100-ամյակի առիթով այսօր բազմաթիվ են ուղերձները և հրապարակումները, միջոցառումները և տարաբնույթ հավաքները։ Դրանց շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Հռոմի պապի ուղերձը և բարձրագույն քաղաքական մակարդակով հանդիպումները Երևանում։ Ընդհանուր առմամբ, կազմակերպական ջանքերը արդյունավետ էին և նպաստեցին ինչպես խնդրին միջազգային հնչեղություն տալուն, այնպես էլ հայկական հանրության համախմբման գործին։

Այդ ամենին զուգահեռ՝ երբեմն օգտակար է շեղվել խնդրի շուրջ ձևավորված ավանդույթներից՝ փորձելով մի փոքր այլ մոտեցում ցուցաբերել մեկդարյա վաղեմության իրողություններին։

Առաջնային դրույթը, որն, ըստ մեզ, անհրաժեշտ է ընդունել, հետևյալն է. Ցեղասպանության խնդրում պատասխանատվության իրենց բաժինն ունեն նաև ընդհանրական հայկական հանրությունը և հատկապես մեր քաղաքական ընտրանին՝ կուսակցությունները, մտավորականությունը և եկեղեցին։ Նրանք (բացառությամբ առանձին անհատների) չկարողացան ըմբռնել քաղաքական իրողությունները և գործընթացները, կանխատեսել և խոչընդոտել աղետալի զարգացումները։ Իրերի բերումով հենց այդ ընտրանու արևմտահայ հատվածն էր, որ առաջինը զոհ գնաց 1915-ի Եղեռնին։ Սա վկայություն է այն մասին, որ հայկական հանրությունը, ցավոք, չուներ ազգային ռազմավարություն և այն իրականացնելու համապատասխան միջոցներ ու մեխանիզմներ։ Իր հերթին, ռազմավարական մտածելակերպի և քաղաքական կանխա-

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն։

տեսումների մշակույթը ձևավորվում է հանրության մտավոր ներուժի և կազմակերպչական կարողությունների հիման վրա, այսինքն՝ պետք է արձանագրել նաև վերջիններիս անբավարար մակարդակը։

Մեկ դար անց Հայաստանը և Սփյուռքը հայտնվել են մի իրադրությունում, որը նույնպես կարիք ունի ադեկվատ ըմբռնման և գնահատման։ Դրա հրատապությունը պայմանավորված է նրանով, որ գլոբալ հարթությունում ընթանում է վերակառուցում. միաբևեռ աշխարհակարգը կազմալուծվում է, և փոխարենը ձևավորվում է բազմաբևեռ համակարգ՝ այստեղից հետևող աշխարհաքաղաքական, տնտեսական և արժեհամակարգային փոփոխություններով։ Արդյունքում՝ ողջ աշխարհում աճում է ռազմաքաղաքական լարվածությունը, իսկ հակամարտության հասնող հարաբերությունները հիմնական աշխարհաքաղաքական դերակատարների միջև ենթարկվում են նոր, արդեն «Երկրորդ սառը պատերազմի» կանոններին [1, 2]։ Պատմության ներկա փուլը, ըստ ամենայնի, կարող է շրջադարձային լինել։ Այն ինչ-որ առումով կարելի է համեմատել ինչպես Առաջին համաշխարհայինի ժամանակաշրջանում տեղի ունեցող աշխարհի վերաձևման և աշխարհակարգի հեղափոխական փոփոխությունների, այնպես էլ ոչ շատ վաղ անցյալում ԽՍՀՄ փլուզման և դրան հաջորդող գործընթացների հետ։ Անկասկած, համակարգային վերակառուցման այս երևույթը կարիք ունի բովանդակային ըմբռնման և սցենարային վերլուծության, որոնց վրա հենվելով միայն հնարավոր կլինի մշակել հայկական հանրության շահերին համապատասխանող ռազմավարական ծրագրեր։

Չքննարկելով գլոբալ գործընթացների համախումբը՝ խիստ համառոտ անդրադառնանք աշխարհագրորեն մեզ ավելի մոտ ընթացող գործընթացներին։ Նման մարտավարական հարթությունում ներկայիս իրավիճակի ամենավառ արտահայտություններն են, այսպես կոչված, «հիբրիդային» պատերազմները Մեծ Մերձավոր Արևելքում *(ՄՄԱ)* և Ուկրաինայում։ Փորձենք խիստ համառոտ դիտարկել գործընթացներն այդ տարածաշրջաններում՝ Հայաստանի (ՀՀ ու ԼՂՀ) և Սփյուռքի հայկական համայնքների անվտանգության տեսանկյունից։

Մեծ Մերձավոր Արևելք

Իրաքյան պատերազմը (2003թ.), «արաբական գարունը» և Իսլամական պետության *(ԻՊ)* ինքնահռչակումը տարածաշրջանում ձևավորել են քաոտիկ իրավիճակ, որից էապես տուժել, իսկ երբեմն՝ անդառնալիորեն կազմալուծվել են տեղի հայկական համայնքները: Վերջիններս ոչ միայն արևմտահայության անմիջական ժառանգներն են, այլև արևմտահայ մշակույթի կրողները և տարածողները: Այդ տեսանկյունից *ՄՄԱ*-ում ընթացող զարգացումները կարելի է ընկալել որպես Ցեղասպանության շարունակություն: Ակնհայտ է, որ մերձավորարևելյան գործընթացներն ուղղակի սպառնալիք են Սփյուռքի և ողջ հայկական հանրության համար: Պետք է նաև ընդունել, որ մենք պատրաստ չէինք այդ մարտահրավերին և, ցավոք, առայսօր չունենք դրան համալիր արձագանքելու ծրագրեր և հնարավորություններ:

Միևնույն ժամանակ, մերձավորարևելյան զարգացումները կարիք ունեն մեկնաբանման նաև տեղեկատվական քաղաքականության տեսանկյունից: Ինչպես հայտնի է, *ՄՄԱ*-ում տեղի են ունենում բնակչության կրոնական և ազգային հատկանիշներով պայմանավորված զանգվածային (հաշվարկվում է միլիոններով) սպանություններ և տեղահանում, զուգահեռաբար ոչնչացվում են համայն մարդկությանը պատկանող մշակութային արժեքները: Այդ իրողության պատասխանատուներն են այն երկրները, որոնց ռազմաքաղաքական գործունեությունը ստեղծել է պայմաններ նման ցեղասպանություն իրականացնելու համար [3]: Թերևս, նպատակահարմար է, որ այս երևույթին ուշադրություն դարձնեն նաև մեր ցեղասպանագետները՝ թեկուզ այն պատճառով, որ Սիրիայի դեմ վարվող պատերազմում և իսլամական ծայրահեղականության ծավալման խնդիրներում անմիջական դերակատարում է ստանձնել Թուրքիան, որն այդպիսով այսօր էլ շարունակում է իր ցեղասպանածին քաղաքականությունը:

Միևնույն ժամանակ, զարգացումները *ՄՄԱ*-ում վտանգում են ոչ միայն Սփյուռքի, այլև Հայաստանի (ՀՀ և ԼՂՀ) անվտանգությունը: Քաոտիկ իրադրությունը թելադրում է տարածաշրջանի տերություններին ավելի ինքնուրույն և երբեմն էլ՝ ավելի ագրեսիվ քաղաքականություն վարել՝ դուրս գալով նախկին համաձայնությունների և պայմանագրերի շրջանակից: Այդ երևույթը մենք տեսնում ենք հատկապես Իսրայելի և Թուրքիայի օրինակով.

մասնավորապես, ԱՄՆ-ի հետ վերջինիս հարաբերություններում որոշակի տարաձայնություններ և սառնություն են նկատվում: Ի լրումն՝ Իրանի, Իսրայելի և Թուրքիայի միջև աճում է նաև մրցակցությունը տարածաշրջանի առաջատարը լինելու խնդրում: Թերևս, հենց այս հանգամանքների համատեքստում պետք է դիտարկել Թուրքիայի միջուկային զենք ստեղծելու պլանները [4]: Ակնհայտ է, որ այս խնդիրը պետք է ընկալել որպես լրջագույն մարտահրավեր՝ ուղղված Հայաստանին և Սփյուռքին: Նշենք նաև, որ այս խնդիրը նույնպես դուրս է մնացել հայկական հանրության կողմից դիտարկվող և տեղեկատվական շրջանառության մեջ ներմուծվող հարցերի շարքից, մինչդեռ ցեղասպանածին ավանդույթներ ունեցող երկրի ձեռքում նման զենքը բազմակի վտանգավոր է:

Հատկանշական է, որ Թուրքիան, Արևմուտքից ավելի անկախ գործելու և իր ինքնավարության մակարդակը բարձրացնելու նպատակով, ձգտում է ռազմավարական գործընկերություն հաստատել Ռուսաստանի հետ: Իր հերթին, ՌԴ-ի հանդեպ կիրառվող արևմտյան պատժամիջոցները դրդում են Մոսկվային սերտացնել հարաբերություններն Անկարայի հետ: Նման քաղաքական տրամաբանությունն ինչ-որ չափով հիշեցնում է նախորդ դարի քսանականների Մոսկվայի և Անկարայի սերտ համագործակցության նախադեպը: Հատկապես անհանգստացնում է այն փաստը, որ ներկայումս այդ երկրների միջև տնտեսական շեշտադրումները կատարվում են ոչ միայն ռուսական գազի տեղափոխման հարցում, այլև ատոմային էներգետիկայի ոլորտում: Միևնույն ժամանակ, ի տարբերություն նախորդ դարում ստեղծված իրավիճակի, այսօր Ռուսաստանը Հայաստանի ռազմական անվտանգության երաշխավորն է և «միջուկային վահանը» Թուրքիայի պարագայում[1]: Միևնույն ժամանակ, պետք է նաև հաշվի առնել, որ եթե այդ «վահանն» այսօր գործուն է ՌԴ խարիզմատիկ առաջնորդի կողմից ձևավորված համակարգի պարագայում, ապա երաշխիքները երկարաժամկետ հեռանկարում այդքան էլ միանշանակ ու հստակ չեն:

Սակայն *ԻՊ* բացասական գործոնը չի սահմանափակվում միայն Թուրքիայով: Համաձայն որոշ սցենարների, *ԻՊ* զինյալները կարող են իրենց գոր-

[1] *Гагик Арутюнян*, «Наихудший сценарий – реализация Турцией своих амбиций по созданию ядерного оружия», http://www.golosarmenii.am/article/26167/naixudshij-scenarij-%E2%80%93-realizaciya-turciej-svoix-ambicij-po-sozdaniyu-yadernogo-oruzhiya---.

ծողությունները տեղափոխել Կովկաս և Մերձկասպյան տարածաշրջան (ինչը մասամբ արդեն տեղի է ունենում[1]) ու այդպիսով ապակայունացնել նաև Հարավային Կովկասը [5]: Նման զարգացումը նույնպես անմիջական վտանգ է հանդիսանում Հայաստանի համար: Նկատենք նաև, որ ըստ որոշ կանխատեսումների՝ իսլամական ծայրահեղականները կարող են օգտվել նաև Ադրբեջանի հասարակությունում «գունավոր հեղափոխության» համատեքստում ընթացող խմորումներից: Ինչպես վկայում է արաբական և ուկրաինական փորձը, նման հեղափոխությունների արդյունքում ստեղծված իրավիճակներից օգտվում են, առաջին հերթին, ծայրահեղականները, որոնք ունեն ուժային կառույցներ և գործելու հստակ ծրագրեր: Անկասկած, նման ծայրահեղականացված Ադրբեջանը բոլոր տեսանկյուններից անհամեմատ ավելի վտանգավոր է Հայաստանի համար: Այդպիսի սցենարը, որի հավանականությունն այսօր թվում է, թե այնքան էլ բարձր չէ, նույնպես անհրաժեշտ է վերլուծել ու հաշվի առնել: Հավելենք, որ նմանատիպ զարգացումները հնարավոր են նաև Թուրքիայի պարագայում, որի համեմատաբար «մեղմ իսլամական» վարչակարգը կարող է վերափոխվել ծայրահեղականի: Այստեղ պետք է, անշուշտ, հաշվի առնել նաև այն ակնհայտ հանգամանքը, որ ի դեմս Թուրքիայի և Ադրբեջանի՝ մենք ունենք միմյանց հետ սերտաճած երկու պետություն և ժողովուրդ:

Սակայն ծայրահեղականության աճ տեղի է ունենում ոչ միայն *ՄՄՍ* տարածաշրջանում:

Ուկրաինա

Այս երկրում 2014թ. արտաքին ուժերի կողմից հրահրված հերթական գունավոր հեղափոխությունը կատարվել է «Երկրորդ սառը պատերազմի» համատեքստում և ուղղված է Ռուսաստանի դեմ: Չխորանալով այդ գործընթացների մեջ՝ փորձենք խիստ համառոտ դիտարկել դրանց ազդեցությունը հայկական հանրության և պետության վրա: Ինչպես հայտնի է, Ուկրաինայում պաշտոնապես բնակվում է շուրջ 100 հազար հայ[2], և այդ երկրում ազգայնա-

[1] Տե՛ս, մասնավորապես՝ *Станислав Иванов*, «Россия в борьбе с исламистскими группировками», http://ru.journal-neo.org/2015/03/08/rus-rossiya-v-bor-be-s-islamistskimi-gruppirovkami/.

[2] Հետխորհրդային հանրապետություններում բնակվող հայերի իրական թիվը, որպես կանոն, 10-20%-ով բարձր է պաշտոնապես գրանցվածներից:

մոլության աճը, կառավարման և տնտեսության ոլորտներում խորացող ճգնաժամը խիստ բացասաբար են ազդել նրանց վրա: Իսկ մեր հայրենակիցների այն մասը, որոնք բնակվում են ռազմական գործողությունների տարածքում՝ Դոնեցկի և Լուգանսկի մարզերում, հայտնվել են հատկապես ծանր պայմաններում: Այսօր ՀՀ-ում են հայտնվել մեր ազգակից փախստականներ ոչ միայն Մերձավոր Արևելքից, այլ նաև Ուկրաինայից: Իր հերթին, հայտնի զարգացումներն այդ երկրում և դրանց հետևած՝ Ռուսաստանի հանդեպ կիրառվող արևմտյան պատժամիջոցները բավական բացասաբար են ազդել Ռուսաստանի տնտեսության և, հետևաբար՝ այնտեղ բնակություն հաստատած շուրջ 2 մլն հայերի վրա: Մասնավորապես, ռուբլու արժեզրկման արդյունքում 2014թ. 10.7%-ով նվազել են նաև ՌԴ-ից ՀՀ կատարվող տրանսֆերտները, որոնք կազմում են ընդհանուր մասնավոր փոխանցումների ավելի քան 80%-ը: Նկատենք, որ «ռուսական տրանսֆերտները» կարևոր դերակատարում ունեն ՀՀ տնտեսությունում, և նրանց մասնաբաժինը, օրինակ, 2013թ. ՀՆԱ-ում, կազմել է 15,4% ($1,6 մլրդ): Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ոչ այնքան առաջատար դիրքերը (մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշով ՀՀ-ն աշխարհում գրավում է 115-րդ հորիզոնականը)՝ այս գործոնի նշանակությունը բավական կարևոր է: Այսինքն, ելնելով միայն այս ցուցանիշից՝ կարելի է արձանագրել, որ ռուս-ուկրաինական հակամարտությունը բացասաբար է ազդել հայկական տնտեսության վրա:

Ընդհանուր առմամբ, ուկրաինական ճգնաժամը և ՌԴ-ՆԱՏՕ լարված հարաբերությունները բացասաբար են ազդում Հայաստանի անվտանգության վրա: Մասնավորապես, հենց լարվածությամբ կարելի է բացատրել վերջին շրջանում Ադրբեջանի ռազմական ակտիվությունը: Սակայն կան նաև որոշ դրական հետևանքներ: Ղրիմի միացումը ՌԴ-ին, Դոնբասի և Լուգանսկի մարզերի ինքնավարության ձգտումը մեզ համար կարևոր նշանակություն ունեցող ազգերի ինքնորոշման իրավունքի վառ արտահայտություններ են: Նշենք նաև, որ աշխարհաքաղաքական առումով, հաշվի առնելով ՀԱՊԿ-ին և ԵՏՄ-ին ՀՀ անդամակցությունը, Ղրիմի միացումն էապես խոչընդոտում է Սև ծովը «ներքին ավազանի» վերածելու Թուրքիայի հայտնի նկրտումներին, ինչն անխուսափելիորեն կիրագործվեր, եթե այդ թերակղզին մնար Ուկրաինայի կազմում[1]:

[1] *Гагик Арутюнян,* «Возврата к прежнему статусу Крыма уже не будет», http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=12594

Այսպիսով, կարելի է փաստել, որ հայկական հանրության մի զգալի մասը, Հայաստանին այս կամ այն չափով հարակից տարածաշրջաններում ընթացող զարգացումների հետևանքով, հայտնվել է բավական վտանգավոր իրադրությունում, որը կարիք ունի խոր ըմբռնման, վերլուծության և գնահատման: Նման աշխատանքը ենթադրում է ազգային մտավոր ռեսուրսների կենտրոնացում, համապատասխան ուղղորդում և արդյունավետ կառավարում: Մինչդեռ, այս խնդրում և՛ Հայաստանը, և՛ Սփյուռքն ունեն լուրջ բարդություններ:

ՀՀ մտավոր ներուժը ԽՍՀՄ փլուզումից հետո կատարված հեղափոխական փոփոխությունների և «վուլգար ազատականացման» հետևանքով որակապես նվազել է: Փակվել են հարյուրավոր հետազոտական ինստիտուտներ, կոնստրուկտորական բյուրոներ և բարձրտեխնոլոգիական ոլորտի գործարաններ: Տնտեսության ներկայիս վիճակը թույլ չի տալիս լիարժեք ֆինանսավորել գիտության և կրթության ոլորտը: Տագնապալի է այն փաստը, որ վերջին 2 տասնամյակում նվազել է ոչ միայն հանրապետության բնակչությունը[1], այլև փոխվել է հանրության կառուցվածքը, որում այսօր գերակայում են սպասարկման և առևտրի ոլորտում աշխատողները [6]: Բավական է նշել, որ համաձայն որոշ փորձագիտական գնահատականների, որակյալ աշխատուժի թվաքանակը կամ, այսպես կոչված, «բարդ աշխատանքով» զբաղվողների (որակյալ բանվորից մինչև ականավոր գիտնական) թիվը, ամենալավատեսական գնահատականներով, կրճատվել է շուրջ 10 անգամ: Համաձայն պաշտոնական տվյալների, գիտաշխատողների թիվը նվազել է առնվազն 5 անգամ՝ 30 հազարից հասնելով մոտ 6 հազարի: Գիտակրթական ոլորտի անկման մասին է վկայում նաև այն փաստը, որ Երևանի պետական համալսարանը վարկանիշային ցուցակներում զբաղեցնում է 1400 հորիզոնականից ցածր գտնվող դիրքեր:

Մտավոր ներուժի ոլորտում հուսադրող չեն գործերը նաև Սփյուռքում: Որպես վերջին տարիների ամենամեծ կորուստ կարելի է գրանցել Մելքոնյան վարժարանի փակումը: Փայլուն չեն գործերը նաև հայագիտական կենտրոններում: Համաձայն «Նորավանք»-ի փորձագետների գնահատականների,

[1] Հայաստանի բնակչությունը 1989թ. կազմել է 3.3 մլն, 2020 և 2030թթ. կանխատեսվում է համապատասխանաբար 2.5 մլն և 2.0 մլն: Նկատենք, որ այդ նույն թվականներին Ադրբեջանի բնակչությանը վերաբերող թվերը կազմում են համապատասխանաբար 7.0, 10.0 և 10.5 մլն:

արտերկրում գործող մոտ 90 նման կենտրոններից միայն 14-ն են, որոնք այս կամ այն չափով (ցավոք, երբեմն ոչ այնքան բարձր մակարդակով) զբաղվում են հայությանն առնչվող արդիական խնդիրներով [7]: Երբեմն փոքր-ինչ պարզունակ են նաև Սփյուռքի հայկական մամուլի մոտեցումներն աշխարհաքաղաքական իրողությունների նկատմամբ [8]: Գոյություն ունեցող իրադրությունը, մասնավորապես, հետևանք է այն իրողության, որ, այսպես կոչված, «հայկական կապիտալը» (ինչպես արտերկրում, այնպես էլ հայրենիքում) լավ չի պատկերացնում Հայաստանի և Սփյուռքի ներկայիս իրավիճակը՝ այսպես կոչված «կոորդինատները» գլոբալ հարթությունում: Բնականաբար, չի գիտակցվում նաև մտավոր ներուժի զարգացման կարևորությունը: Արդյունքում՝ նրանց գործարարությունից դուրս «ազգասիրական» քայլերը հաճախ արտահայտվում են հերթական խաչքարի տեղադրումով այս կամ այն կառույցի հարևանությամբ: Հարկ է նաև շեշտել, որ արդի ռազմաքաղաքական «տուրբուլիզացիայի» պայմաններում տեղի է ունենում միջազգային իրավունքի և նորմերի սրընթաց արժեզրկում: Այսինքն՝ հայկական հանրության այն մասի հույսերը, թե Հայ դատի նկատմամբ միջազգային հանրության «բարյացակամ վերաբերմունքը» կհանգեցնի, օրինակ, Սևրի դաշնագրի հիման վրա մեր պահանջատիրությունը բավարարելուն, պատրանքային են և դրանով իսկ վտանգավոր:

Մինչդեռ մեր մրցակիցների պարագայում իրավիճակը միանգամայն այլ է: Տնտեսապես զարգացած Թուրքիայում (ՀՆԱ ցուցանիշով 17-րդ տեղում է աշխարհում) գործում է 186 համալսարան, իսկ կրթությանը հատկացվող ծախսերը կազմում են $24 մլրդ: Համաձայն *The Times*-ի 2013-2014թթ. բուհերի վարկանիշային ցուցակի, աշխարհի լավագույն 500 համալսարանների շարքում ընդգրկվել է թուրքական 5 բուհ: Իսկ ըստ ԱՄՆ Ազգային գիտական հիմնադրամի 2014թ. «Գիտահետազոտական ակտիվության» ցուցանիշի՝ Թուրքիան աշխարհում զբաղեցնում է 19-րդ տեղը: Հատկանշական է, որ այդ երկիրն առաջատարներից է նաև գրքերի հրատարակման և ընթերցման առումով՝ 2012թ. հրատարակվել է 42626 նոր գիրք[1]:

[1] Տե՛ս Հրատարակությունները Հայաստանի Հանրապետությունում 2013թ. Վիճակագրական ժողովածու, Երևան, ՀԱԳ, 2014, էջ 8, http://book-chamber.am/pdf/statistika-mamul2013_new.pdf.
2012 Türkiye Kitap Pazarı Raporu, “Türkiye Yayıncılar Birliği –Resmi sitesi” http://www.turkyaybir.org.tr/yayincilik-sektoru-verileri/2012-turkiye-kitap-pazari-raporu/475.

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ այդ երկրում ձևավորվել են շուրջ 100 «ուղեղային կենտրոններ» *(think-tank),* որոնց մի ստվար մասն իրականացնում է երկրի զարգացմանն ուղղված վերլուծություններ և ռազմավարական մշակումներ: Հատկանշական է, որ դրանցից մի քանիսը մշակում են քաղաքական հատուկ տեխնոլոգիաներ հայկական պահանջատիրական նախաձեռնությունները չեզոքացնելու նպատակով՝ շեշտադրումները հիմնականում կատարելով Սփյուռքի ուղղությամբ [9]: Ի լրումն այս ամենի՝ բավական աշխուժացել են նախկինում որևիցե մի լուրջ հաջողություն չարձանագրած ադրբեջանական հետազոտական կառույցները [10]:

Որոշ հետևություններ

Արցախյան հակամարտության խնդրում խորացած մի բրիտանացի վերլուծաբան իր հրապարակումներից մեկում արտահայտվել է այն ոգով, թե հայկական կողմը պատերազմը շահեց, քանի որ «տեխնոլոգիապես» (կամ այլ խոսքերով՝ մտավոր ռեսուրսներով) գերազանցում էր հակառակորդին: Ներկայիս՝ նույնպես շրջադարձային նշանակություն ունեցող պատմական շրջանում այդ առավելությունը, ցավոք, զգալիորեն նվազել է, և ստեղծված իրավիճակը պետք է ընդունել որպես լրջագույն մարտահրավեր՝ ուղղված Հայաստանին և Սփյուռքին: Միևնույն ժամանակ, կասկած չի հարուցում, որ մեր ստեղծարար հանրությունը, անհրաժեշտ ուշադրության և կազմակերպման պարագայում, կարող է արագ լրացնել այդ բացը: Մասնավորապես, հրատապ խնդիր պետք է համարել Հայաստանի և Սփյուռքի առաջատար վերլուծաբանների մասնակցությամբ «ուղեղային կենտրոնների» հիմնումը, որոնք պետք է վերլուծեն «հայկական հիմնախնդիրները», մշակեն ազգային ռազմավարության ծրագրեր և դրանց իրագործման քաղաքական-տնտեսական տեխնոլոգիաներ:

Մարտ, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Гагик Арутюнян,* О некоторых особенностях «Холодной войны-2», «21-й Век», # 2(31), с. 3, 2014.
2. *Ричард Хаас,* Разваливающийся миропорядок, «Россия в глобальной политике», #6(12), с. 22, 2014.

3. *Gagik Harutyunyan,* The Multipolar Realities, Middle East and News Ticker Genocide, «21-st Century», #2(14), p. 3, 2013.
4. *Գագիկ Հարությունյան,* Թուրքական միջուկային սպառնալիքը, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս», #4 (25), 2012թ., *Արա Մարջանյան,* Միջուկային Թուրքիա, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս», #4, 2012թ., *Հայկ Գաբրիելյան,* 2023 թվականը միջուկային երկրի կարգավիճակով դիմավորելու Թուրքիայի հավակնության շուրջ, «Գլոբուս» վերլուծական հանդես, #10, 2014:
5. *С. Иванов,* Радикальный ислам как угроза международной безопасности, «Зарубежное военное обозрение», с. 22, #1(814), 2015.
6. *Գագիկ Հարությունյան,* Ժողովրդագրություն, զարգացման ռազմավարություն և տեխնոլոգիաներ, «21-րդ ԴԱՐ», #1(58), էջ 5, 2015:
7. *Ա.Սիմավորյան, Վ.Հովյան, Տ.Ղանալանյան,* Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2014:
8. *Ա.Ժամակոչյան, Ա.Մանուսյան, Դ.Գալստյան, Լ.Հակոբյան,* Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2014:
9. *Արիստակես Սիմավորյան,* «Թուրքիայի ուղեղային կենտրոնների զարգացման նախադրյալները. այժմեական խնդիրները», «21-րդ ԴԱՐ», # 6, 2012, էջ 20:
10. *Կարեն Վերանյան,* Հարավային Կովկասի երկրների գիտահետազոտական գործունեությունը. վիճակագրական վերլուծություն, « 21-րդ ԴԱՐ», #1(58), 2015:

ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓՅՈՒՌՔ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Գագիկ Հարությունյան

Ամփոփագիր

Ներկայացված համառոտ դիտարկումից հետևում է, որ արդի Սառը պատերազմի և աշխարհակարգի վերափոխման գործընթացների արդյունքում ձևավորված իրողությունները բացասական ազդեցություն են գործում Հայաստանի և Սփյուռքի վրա: Չի բացառվում նաև, որ գլոբալ հարթությունում ընթացող զարգացումները որոշակի փուլում անմիջական վտանգ հանդիսանան մեր ազգային անվտանգությանը: Սակայն հայկական հանրությունը և նրա ընտրանին, ինչպես և մեկ դար առաջ, բավարար ուշադրություն չեն հատկացնում ազգային ռազմավարական մշակումներին և կանխատեսումներին: Մասնավորապես, այդ ոլորտում կուտակված հիմնախնդիրների լուծման նպատակով, Հայաստանի և Սփյուռքի առաջատար մասնագետների մասնակցությամբ, անհրաժեշտ է հիմնել համապատասխան ուղղվածություն ունեցող «ուղեղային կենտրոններ»:

АРМЕНИЯ-ДИАСПОРА:
НОВЫЕ ВЫЗОВЫ

Гагик Арутюнян

Резюме

Из представленного краткого анализа следует, что складывающиеся в результате нынешней «Холодной войны» и процесса изменения миропорядка реалии негативно влияют на Армению и Диаспору. Не исключено также, что развивающиеся в глобальной плоскости процессы на каком-то этапе станут представлять непосредственную угрозу нашей национальной безопасности. Однако армянское общество и его элита, как и век назад, не уделяют должного внимания национальным стратегическим разработкам и прогнозам. В частности, для решения накопившихся в этой сфере проблем необходимо при участии ведущих специалистов Армении и Диаспоры основать «мозговые центры» соответствующей направленности.

ARMENIA – DIASPORA:
NEW CHALLENGES

Gagik Harutyunyan

Resume

A brief overview suggests that the realities formed under the current “cold war” and changing world order negatively influence Armenia and Diaspora. It is also possible that at some point the global developments will start posing a direct threat to our national security. However, as it happened a century ago, the Armenian public and its elite tend to pay little attention to development of national strategies and forecasting. In order to start solving the problems accumulated in this area, it is necessary to establish think-tanks with relevant profile with participation of leading experts of Armenia and Diaspora.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՑ 100 ՏԱՐԻ ԱՆՑ

Ալեքսանդր Մանասյան*

Բանալի բառեր ՝Եղեռն/Հայոց ցեղասպանություն, Եղեռնի թեմայի քննարկման արգելում, թուրքերի ցեղասպանածին վարքի ակունքները, Արևելյան Անդրկովկասի հայության եղեռն, Ադրբեջանի հայություն, Եղեռնի միջազգային-քաղաքական հետևանքները, նոր ցեղասպանածին պետություններ, միջազգային ահաբեկչություն։

2015թ. ապրիլի 24-ին հայ ժողովուրդը խոնարհումով կխնկարկի Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակը: Այդ օրը մեզ հետ կլինի ողջ առաջադեմ մարդկությունը, որի համար 1915 թվականը և ապրիլի 24-ը դարձել են մարդկության դեմ գործված ամենածանր հանցագործության՝ ցեղասպանության դատապարտման և կանխարգելման խորհրդանիշեր: 1915-ից տասնամյակներ առաջ Օսմանյան կայսրության և դրանից հետո հանրապետական Թուրքիայի կողմից իրագործված Եղեռնը մնում է որպես հայ ժողովրդի վերք, որը չի սպիանա, եթե հանցագործը չարժանանա համընդհանուր դատապարտման, եթե չապաշխարի ու հայերին չվերադարձնի այն, ինչը նրանցից խլել է դավադիր սպանությամբ: Ցեղասպանության շուրջ լռության տասնամյակներից հետո ծանրագույն այդ հանցագործությունը համեմատաբար նոր է դարձել քաղաքական բաց քննարկումների առարկա: Իրենց բացահայտմանն են սպասում ոճրագործության բազմաթիվ մութ էջեր, իրենց նոր մեկնաբանությանն են սպասում համամարդկային աղետի արդեն հայտնի փաստեր: Անդրադառնանք դրանցից մի քանիսին՝ համառոտ դիտարկումների ձևով: Սույն վերլուծության հիմնական եզրակացությունները բխում են այն դրույթից, որ լայնորեն շրջանառվող և հանրային ընկալումը կաղապարող **«Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915-1923թթ.»** բանաձևը չի հա-

* ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր։

մապատասխանում մարդկության դեմ գործված այդ հանցագործության փաստական ու քաղաքական բովանդակությանը:

Առաջին դիտարկում՝ «Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915-1923թթ.» բանաձևը չի արտացոլում ոճրագործության աշխարհագրությունը

Քննարկվող ձևակերպումը ոճիրն աշխարհագրորեն կապում է միայն և միայն Օսմանյան կայսրության հետ՝ հակառակ հանրահայտ ու անհերքելի այն փաստի, որ թուրքերը թե՛ սուլթանի օրոք, թե՛ նրան իշխանությունից հեռացնելուց հետո հայերի բնաջնջման քաղաքականությունն առաջ են տարել կայսրության սահմաններից դուրս՝ Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում[1], Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում: Փաստի շրջանցումը բացատրություններ ունի:

Տասնամյակներ շարունակ Արևմուտքն աշխատում էր իր ռազմավարական դաշնակից Թուրքիային ազատել XX դարի սկզբին գործած հանցանքի մեղքից՝ այն բաժին թողնելով պատմությունը լքած Օսմանյան կայսրությանը: Փաստն անտեսում էր նաև խորհրդային Մոսկվան, որը «կարմիր հեղափոխությունը» մահմեդական արևելք արտահանելու իր ծրագրերում Թուրքիայի և Խորհրդային Ադրբեջանի համար նախատեսել էր Արևելքում հեղափոխության ջահակիրների դերակատարությունը: XX դարի վաթսունական թվականներին, երբ արդեն հանված էր թեմայի արծարծման թաբուն, Մոսկվան հանդուրժեց ***«Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915-1923թթ.»*** բանաձևի շրջանառումը՝ խստագույնս հետևելով, որ անդրադարձներ չլինեն Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում հայկական կոտորածներին, որոնց հիշատակումները պիտի խանգարեին հայերի ու ադրբեջանցիների՝ «լենինյան բարեկամության» մասին քաղաքական դիցաբանության ներդրմանը: Այսպես են ոճրի հանցակազմից դուրս մնացել 1918թ. Հարավային Կովկաս խուժած թուրքական կանոնավոր բանակի և տեղի թուրքերի կողմից երկրատարածքի հայության կոտորածները: Այդպես է այդ ոճիրն անտեսող ***«Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915-1923թթ.»*** բանաձևն ամրագրվել տեղեկատվական հոսքերում ու գրականության մեջ:

[1] Այդ մասին տե՛ս *Լևոն Վարդան,* Ժամանակագրութիւն Հայկական Տասնըհինգի, Պեյրութ, 1975, էջ 24:

Այսօր, երբ եվրոպական տերությունները Հայոց ցեղասպանության ճանաչումը դարձրել են Թուրքիայի հետ իրենց հարաբերությունների կարգավորման պայման, այլևս աննրելի է լռության մատնել, որ հայերի Եղեռնը Արևմտյան Հայաստանում[1], Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում նույն ցեղասպանության տարբեր փուլերն են: Նույնն է ոճրագործը, նույնն է զոհը[2]: Ակնհայտ այդ փաստն անտեսվում է, երբ այն կարող է լինել ցեղասպանության ճանաչման հարցում Թուրքիայի ժխտողական քաղաքականության քողազերծման գլխավոր փաստարկը: Եվ ահա թե ինչու:

Մինչ օրս Եղեռնի ուրացման թուրքական փաթեթի հիմնական փաստարկը, որով Անկարան հակադարձում է ներկայացվող մեղադրանքին, այն է, թե, իբր, թուրքերը չեն ունեցել ցեղասպանության կանխամտածված ծրագիր, բայց տեղահանել են հայերին պատերազմի մեջ գտնվող Օսմանյան կայսրության նկատմամբ նրանց անհուսալիության պատճառով: Տարհանված հայերի քարավանների հետ ճանապարհին «խաժամուժի» հարձակումների հետևանքով պատահած «դժբախտ դեպքերը», ինչպես պնդում է պաշտոնական Անկարան, ցեղասպանություն որակել չի կարելի: Հայերի կոտորածները Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում այդ կեղծիքը քողազերծում են անառարկելի ձևով: 1918թ. ոչ թե թուրք ու քուրդ խաժամուժը, այլ թուրքական կանոնավոր բանակն է Բաքու տանող ամբողջ ճանապարհին հրկիզել հայկական բնակավայրերն ու կոտորել դրանց խաղաղ բնակիչներին, և հետո նույնն արել է Բաքվում: Բազմաթիվ վկայություններով ու փաստաթղթերով հաստատված այդ փաստը տեղահանությունների «հիմնավորման» թուրքական թղթապանակում տեղ չի թողնում հայերի անհուսալիության մասին կեղծ դրույթի համար[3]: Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում իրենց պապենական հողերում դարեր ի վեր ապրող հայերն Օսմանյան կայսրության քաղաքացիներ չեն եղել, որպեսզի անհուսալի որակվեն և ոչ էլ որևէ վտանգ են ներկայացրել կայսրության կամ Թուրքիայի համար: Նրանց չեն տեղահանել, այլ կոտորել են տեղում միայն այն բանի համար, որ նրանք հայ են:

[1] *Ruben Safrastyan,* Ottoman empire: the genesis of the program of genocide (1876-1920), Yerevan, 2011.

[2] *E.L. Danielyan,* Armenian Civilizational heritage versus Turkish-Azerbaijani falsification if history and historical geograsphy, «Լրաբեր» հաս. գիտ., N 1, 2014, p. 49.

[3] Փաստաթղթերի մի զգալի մասը ներկայացված է 2003-ին Երևանում լույս տեսած «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.» փաստաթղթերի ժողովածուում:

Երկրորդ դիտարկում՝ 1923 թվականին Թուրքիայում վերջ չի դրվել ցեղասպանության քաղաքականությանը, ինչպես դա ներկայացված է «Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915-1923թթ.» բանաձևում

Մեկ այլ խնդիր է Եղեռնի ժամանակային սահմանների հստակեցումը: 1915-ի ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակման խորհրդանշական օր է և այն հայասպանության թուրքական քաղաքականության սկիզբը չէ, ինչպես դա ներկայացվում է խնդրո առարկա բանաձևում: Կայսրությունում հայկական ջարդերը սկսվել են 1915-ից տասնամյակներ առաջ: 1915-ը՝ ցեղասպանական ամենադաժան արարքների տարին, ժողովուրդն առանձնացրել է որպես Մեծ եղեռնի/Մեծ ցեղասպանության տարի:

Սակայն թուրքական հանցագործության քաղաքական բովանդակությունն ավելի շատ խեղաթյուրում է ոչ այնքան 1915-ը դիտավորությամբ կամ վրիպումով ցեղասպանության սկիզբ համարելը, որքան այդ քաղաքականության ժամանակային սահմանափակումը 1923-ով՝ Օսմանյան կայսրության պատմության ավարտով[1]: Կատարված ոճիրը համաշխարհային պատմությունից դուրս մղելու, հանցագործության ուրացման մինչ օրս շարունակվող փորձերը, Եղեռնի զոհերի ինչքի սեփականումը, Հայաստանի Հանրապետությունը և Արցախը շրջափակման օղակում խեղդելու գործելակերպը, հայոց դարավոր մշակութային ժառանգության յուրացումը կամ ոչնչացումը, ցեղասպանությունից փրկվածների բռնի դավանափոխումն ու թուրքացումը՝ այս բոլորն Օսմանյան կայսրության քաղաքականության շարունակությունն են, որն իր հիմնադրման առաջին օրից հետևողականորեն տարել ու հիմա էլ առաջ է տանում հանրապետական Թուրքիան, պետություն, որը հիմնել են Եղեռնին անմիջականորեն մասնակցած այդ երկրի քաղաքական ուժերը:

[1] Մենք դրանով նոր բան չենք ասում: Թեմային նվիրված գրականության մեջ այդ հանգամանքին բազմաթիվ անդրադարձներ են եղել: Զոն Կիրակոսյանը փաստն ավելի ընդգծելու համար այն ամրագրել է իր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը») (Երևան, 1983) գրքի վերնագրում և գրքում առանձնացրել հատուկ գլուխ՝ «Օսմանյան կայսրությունը խորտակվեց: Հայասպանությունը շարունակվեց»: Զարմանալի է, որ պաշտոնական մեր փաստաթղթերում տեղ գտած ձևակերպումներն ու բանաձևումները շրջանցում են այդ իրողությունը:

Երրորդ դիտարկում՝ թուրք ժողովուրդը և թուրքական իշխանությունները հավասարապես պատասխանատու են կատարվածի համար, որովհետև հավասարապես մասնակցել են ոճրին

Մերօրյա թուրքերն ազգամիջյան հարցերում իրենց քաղաքական վարքը ժառանգել են իրենց նախնիներից՝ միջնադարում Առաջավոր Ասիա խուժած օղուզներից ու սելջուկներից, որոնք երկրատարածքի արգավանդ դաշտերին ու արոտավայրերին տիրելու և տեղում ամրանալու այլ եղանակ չգիտեին, քան դրանց տերերին դուրս մղելն ու կոտորելը, նրանց բնակավայրերի ավերումն ու թալանը, որին մասնակցում էին ամբողջ ցեղով: Արյունոտ այս կենսակերպը պահպանվեց նաև այն բանից հետո, երբ գրավյալ տարածքներում նրանք հիմնեցին միջնադարյան պետական կազմավորումներ և ապա նաև կայսրություն: Բայց նույնիսկ դրանից հետո թուրքերը պահպանեցին քոչվորական շրջանում ձևավորված կենսակերպի հիմնական բնութագրերը, որոնք ազգային զարգացումը սահմանափակում են էքստենսիվ զարգացման՝ քանակական աճի ու տարածական ծավալման կաղապարում: Նկատենք, որ մասնագիտական գրականության մեջ բնավ ուշադրության չի արժանացել այն կապը, որ կար տարածաշրջան մտած և իրենց հետագայում «օսմանցիներ» կամ «մուսուլմաններ» անվանած օղուզների, սելջուկների և այլ թյուրքական ցեղերի քոչվորական կացութաձևի ու նրանց ազգային ինքնության բացակայության փաստերի միջև: Որոշակի էթնիկական հանրության ազգային ինքնությունը ձևավորվում է պատմականորեն: Քոչվորությունը՝ որպես տնտեսվարման էքստենսիվ եղանակ, ընդունակ չէ էթնիկական հանրությանը տրամադրել «ինքնության փաստերով» հարուստ պատմություն: Մի արոտավայրից մյուսը տեղափոխվելու կամ ալպիական արոտավայրերից նորից ձմեռանոցները վերադառնալու կրկնվող «պատմությունը» քաղաքական իրադարձություններով հարուստ լինել չէր կարող, որով հագեցած է նստակյացության և տնտեսական զարգացման ինտենսիվ ուղու վրա գտնվող ցանկացած ժողովրդի պատմություն: Այստեղից էլ հասկանալի են դառնում թուրքի պատմական հիշողության աղքատությունը և նոր արոտավայրեր գրավելու տենդում անցած ուղու կարևորությունը կորցրած պատմության հեշտ մոռացումը: Մոնղոլների հետապնդմամբ տարածաշրջան թափանցած քոչվոր թյուրքական ցեղերի համար ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (երեկը, անցյալը) այն արժեքը չուներ, ինչ ուներ նստակյաց ժողովրդի համար: Նրա համար կարևորը ԱՅՍՕՐՆ է:

Փոքր Ասիա թափանցած քոչվոր թյուրքերը կարող էին ունենալ կենցաղային սովորույթներ, հեքիաթներ, հիշողություններ ու առասպելներ արոտավայրեր գրավելու համար մղած ճակատամարտերի մասին, բայց չէին կարող ունենալ, այսպես ասած, ներքին քաղաքական պատմություն, որը նրանց ինքնության անորոշության կամ պակասավոր ինքնության պատճառ դարձավ նաև հետագա դարերում: Նստակյացության անցնելուց հետո նրանց քաղաքական պատմության սկիզբ կարող է համարվել 1326 թվականին Օսմանի գլխավորությամբ Բուրսայի գրավումը և այն նոր պետության մայրաքաղաք հռչակելը: Սեփական գրի ու գրականության և ազգային պատմության բացակայության պայմաններում իսլամը լցրեց մշակութային ինքնության դատարկությունը: Արաբը և պարսիկը, որոնցից նա ընդունել էր իսլամը, հազարամյակների քաղաքական պատմության ու գրավոր մշակույթի տերեր էին: Օսմանցի թյուրքը, որ երեկվա քոչվորն էր, ասպատակելու, ավերելու և զավթելու «մշակույթից» բացի բարձր կարգի որևէ արժեք չուներ ուրիշներին կամ ինքն իրեն ներկայանալու համար և ընդհուպ մինչև 20-րդ դարը պիտի ներկայանար «ես մուսուլման եմ» կամ «օսմանցի եմ» ինքնության այցետոմսով: Գրականության մեջ լայնորեն տարածված այն կարծիքը, թե, իբր, իսլամը դուրս է մղել ազգայինը թուրքի ինքնությունից և մոռացության մատնել նրա պատմությունը, զուրկ է հիմքերից (դրանց քննությունը տե՛ս *Танер Акчам*, «Турецкое национальное «Я» и армянский вопрос», М., 1955, стр. 19-34): Նա նստակյաց ժողովուրդների պես «ներքին քաղաքական պատմություն» չուներ, որ իսլամի մամլիչի տակ մոռանար: Թուրքը հայտնվել էր մի երկրամասում, որի ժողովուրդները, առանց բացառության, ավելի բարձր քաղաքակրթական արժեքների կրողներ էին: Այդ արժեքներին հաղորդակցվելու և դրանք որդեգրելու դեպքում նա պիտի ձուլվեր տեղացիներին: Նա ընդունակ չէր կանգնելու գիտական ու բարձր մշակութային մրցակցության ուղու վրա և իրեն պիտի գտներ ժողովուրդների հպատակեցման քաղաքական հնարքներում, իշխանության ու բռնության «արվեստում» կատարելագործվելու իրեն հարազատ ոլորտներում: Թուրքը ոչ միայն անհաղորդ մնաց կայսրության ժողովուրդների քաղաքակրթական ձեռքբերումներին, այլև ամեն կերպ խոչընդոտեց նրանց զարգացմանը: Կայսրության տիրապետության հարյուրամյակները դարձան հետընթացի մռայլ ժամանակներ նրա բոլոր ժողովուրդների համար:

Ցեղասպանության ուրացման, պատմական փաստն ագրեսիվ քարոզչությամբ ժխտելու մերօրյա Թուրքիայի վարքը ցույց է տալիս, որ այն չի փոխել ցեղասպանածին իր բնույթը և որ այդ իմաստով գլոբալ քաղաքակրթական վտանգ է ներկայացնում:

Ծավալապաշտության կայսերական զինանոցում, արյունոտ զենքերից բացի, հայտնվեց նորը՝ ժողովրդագրական գրոհը[1]: Թուրքական իշխանություններն ու թուրք ամբոխը արշավանքների ժամանակներից եկած ավանդույթով միասնական մնացին կայսրության այլազգի և այլադավան բնակչությանը թալանելու, շահագործելու, կոտորելու, ուրիշների հողերում ամրանալու հարցում: Ամբոխը մնաց թուրքական ազգային վարքը բնութագրող բանալի երևույթը, որն արտացոլում է իշխանությունների և թուրքական զանգվածի միասնությունը «այլոց» նկատմամբ տարվող քաղաքականության մեջ[2]: Կողոպուտի և կոտորածի «մշակույթ» որդեգրած ժողովուրդը և իր հիմնած պետությունը պատմական հեռանկար չէին կարող ունենալ, և արդեն XIX դարում ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունը ոչ միայն դուրս է մնացել քաղաքակրթության ընդհանուր ընթացքից, այլև խոչընդոտում է այդ ընթացքին[3]: XIX-XXդդ. սահմանազծին վերացման դատապարտված այդ պետականության ճգնաժամի պայմաններում էր, որ հպատակ ժողովուրդներին անխնա շահագործելու և թալանելու ավանդույթով ձևավորված ու պետության օրենքներով արտոնված կենսակերպը վերաճեց ցեղասպանական գիտակց-

[1] Կայսրության ժողովրդագրական քաղաքականության զինանոցը չէր սպառվում գրված տարածքների բերրի արոտավայրերը զավթելու համար տեղի ժողովուրդների բնակավայրերի ավերումով և բնակչությանը սրի քաշելով, թուրքերին տրված ամենատարբեր արտոնություններով: 1365 թվականին սուլթան Մուրադ Առաջինի մտցրած, այսպես կոչված, *արյան հարկը* (*դևշիրմե*), որով քրիստոնյա ժողովուրդներն իրենց 12-14 տարեկան տղա երեխաներին «տալիս» էին սուլթանին ենիչերիների զորախմբերում ծառայելու համար, նաև ժողովրդագրական քաղաքականության նպատակներ հետապնդող ծրագիր էր: Այդ պատանիներին դաստիարակության էին հանձնում թուրքական ընտանիքներին, հավատափոխ էին անում, նրանցից պատրաստում մարզված զինվորներ՝ հենց քրիստոնյաների դեմ կռիվներում օգտագործելու համար:

[2] Իր «Турецкое национальное «Я» и армянский вопрос» (М., 1955) գրքում Թաներ Աքչամը «Քաղաքացիական բնակչության մասնակցությունը ցեղասպանությանը» վերնագրով հատուկ ենթաբաժին է հատկացրել (էջ 114-119) այդ հարցին: Բավական է թերթել թեմային նվիրված փաստագրական կամ վերլուծական գրականությունը՝ համոզվելու համար, որ *ամբոխը* թուրքական քաղաքական մշակույթի դրսևորման բանալի երևույթ է: 1918թ. Բաքվի մարտյան դեպքերի ականատեսներից մեկը, ըստ Մայքլ Սմիթի, մարդկանց կատաղի այդ զանգվածն անվանել է սև ամբոխ՝ qara deste. Տե՛ս *Майкл Смит,* Память об утратах и азербайджанское общество // Азербайджан и Россия: общества и государства, М., 2001, стр. 95.

[3] The Economic Decline of Empires, edited by Carlo M. Cipolla, New York, 2010, p. 227.

ված վարքի: Այդ գիտակցության ու վարքի կրողները պետական պաշտոնյաների փոքրիկ խումբ կամ հասարակության նեղ շերտ չէին: Հայերի, հույների, ասորիների ցեղասպանության իրական հանցագործը թուրքական հասարակության մեջ մեծամասնություն կազմող այն խավն էր, որի ձեռքերում են եղել պետական իշխանության լծակները թե՛ Օսմանյան կայսրությունում, թե՛ հանրապետական Թուրքիայում, և որն այսօր ինքն իրեն շարունակում է վերարտադրել հասարակության բոլոր շերտերում՝ պետական վերնախավից ու ստորադաս վարչական օղակներից սկսած մինչև «շարքային թուրքը»[1]: Այսօր էլ այդ զանգվածը, այլ ոչ թե դրան ընդդիմադիր սակավաթիվ խավն է որոշում եղեռնագործության ուրացման հարցում թուրքերի պետական քաղաքականությունը: Այդ հանգամանքն է միավորում մի կողմից՝ թուրք ժողովրդի, մյուս կողմից՝ Օսմանյան կայսրության և հանրապետական Թուրքիայի պատասխանատվությունը մարդկության դեմ կատարած հանցագործության համար: Նույն այդ հանգամանքն է միավորում «ցեղասպան Թուրքիա» և «ցեղասպան թուրք» հասկացությունները, որոնք տարածաշրջանի և նրա սահմաններից դուրս ապրող ժողովուրդներն ընկալել են որպես հոմանիշներ ու ամրագրել բերնեբերան անցնող «Այստեղով անցել է թուրքը»[2], «Թուրքը մնում է թուրք» և այդ կարգի լայնորեն հայտնի այլ արտահայտություններում: Թուրքական դեպքի համար «Ցեղասպանությունը պետական քաղաքականություն է» ձևակերպումն ակնհայտորեն թերի է՝ այդ ոճրին թուրքերի զանգվածային մասնակցության պատճառով: Այս ճշմարտությունը հաճախ չի բարձրաձայնվում բարեպաշտության ու նրբանկատության անհարկի նկատառումներով, այն դեպքում, երբ միայն դրա գիտակցումը կօգնի թուրք ժողովրդին ճանաչել ինքն իրեն և թոթափել մեղքի բեռը: Քանի դեռ հանցանքն ուրացողների զանգվածը թուրք հասարակության մեջ մեծամասնություն կկազմի և կպայմանավորի պետական քաղաքականությունը, ազգասպանությունը կմնա թուրքի ինքնության և նրա պետականության բնութագիրը: Ահա թե ինչու

[1] Հատկանշական է, որ Թալեաթն իր հուշերում նաև իր մեղքը թեթևացնելու համար խոստովանում է, որ ջարդեր իրագործողները ժողովուրդը և մի շարք պաշտոնյաներ են եղել (տե՛ս Թալեաթ փաշայի հուշերը (թարգմանություն թուրքերենից), ՀԽՍՀ Արևելագիտության ինստիտուտ, 1963, էջ 78-79, 129-130):

[2] Եվրոպայում և մեր տարածաշրջանում լայնորեն հայտնի «The Turks have passed by here All is in ruins and mourning» արտահայտությունը, ինչպես հայտնի է, պատկանում է Վիկտոր Հյուգոյին (http://www.lewrockwell.com/2013/09/eric-margolis/ruins-and-mourning):

Հայոց ցեղասպանության ճանաչման մասին Թուրքիային հասցեագրված ուղերձները նաև թուրք ժողովրդին ուղղված ուղերձներ են:

Չորրորդ դիտարկում՝ Թուրքիան հիմնել ու շարունակում է հիմնել ցեղասպան պետություններ, միջազգայնորեն լեգալացնելով ցեղասպանական պրակտիկան

Թուրքական քաղաքակրթության ցեղասպանածին բնույթը XX դարում դրսևորվել է ոչ միայն Օսմանյան կայսրությունում և նրա սահմաններից դուրս հայերի, հույների և ասորիների բնաջնջման, այլև ազգասպանության նույն մշակույթից սերված պետություններ հիմնելու ձևով: Այն արդեն հիմնել է քաղաքակրթական իր գենը կրող պետություններ՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը՝ հույների, իսկ Ադրբեջանական Հանրապետությունը՝ Նախիջևանի և Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանության ճանապարհով: Ակնհայտ է ազգասպանության թուրքական քաղաքական մշակույթի ազդեցությունը Հարավսլավիայի տրոհման և մեր օրերում Մերձավոր Արևելքում ծավալվող գործընթացներում:

Թուրքական նախագծով հիմնված առաջին պետությունն այսպես կոչված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունն էր, որը 1918-ի սեպտեմբերին հիմնեցին հայերի կոտորածներով Բաքու հասած թուրքական զորքերը[1]: Երկրատարածքում XX դարում «Ադրբեջան» անունը կրող պետությունների կերպափոխությունները նրանցում անփոփոխ են թողել էթնիկ թուրք այն զանգվածի ցեղասպանածին վարքը, որը նա պատմականորեն ուներ այդ մշակույթի կրողը լինելու հանգամանքով և որի ձեռքերում հայտնվել էր իշխանությունն Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունում, Խորհրդային Ադրբեջանում և մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունում: Խորհրդային տարիներին նոր ադրբեջանական ազգ ձևավո-

[1] Կոտորածները երկրատարածքի ժողովրդագրական դեմքը փոխելու նպատակն էին հետապնդում: Հրկիզվեցին տասնյակ հայկական և ուդիական բնակավայրեր: Եթե 1914թ., օրինակ, Նուխու, Գյոքչայի, Շամախու և Արեշի գավառներում 73.526 մարդ կար, ապա 1921 թվականին այդ թիվը նվազել էր գրեթե վեց անգամ (12.716 մարդ): Եթե Նուխու գավառում հայերը 1917 թվականին կազմում էին բնակչության 20,2%-ը, ապա թուրքական ռազմարշավից ու մուսավաթական տիրապետությունից հետո՝ 2,4%-ը: Պատկերը գրեթե նույնն էր մյուս գավառներում: Աղդաշի գավառում, օրինակ, ուր հայերն ազգաբնակչության 19,5%-ն էին կազմում, գրեթե հայ չմնաց (0,7%): Ի դեպ, նույն ճակատագրին արժանացան ռուսական բնակավայրերը հատկապես Սալյանի ու Լենքորանի գավառներում: 1914թ. տվյալներով՝ այդ շրջաններն ունեին 40.800 ռուս ազգաբնակչություն, որից 1921 թվականին մնացել էր ընդամենը 14.921 ռուս (տվյալները՝ ըստ՝ БЭС, т. 1, 1926, стр. 642):

րելու ստալինյան նախագծի պատանդ դարձած բոլշևիկյան կենտրոնը չտեսնելու է տվել ազգային հալածանքներով հանրապետությունից հայերի դուրսմղման Բաքվի քաղաքականությունը, որն արդեն յոթանասունականներին հանգեցրել է Նախիջևանի հայաթափմանը, իսկ 1988-ին՝ Սումգայիթից սկսած, ստացել է ողջ հանրապետությունում հայերի զանգվածային ջարդերի բնույթ: Ինչպես Օսմանյան կայսրությունում և Թուրքիայում, այնպես էլ Խորհրդային Ադրբեջանում միայն հայությունը չէր ցեղասպանության քաղաքականության թիրախը: Միաժամանակ, տարվում էր բնիկ իսլամադավան ժողովուրդների բռնի ուծացման քաղաքականություն: Դրան դիմագրավելու միակ ձևը յուրօրինակ ազգային ընդհատակ անցնելն էր, որտեղ այսօր գտնվում է լեզգիների, թալիշների, թաթերի և բնիկ մյուս ժողովուրդների մեծ մասը: ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին երբեմնի բազմազգ Խորհրդային Ադրբեջանի էթնիկական քարտեզից անհետացել էին երկրամասի՝ բռնությամբ «ադրբեջանցի» դարձած իսլամադավան բոլոր ժողովուրդները: Այն, ինչ տեղի է ունեցել թուրքական բանակի ստեղծած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունում, այն, ինչ տեղի է ունեցել ռուսական 11-րդ կարմիր բանակի հիմնադրած Խորհրդային Ադրբեջանում և ինչ տեղի է ունենում մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունում, ոչնչով չի տարբերվում Թուրքիայում տեղի ունեցած և տեղի ունեցող գործընթացներից: Հետխորհրդային Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի «Մեկ ազգ, երկու պետություն» բանաձևը եկավ հաստատելու, որ ցեղասպանը ազգությամբ նույն թուրքն է թե՛ Անկարայում, թե՛ Բաքվում: Բանաձևն ամրագրում է այն ընդհանրությունը, որ միավորում է թուրքերին[1]: Եվ դա այն է, որ թուրքը թե՛ Առաջավոր Ասիայում իր գրաված տարածքներում, թե՛ Հարավային Կովկասում, որտեղ քողարկվել է մեկ «մուսուլման», մեկ «կովկասյան թաթար», մեկ «ադրբեջանցի» դիմակների տակ, հետևողականորեն տարել ու տանում է տարածաշրջանի այլ ազգերի սպանության քաղաքականություն: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջափակումը Թուրքիան և Ադրբեջանական Հանրապետու-

[1] Թուրքերին, բայց ոչ՝ թյուրքերին: Այս ճշգրտումը խիստ կարևոր է, քանի որ Անկարայի ու Բաքվի տեսաբանները հաճախ են փորձում իրենց իրագործած եղեռնագործության մեղսակից դարձնել թյուրքական մյուս ժողովուրդներին՝ պնդելով, թե ցեղասպանության հարցում թուրքերին ներկայացվող մեղադրանքն ընդհանրապես թյուրքական էթնոսին հասցված վիրավորանք ու մեղադրանք է:

թյունն իրագործում են համատեղ: Պատահական չէ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմում հայկական բնակավայրերն էին հրետակոծությունների ու ռմբակոծությունների հիմնական թիրախը: Պատահական չէ, որ Բաքվում հայասպան ադրբեջանցիներին՝ սումգայիթյան ցեղասպանության հանցագործներին ու Բուդապեշտում հայ գործընկերոջը կացնահարած Ռամիլ Սաֆարովին հերոսացնում են այնպես, ինչպես Թուրքիայում հերոսացնում են Եղեռնի գլխավոր հանցագործներ Թալեաթին ու Էնվերին: Նույն ժողովուրդն է, նույն քաղաքական վարքը: Արևելյան Անդրկովկասում և Նախիջևանում հայերի ցեղասպանությունը Հայոց ցեղասպանության թուրքական նույն քաղաքականության դրսևորումն է՝ իրագործված «Ադրբեջան» ցուցանակը կրող պետությունների կողմից, որոնցից վերջինը մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունն է:

Հինգերորդ դիտարկում՝ ինչո՞ւ չեն պատժել ցեղասպան հանցագործին խոշոր տերությունները

Դեռևս 1915թ. մայիսին Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որով հայ ժողովրդի դեմ Օսմանյան կայսրությունում կատարվող գազանությունները որակել են որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություններ» և համաձայնվել, որ թուրքական կառավարությունն այդ հանցագործության համար պետք է պատժվի[1]: Թվում էր, թե խոշոր տերություններն Առաջին աշխարհամարտից հետո պիտի ի կատար ածեին այդ պատիժը՝ կանխելու համար հանցագործության կրկնությունը: Թվում էր, թե մարդկության ու քաղաքակրթության դեմ կատարված այդ հանցագործության վտանգը գիտակցված է: Պարզվեց, սակայն, որ այդպես չէ: Քաղաքակրթության համար մահացու ազգասպանության թուրքական բացիլի տարածման սպառնալիքն անտեսվեց: Արևմուտքը համամարդկային շահը ստորադասեց Թուրքիային Խորհրդային Ռուսաստանի դեմ օգտագործելու կասկածելի ծրագրին և 1923թ. Լոզանում զզրոցը նետեց իր իսկ ընդունած Սևրի պայմանագիրը, որով նախատեսվում էր հայկական հողերի մի մասում հայերի պետականության վերականգնումը[2]: Հատուկ ընդգծել է պետք, որ հայերին աջակցելն իրենց պատմական հայրե-

[1] The Messenger online http://www.messenger.com.ge/issues/2161_august_2_2010/2161_econ_two.html
[2] *W.A. Shabas,* Genocide in International Law, Cambridge, 2000, p. 16.

նիքում պետականության վերականգնման հարցում, ինչ նախատեսվում էր Սևրի պայմանագրով, չէր նշանակի պատիժ ոճրագործի համար: Դա պետք է ընդամենը նշանակեր, որ խոշոր տերությունները պաշտպանում են սեփական հայրենիքում իր պետականության վերականգնման հայերի օրինական իրավունքը: Սակայն 1923թ. Լոզանում նրանք չարեցին նույնիսկ այդ նվազագույնը: Հայկական հողերը թողնվեցին ցեղասպան Թուրքիային: Հանցագործությունը ոչ միայն չպատժվեց, այլև խրախուսվեց: Ավելին: Արևմուտքը թուրքին ներելու (իրականում՝ խրախուսելու) քաղաքական ուղեգծում տասնամյակներ շարունակ դարձավ Հայոց ցեղասպանությունը լռության փականի տակ պահելու, կատարվածը պատմությունից դուրս մղելու թուրքական ծրագրի մասնակիցը: Միայն Ադոլֆ Հիտլերը 1939-ին խախտեց լռությունը «իսկ ո՞վ է հիշում այդ մասին» հարցով, բայց ոչ թե թուրքերին դատապարտելու, այլ թուրքերին ընդօրինակելու համար: Բոլշևիկյան Ռուսաստանը հետ չէր մնում Արևմուտքից: Մեծ եղեռնից ընդամենը մի քանի տարի հետո, փորձելով իր կողմը քաշել «իմպերիալիզմի դեմ պայքարող» Թուրքիային, Մոսկվան նրան նվիրաբերեց Կարսը, Արդահանը, Սուրմալուն, սուրբ Արարատ լեռը, որ երբևիցե Օսմանյան կայսրությանը չէր պատկանել: Դրան հետևեցին նոր նվիրատվություններ: Թուրքիայի պահանջով Մոսկվան հայկական Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը բռնությամբ օտարեց Խորհրդային Հայաստանից և մտցրեց Խորհրդային Ադրբեջանի սահմանների մեջ[1]:

Թվում էր՝ նացիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիան արժանի պատիժ կկրեր Երկրորդ աշխարհամարտից հետո: Բայց համամարդկային շահերն ու արժեքները նորից զոհաբերվեցին՝ այս անգամ «Խորհրդային Միություն-Արևմուտք» քաղաքական խաղերում: Նացիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիան պատերազմից դուրս եկավ առանց կորուստների: Հայկական տարածքներն այս անգամ ևս թողնվեցին նրան:

ԽՍՀՄ տրոհումն Արևմուտքին նոր առիթ տրամադրեց հստակ դիրքորոշում դրսևորելու ցեղասպանությունն ազգային հարաբերությունների պրակտիկայից դուրս մղելու, ցեղասպանական ակտերը դատապարտելու, ցեղա-

[1] Մենք պատահաբար չէ, որ դիմում ենք «մտցվեցին Խորհրդային Ադրբեջանի սահմանները»: Կարսի պայմանագրով Նախիջևանը չի տրվել Խորհրդային Ադրբեջանին որպես տարածք, որտեղ այն սուվերեն իշխանություն պիտի ունենա: Այն տրվել է Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը: Եվ միայն:

սպան կառավարություններին ու պետություններին պատժելու հարցում: Թվում էր, հայաթափված Նախիջևանը, «Ադրբեջանի ժողովրդական ճակատում» միավորված թուրք ջարդարարների կողմից մեկը մյուսի հետևից իրագործված «սումգայիթները»[1] Արևմուտքի համար կասկածի տեղ չպիտի թողնեին կատարվածը ցեղասպանություն որակելու համար: Սակայն արևմտյան մայրաքաղաքները խուսափեցին սկզբունքային գնահատականներից և բավարարվեցին հերթապահ հայտարարություններով: Ավելին, ցեղասպանի դեմ ազատագրական պայքարի ելած Արցախ-Ղարաբաղին 1988-ից ի վեր բարոյապես քաջալերող Արևմուտքը, որը Մոսկվայից պահանջում էր գտնել խնդրի այնպիսի լուծում, որը կհամապատասխանի արցախահայության հայացքներին, 1991-ին, երբ ԽՍՀՄ տրոհումն ընդունել էր անշրջելի բնույթ, երես թեքեց Ղարաբաղից: Պարզվեց, որ այն միայն ԽՍՀՄ-ը կազմաքանդելու նպատակով է քաջալերել Ղարաբաղյան շարժումը՝ նրանում տեսնելով խորհրդային գերտերության փլուզման պայթուցիկը: Պարզվեց, որ ԽՍՀՄ-ը միութենական հանրապետությունների կազմաքանդելու ծրագիրն օրակարգում է եղել 1988-ից ի վեր: Ադրբեջանական Հանրապետությունը, որտեղ ոչ թուրք իսլամադավան ժողովուրդները ցեղասպանվել էին բռնի ուծացմամբ, իսկ հայերը՝ արյունալի ջարդերով, ճանաչվեց նախկին Խորհրդային Ադրբեջանի սահմաններում՝ իրեն չպատկանող Նախիջևանով և ազատագրական պայքարի ելած Արցախով: Քաղաքական այդ որոշմամբ Արևմուտքը ոչ միայն դավաճանեց ժողովրդավարության՝ իր կողմից հռչակված իդեալներին, այլև խրախուսեց ցեղասպանին և սադրեց ղարաբաղյան պատերազմը՝ արտոնելով Բաքվին «արդարացի» պատերազմ սկսել գործող պայմանագրերով իրեն չպատկանող հողերի «ազատագրության» համար՝ տարածքային ամբողջականության սկզբունքը դարձնելով ցեղասպանության քողարկման միջոց: Բաքուն ներվեց՝ ունենալով միջազգային իրավունքի և համամարդկային բարոյական նորմերի ավելի բացահայտ խախտումների բեռ:

[1] Հատկանշական է, որ ջարդարար ամբոխներին միավորող կազմակերպությունը կրում էր հենց *Ժողովրդական ճակատ* անվանումը՝ իր անվամբ իսկ հաստատելով Ադրբեջանի թուրքական զանգվածի ու իշխանությունների միասնությունը կոտորածների հարցում: Նույնը ժամանակին տեղի է ունեցել Թուրքիայում, որտեղ այսպես կոչված հակաիմպերիալիստական ազատագրական պայքարն ընդունել է հայերի ու մյուս բնիկ ժողովուրդների կոտորածներ բնույթ, իսկ նույն «գործին լծված» հանցագործների ու ավազակների խմբերն իրենց անվանում էին «աշխարհազոր» (куваи миллийе): Տե՛ս *Танер Акчам,* Турецкое национальное «Я» и армянский вопрос», М., 1995, стр. 132-144. (Գիրքը 1992-ին Թուրքիայում լույս տեսած համանուն գրքի ռուսերեն թարգմանությունն է):

Արևմուտքն ընդհանրապես անտեսեց ադրբեջանահայության ցեղասպանությունը: Եվ այդ ամենը՝ այն նավթի համար, որը կարող էր ավելի հեշտ ստանալ այն Ադրբեջանից, որը պատժված կլիներ հայերի ցեղասպանության համար, որտեղ ազգային ընդհատակից ազատված կլինեին Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդները և որը դրված կլիներ ժողովրդավարական զարգացման ուղեգծում:

Վեցերորդ դիտարկում՝ Եղեռնը հասկացություն է, որն ունի ժողովրդին իր հայրենիքում ցեղասպանելու իմաստ

Հատուկ քննության կարիք ունի թուրքական ոճրագործության որակումը: Անկասկած, այն համապատասխանում է «ցեղասպանություն» հասկացության միջազգայնորեն ընդունված սահմանմանը: Բովանդակային առումով հասկացությունն ընդգրկում է այն ընդհանրությունները, որոնք բնորոշ են ցեղասպանական տարբեր ակտերին, և չի արտացոլում նման ակտերի առանձնահատկությունները: Միայն հրեաներին է հաջողվել հասնել այն բանին, որ նացիստական Գերմանիայի կողմից իրենց հանդեպ իրագործված ցեղասպանության առանձնահատկությունն արձանագրող «ողջակիզում» հասկացությունը ստանա միջազգայն տարածում: Ողջակիզումը՝ որպես ցեղասպանության տեսակ, ընդգծում է նույն ազգին կամ համայնքին պատկանող մարդկանց բնաջնջման եղանակը՝ գազախցերում վառելը: Հայոց ցեղասպանությունը ևս ունի առանձնահատկություն, և դա այն է, որ ողջ մի ժողովուրդ սրի է քաշվել իր հայրենիքում: Թուրքերի իրագործած ոճրագործության հետևանքով հայը զրկվել է իր հայրենիքից: Հայոց ցեղասպանության այդ առանձնահատկությունն արտացոլված է ***Եղեռն*** հասկացության մեջ, և ժամանակն է, որպեսզի «ժողովրդի ցեղասպանությունն իր հայրենիքում» բովանդակությունն ունեցող այդ հասկացությունը շրջանառվի և ամրագրվի միջազգային փաստաթղթերում:

Յոթերորդ դիտարկում՝ պատմության բումերանգը

Ցեղասպանական ակտեր եղել են նաև մինչև XX դարը: Բայց Հայոց ցեղասպանությունն առանձնանում է նրանով, որ ոճիրը կատարվել էր միջազգային քաղաքական այնպիսի համակարգում, որն ուներ վայրագությունը կանխելու կամ ոճրագործին պատժելու ներուժ: Ի դեմս Առաջին աշխարհա-

մարտում հաղթանակած խոշոր տերությունների՝ այդ ներուժն արդեն կար: Չկային ցեղասպանության վարակի տարածման վտանգի գիտակցումը և դրա դեմ համատեղ պայքարի քաղաքական կամքը: Միջազգային անվտանգության համար պատասխանատու խոշոր տերությունները չգիտակցեցին, թե ինչ ճակատագրական սխալ թույլ տվեցին՝ 1915-ից հետո չսպանելով ցեղասպանության բացիլը: Դա սովորական սխալ չէր: Դա հանցավոր անտարբերություն էր պատմության կողմից նրանց տրված պատասխանատվության հանդեպ: Նրանք ոչ միայն ներեցին, այլև խրախուսեցին ցեղասպանին՝ լռության մատնելով ոճիրը և ձախողելով իրենց պատմական հայրենիքում հայոց պետականության վերականգնման պատրաստի նախագծը: Դա չէր կարող չանդրադառնալ միջազգային ողջ համակարգի ու պատմության հետագա ընթացքի վրա, չէր կարող անհետևանք մնալ ոչ հանցագործի, ոչ նրան «պարտակողների» համար:

Թուրքը ձեռք բերեց անպատժելիության ու ամենաթողության բարդույթ և վստահություն, որ ցեղասպանությունը, բռնությունը, ամենաթողությունը ազգամիջյան ու միջազգային հարաբերություններում կարելի է դարձնել քաղաքական պրակտիկայի սովորական, ըստ էության՝ լեգալացված գործիք: Մարդկության դեմ կատարված և չպատժված ծանրագույն հանցագործության թուրքական նախադեպը Երկրորդ աշխարհամարտից հետո խթանեց ոճրի ընդօրինակումը բոլոր այն ուժերի կողմից, որոնք ունեին իրենց հարցերը նման ձևով լուծելու հակումներ: Ցեղասպանությունների, ահաբեկչությունների, բռնությունների համավարակն այսօր տարածվում է աշխարհով մեկ, և մտքով կույր պիտի լինել՝ չտեսնելու համար, որ նորագույն պատմության մեջ դրանց ակունքը թուրքերի կողմից մարդկության դեմ կատարված ու անպատիժ մնացած հանցագործությունն է: Մտքով կույր պիտի լինել՝ չտեսնելու համար, որ անպատժելիության, այլատյացության, անհանդուրժողականության և ամենաթողության իր չափումներում ահաբեկչությունը նույնանում է ցեղասպանության հետ, դառնում նրա կերպափոխված տարատեսակը: Կիպրոս, Ադրբեջան, Հարավսլավիա, Ռուանդա, Կամբոջա… Նյու Յորք - սեպտեմբերի 11, Առևտրի կենտրոն, Փարիզ - 7 հունվարի, Շարլի Էբդո... Սրանք կործանարար այն բումերանգներն են, որ խոշոր տերությունները նետել են պատմությանն անցյալ դարասկզբին, և որոնք այսօր վերադառնում ու հարվածում են իրենց ու ողջ մարդկությանը:

Խնդիրն ունի նաև այլ կողմ: Ակնհայտ է, որ չպատժված ցեղասպանը ձեռք է բերում ավելի խոր ձևախեղված հոգեկերտվածք ու ավելի ագրեսիվ վարք: Բայց միայն ցեղասպանը չի փոխվում: Այլ գիտակցություն ու վարք է ձեռք բերում նաև ոճիրը «պարտակողը», առավել ևս՝ խրախուսողը: Արդեն որերորդ տարին է՝ ԱՄՆ բարձրագույն քաղաքական իշխանությունը խուսափում է թուրքական ոճիրն իր անունով կոչելուց՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը դարձնելով քաղաքական անվայել գործարքի առարկա այն հիմնավորումով, թե Թուրքիան իր ռազմավարական դաշնակիցն է: Դա չի կարող չձևախեղել այն ազգի հոգեկերտվածքը, որը հավանություն է տալիս կամ ըմբռնումով է ընկալում իր իշխանությունների վարքը թուրքական ոճրի դատապարտման կամ Ղարաբաղին նախ բարոյապես սատարելու և այնուհետև նրան ցեղասպան Ադրբեջանին հանձնելու հարցերում և դառնում անվայել այդ գործարքների կամա թե ակամա մասնակիցը: Ղարաբաղի մասով դա վերաբերում է նաև Եվրոպային, որը ԱՄՆ օրինակով Ադրբեջանական Հանրապետությունը ճանաչեց իրավունքով ու փաստացի նրան չպատկանող Լեռնային Ղարաբաղով ու Նախիջևանով: Ցեղասպանությունը պատերազմով շարունակելու արտոնությունը Բաքվին տվել է Արևմուտքը, որն այսօր անհասկանալի պարիտետային ուղերձներ է հղում կողմերին՝ հարցի արդար լուծում գտնելու ապարդյուն հորդորներով, չտեսնելու տալով, որ իրական ագրեսորն իր կողմից խրախուսվող հանցագործն է:

Ի՞նչն է խանգարում խոշոր տերություններին և առաջին հերթին Արևմուտքին իրերը տեսնել ճշմարտության լույսով: Ինչպես անցյալ դարասկզբին, այսօր էլ նրանք չունեն այն բանի սթափ գիտակցումը, որ ցեղասպանությունը մարդկության ինքնասպանության ճանապարհն է:

Չկա այն բանի գիտակցումը, որ ընթացիկ ու անցողիկ շահ սատանալու համար ցեղասպանին պատժելու հարցը չի կարելի դարձնել քաղաքական գործարքների առարկա և պատժելու փոխարեն խրախուսել նրան:

Ապրիլ, 2015թ.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՑ ՄԵԿ ԴԱՐ ԱՆՑ

Ալեքսանդր Մանասյան

Ամփոփագիր

Եղեռնը՝ հայ ժողովրդի ցեղասպանությունն իր հայրենիքում, տասնամյակներ տևած լռությունից հետո համեմատաբար վերջերս է դարձել բաց քաղաքական քննարկման առարկա: Վերիմաստավորման կարիք ունեն բազմաթիվ փաստեր, ոճրին առնչվող հասկացություններ և ձևակերպումներ, այդ թվում և լայնորեն տարածված և հանրային ընկալումը կաղապարող «Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915-1923թթ.» բանաձևը, որը չի համապատասխանում մարդկության դեմ գործված այդ հանցագործության փաստական ու քաղաքական բովանդակությանը: Առայսօր հանցակազմից դուրս է մնում Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանությունը: Համարժեք գնահատական չեն ստացել ինչպես Եղեռնի միջազգային-քաղաքական հետևանքները, այնպես էլ այս հարցում համաշխարհային տերությունների անպատասխանատվությունը՝ որպես միջազգային անվտանգության գլխավոր երաշխավորների, ինչը հանգեցնում է նոր ցեղասպանածին պետությունների ստեղծմանը և այդ հանցավոր վարքագծի լեգալացմանը:

ГЕНОЦИД АРМЯН: ИМПЕРАТИВ ПОЛИТИЧЕСКОГО ПЕРЕОСМЫСЛЕНИЯ ВЕК СПУСТЯ

Александр Манасян

Резюме

Егерн – Геноцид армянского народа на своей родине – после длящегося десятилетиями периода замалчивания сравнительно недавно стал предметом открытого политического обсуждения. В переосмыслении нуждаются многие факты, относящиеся к злодеянию, понятия и формулировки, в том числе широко распространенная и задающая рамки общественного восприятия проблемы формула «Геноцид армян в Османской империи в 1915-1923гг.», которая не соответствует фактическому и политическому содержанию преступления. По сей день вне состава преступления остается геноцид армянства Восточного Закавказья. Адекватно не оценены как международно-политические последствия Егерна, так и безответственность в этом вопросе мировых держав как главных гарантов международной безопасности, которая ведет к учреждению новых геноцидогенных государств и легализации этого преступного поведения.

THE ARMENIAN GENOCIDE: AN IMPERATIVE FOR POLITICAL RECONCEPTUALIZATION A CENTURY AFTER THE MEDZ YEGHERN

Aleksandr Manasyan

Resume

Yeghern - the Genocide of Armenians in their homeland - only recently became a subject for open political discussion, after decades of silence. Numerous facts, concepts and statements concerning *Yeghern* (The Armenian Genocide) await new interpretation. On the eve of the 100th anniversary of the Armenian Genocide we draw the attention of the world community to some of these facts. The principal conclusion of this analysis stems from the concept according to which the widely held and publicized formula of "The Armenian Genocide in the Ottoman Empire in 1915-1923" does not fully reflect the factual and political content of this crime against humanity. In particular, the massacres of the Armenians in Transcaucasia in 1918 and 1920 escaped the *corpus delicti* of the crime of genocide. The international political consequences of *Yeghern* as a crime against humanity have not been fully assessed. In the same manner the consequences of the superpowers' irresponsibility toward the phenomenon of *Yeghern* has not been comprehended yet in all respects. This is the main reason why new genocidal states have been established and this kind of criminal behavior paves its way to be legalized.

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ «ԼԵՌՆԵՅԱՆ ՀԻԴՐԱՆ»

Յանոս Խարալամբիդիս*

Բանալի բառեր ՝ ԻՍԻՊ, ԱՄՆ, ահաբեկչական սպառնալիք, Իրան, կիբեռպատերազմ, Թուրքիա, ազգային շահեր:

Ներածություն

Ո՞վ ասաց, թե Սառը պատերազմի ավարտը կայունություն և խաղաղություն կբերի համաշխարհային համակարգին: Ֆրենսիս Ֆուկույամայի արտահայտած այդ գաղափարը լոկ պատրանք էր [1]: Խորհրդային Միության անկման ճանապարհը հարթած Բեռլինի պատի փլուզումից 25 տարի անց տարածաշրջանային և համաշխարհային համակարգերը շարունակում են ցնցվել ավանդական և այլ տեսակի պատերազմներից, ինչպիսիք են, օրինակ՝ կիբեռպատերազմները: Իրաքի և Սիրիայի իսլամական պետության (ԻՍԻՊ) հարուցած ահռելի սպառնալիքը միջազգային հանրությանը ստիպեց տագնապել և կրկին պայքարել ահաբեկչության դեմ, որը կարծես «Լեռնեյան հիդրային» է հիշեցնում: Երբ հունական առասպելական հերոս Հերակլեսը, փորձելով սպանել նրան, կտրում էր նրա գլուխներից մեկն իր սրով, փոխարենը երկուսն էին աճում:

Օսամա բին Լադենի «գլխատումը» չազդարարեց «Ալ Քաիդայի» և ահաբեկչական գործողությունների ավարտը [2]: Հակառակը՝ ԻՍԻՊ-ը «Ալ Քաիդայից» վերցրեց ահաբեկչության գավազանը և վերածվեց պատերազմի ծայրահեղ դաժանաբարո մեքենայի՝ ահ ու սարսափ սփռելով իր շուրջը: Սույն հոդվածում փորձ է կատարվում ուսումնասիրել ԻՍԻՊ երևույթը Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող ազգային շահերի ու իշխանական խաղերի և հատկապես Թուրքիայի դերակատարման առնչությամբ, որը տարածաշրջանային տերություն դառնալու ծրագրեր ունի: Նաև վերլուծվում է, թե ազգային շահերն ինչ հարաբերությունների և կոալիցիաների կարող են բերել նույնիսկ իրար հանդեպ թշնամաբար տրամադրված պետությունների միջև՝ հաշվի առնելով ընդհանուր սպառնալիքի դեմ պայքարելու խնդիրը:

* Միջազգային հարաբերությունների և եվրոպագիտության դոկտոր, Լեդրա քոլեջի նախագահ:

Այս տրամաբանության մեջ կան նաև կարևորագույն նշանակություն ունեցող այլ հարցեր, որոնց վրա հարկավոր է սևեռել մեր ուշադրությունը: Դրանցից են՝ ԻՍԻՊ ֆինանսավորման եղանակները և միջազգային հարաբերություններում տեխնոլոգիաների նշանակությունը: Որպես հզորության գործոն, տեխնոլոգիան պետք է դիտարկել կիբեռպատերազմի պրիզմայի միջով [3, 4, pp. 36-41]՝ ըմբռնելով, թե ինչպես է այն գոյակցում ավանդական պատերազմի հետ [5, pp. 138-139]: Հետևապես, ԻՍԻՊ ֆենոմենը վերլուծելիս կարևոր է մի շարք հարցերի պատասխաններ գտնել: Ի՞նչ քաղաքական հետևանքներ ունեն ԻՍԻՊ ահաբեկչական գործողությունները: Արդյոք դեռևս ճշմարի՞տ է Հանս Մորգենթաուի այն հայեցակարգը, որ ազգային շահերն են որոշում միջազգային հարաբերությունները [5, pp. 4-15]: Կարո՞ղ են արդյոք թշնամի երկրները կոալիցիաներ ստեղծել, և եթե այո, ապա ի՞նչ պարագաներում:

ԻՍԻՊ ֆենոմենը և ազգային շահերը

Քաղաքացիական պատերազմն ու դրա հետևանքներն Իրաքում շատ ավելի բարդ բնույթ են կրում, քան Եգիպտոսի և Սիրիայի ապրած ճգնաժամերը: ԻՍԻՊ-ը սուննի մահմեդական ահաբեկչական կազմակերպություն է, որը սառնասրտորեն ոչնչացնում է մուսուլմանական և քրիստոնյա բնակչությանը տարածաշրջանային խալիֆայություն հաստատելու պատրվակով, որում ծրագրել է ընդգրկել նաև Հորդանանի, Իսրայելի, Պաղեստինի, Լիբանանի, Կիպրոսի տարածքները, ինչպես նաև Թուրքիայի հարավային շրջանները՝ Հաթայ նահանգով հանդերձ [6]: 2014թ. հուլիսին ԻՍԻՊ-ը վայրագորեն արշավեց դեպի Բաղդադ, որտեղ գտնվում է ժողովրդավարորեն ընտրված Իրաքի կառավարության նստավայրը [7, 8]: Այս զարգացումներն անկանխատեսելի քաղաքական խաղերի տեղիք տվեցին ԱՄՆ-ի, Իրանի, Ռուսաստանի և Իրաքի միջև: Ամերիկացիները սկսեցին սիրաշահել Իրանի շիա մահմեդական պետությանը՝ նպատակ հետապնդելով կասեցնել սուննի ԻՍԻՊ-ի կողմից իշխանության բռնազավթումն Իրաքում: Իրանը և Ռուսաստանը ռազմական օգնություն տրամադրեցին Իրաքին, ինչպես և ԱՄՆ-ը, որը ռազմական գործի մասնագետներ ուղարկեց՝ Բաղդադին գործնական և բարոյական աջակցություն ցուցաբերելու նպատակով [9, 10]: Այսուհանդերձ, 2014թ. օգոստոսի 24-ին ԱՄՆ ռազմաօդային ուժերը Սիրիայի տարածքում հարվածներ հասցրեցին ԻՍԻՊ-ին պատկանող նշանակետերի [11]: Սեպտեմբերի 21-ին ԱՄՆ-ը և արաբական հինգ

պետություններ շարունակեցին ԻՍԻՊ-ի դեմ ռմբակոծությունների շարքը Սիրիայում և Իրաքում [12]: Ռազմական գործողությունների կիզակետում հարվածներ էին հասցվում նավթավերամշակման գործարաններին և նավթագազային այլ օբյեկտներին, որոնց շնորհիվ ԻՍԻՊ-ը դարձել էր սև շուկայում նավթի վաճառքի միջոցով ինքնաֆինանսավորվող կազմակերպություն: Միջազգային դաշինքը հետևում էր կարևորագույն նշանակություն ունեցող ենթակառուցվածքներին հարվածելու դասական ռազմավարությանը և գործնականում կիրառում այն: Միևնույն ժամանակ, որդեգրվեց Լիբիայի մոդելը: Արաբական և մահմեդական երկրների, այդ թվում՝ Սաուդյան Արաբիայի, Հորդանանի, Բահրեյնի և Արաբական Միացյալ Էմիրությունների ներգրավումը ԻՍԻՊ ռմբակոծման գործողություններին ԱՄՆ-ի կողմից օգտագործվեց որպես աշխարհի մյուս արաբական և մուսուլմանական պետություններին հասցեագրված ուղերձ՝ Արևմուտքի հետ ուժերը միավորելու և ԻՍԻՊ-ի դեմ պայքարելու համար [13]: Ինչպես 2014թ. սեպտեմբերի 24-ին հայտարարեց ԱՄՆ նախագահ Օբաման ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի ամբիոնից, այս պատերազմը քրիստոնյաների և մահմեդականների միջև հակամարտություն չէ, այլ միջազգային հանրության կռիվն է «մահվան ցանցի» դեմ [14]: Իրանն իրավական տեսանկյունից հարցականի տակ դրեց օդային ռմբակոծման գործողությունները: *CNN*-ի հաղորդմամբ՝ *«Իրանը խիստ քննադատության ենթարկեց օդային ռմբակոծությունները... Իրանի նախագահ Հասան Ռուհանին ասաց, որ առանց ՄԱԿ հավանության կամ Սիրիայի կառավարության համաձայնության ռազմական հարվածները զուրկ էին որևիցե իրավական հիմքից»* [15]:

ԱՄՆ պատասխանը երկմակարդակ էր: Առաջին մակարդակում դիվանագիտական և քաղաքական խաղերն էին, որ սովորաբար պետությունները խաղում են բեմի հետևում: Երկրորդ մակարդակն իրավական դաշտում էր: Ինչպես ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով փոխխորհրդատու Թոնի Բլինքենը հաղորդեց *CNN*-ին. *«ԱՄՆ-ը տեղյակ էր պահել մի շարք երկրների, այդ թվում՝ Իրանին, որ գործողություններ է ձեռնարկելու: Պարզ է, որ չէր ասվել, թե հատկապես երբ և որտեղ: Մենք ցանկանում էինք համոզված լինել, որ ոչ մեկը մեր ոտքի տակ չի ընկնի»* [15]: Իրանը ԱՄՆ կողքին էր Իրաքի շիա կառավարությանն աջակցելու հարցում, սակայն երբ եկավ գործողություններ ձեռնարկելու և ԱՄՆ-ի հետ ձեռք ձեռքի տված պայքարելու ժամանակը, Իրանը հետ քաշվեց: Հեռավորություն պահպանելն ակնհայտ է դարձնում, որ Իրանն իր սեփական

«կարմիր գիծն» էր քաշել ԱՄՆ-ի հետ համագործակցության հարցում: ԱՄՆ-ի հետ համատեղ ռազմական գործողություններ ձեռնարկելն իրանցի ժողովրդի կողմից կընկալվեր որպես դավաճանություն և հեղափոխության գաղափարախոսությունը կասկածի տակ դնելու փորձ: Մյուս կողմից, շիա մահմեդական իշխանություններին աջակցելն իրանցիների պարտքն է: Այդ պատճառով Իրանի կառավարությունը թույլ տվեց, որ ԱՄՆ-ը կատարի «կեղտոտ գործը»:

Ինչ վերաբերում է Սիրիայի և Իրաքի տարածքի ռմբակոծումներին, ԱՄՆ-ը դրանք արդարացրեց՝ վկայակոչելով ՄԱԿ կանոնադրության 51-րդ հոդվածը: ՄԱԿ-ին ուղղված նամակում ԱՄՆ-ը որպես փաստարկ բերեց այն, որ գործողություններն իրականացվել են, երբ պետությունը, տվյալ դեպքում՝ Սիրիան և Իրաքը, չի կամեցել կամ ի վիճակի չի եղել ինքնուրույն չեզոքացնել սպառնալիքը: Ըստ այդ նամակի՝ *«Միրիական վարչակարգը ցույց է տվել, որ ի վիճակի չէ և արդյունքում ինքնուրույնաբար չի գործելու ահաբեկչության այդ պատսպարանների դեմ»*: *CNN*-ի կողմից ձեռք բերված և հրապարակված նամակում ՄԱԿ-ում ԱՄՆ դեսպան Սամանթա Փաուերը գրում է. *«Համապատասխանաբար, Միացյալ Նահանգները անհրաժեշտ և համարժեք ռազմական գործողություններ է ձեռնարկել Սիրիայում»*: Ինչպես նշեց ԱՄՆ նախագահ Օբաման ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի ամբիոնից, ԻՍԻՊ-ը հասկանում է միայն մեկ լեզու՝ *«ուժի լեզուն»* [16]:

Թուրքական քաղաքականությունը և երկընտրանքները

Ճակատագրի հեգնանքով, եթե 2013թ. սեպտեմբերին ԱՄՆ ռազմական ուժերը սպառնում էին հարձակում գործել Ասադի վարչակարգի վրա, ապա մեկ տարի չանցած նրանք Սիրիայում ռմբակոծում էին ԻՍԻՊ-ին՝ սեփական նկատառումներից ելնելով: Նման հարվածներն իրենց էությամբ Ասադի վարչակարգի օգտին են: Սա ուսումնասիրության համար դասական դեպք է, որով կարելի է բացատրել, թե ինչպես ախոյան և հակառակորդ պետությունների ազգային շահերի համընկնումը կարող է ստիպել, որ նրանք դժկամորեն համագործակցեն կամ հանդուրժեն միմյանց: Կառավարման արևմտյան մոդելի հիման վրա ժողովրդավարական քաղաքական համակարգի ստեղծումն ակնհայտորեն դժվարահարույց խնդիր է: Ինչպես և մյուս իսլամիստական կազմակերպությունները, ԻՍԻՊ-ը պայքարում է տարածաշրջանային կամ համաշխարհային խալիֆայություն հաստատելու համար, որը կղեկավարվի շարիաթի

օրենքներով և «կենսական տարածքի» հայեցակարգով [4, pp. 73-74]: Թուրքիան սուննիական պետություն է, որի կառավարությունը քաղաքական իրավազորություն է ձեռք բերում սուննի մահմեդական հասարակ մարդկանց կրոնական հավատքի վրա հենվելով: Այսպիսով, Իրաքի սուննիների դեմ զենքն ուղղելը վտանգավոր խաղ կդառնար կառավարության համար: Սակայն խաղին բոլորովին անմասն մնալ նրանք նույնպես չեն կարող: Խնդրին մասնակի լուծում տրվեց ԱՄՆ քաղաքական տարբերակի միջոցով, մասնավորապես՝ սկզբնական շրջանում հրաժարվելով ԻՍԻՊ ջիհադական զինյալներին օդային հարվածներ հասցնելուց: Այդ մասին նշեց նաև նախագահ Օբաման՝ հայտարարելով, որ ԱՄՆ-ը դեռևս միայն դիտարկում է Իրաքում որոշակի թիրախների հարվածելու տարբերակը [17]: Թուրքական կառավարությունն օգտվեց որպես ամերիկյան քաղաքական գծի հետևորդ հանդես գալու այս հնարավորությունից: ԱՄՆ-ը իր այդ քաղաքականությամբ հրաժարվում էր ռազմական միջամտությունից և Իրաքի վարչապետ Նուրի ալ–Մալիքիին ստիպում հրաժարական տալ, որպեսզի նոր կառավարություն ձևավորվի: «Ազգային փրկության» այս կառավարությունն ընդգրկում էր երկրի բոլոր կրոնական և քաղաքական խմբերի ներկայացուցիչներին և հավանության արժանացավ Իրաքի օրենսդիրների կողմից [18-20]: ԱՄՆ քաղաքականության նպատակը ԻՍԻՊ վտանգին արդյունավետորեն դիմագրավելն էր: Սակայն, երբ քրդական բնակչությունը հայտնվեց ԻՍԻՊ զինյալների շրջապատման մեջ և գտնվում էր կոտորածի ենթարկվելու վտանգի տակ, ԱՄՆ զորքերը 2014թ. օգոստոսի 7-ին օդային հարվածներ հասցրեցին առանձին նշանակետերի [21]: Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավար շրջանը ձգտում է անկախության, և ԱՄՆ-ը բացահայտորեն չի առարկում այդ նկրտումներին, իսկ ամերիկյան *EXXON/MOBIL* ընկերությունն արդեն ներդրումներ է կատարել այդ տարածաշրջանում նավթագազային պաշարների շահագործման համար [22]: Այս առթիվ պետք է նշել, որ Թուրքիան համաձայնություն է տվել իր տարածքով խողովակաշարի անցկացմանը [23]: Այդ կապակցությամբ զարմանալի չի լինի, եթե Թուրքիան հանդուրժի քրդական անկախ պետության գոյությունը և որպես դրա փոխհատուցում փորձի զիջումներ կորզել Կիպրոսի խնդրի հնարավոր լուծման հարցում: Վերոհիշյալ իրադարձություններից մեկ ամիս անց, 2014թ. սեպտեմբերին Թուրքիան որոշեց միանալ ԻՍԻՊ-ի դեմ պայքարող միջազգային դաշինքի ուժերին: Սակայն Անկարային մեղադրեցին ռազմավարական նշանակություն ունեցող

սիրիական Քոբանի քաղաքը պաշտպանող քուրդ զինյալներին զորքով չօժանդակելու համար [24]: Ակնհայտ է, որ թուրքական կառավարությունը մտադիր չէր աջակցել իր թշնամի քրդերին: Թուրքերը հեռվից էին հետևում Քոբանիում ծավալվող կատաղի մարտերին և այդ պատճառով մեղադրվեցին ԻՍԻՊ-ին քաջալերելու մեջ: Այստեղ տեղին է նշել երկու փաստ.

1. Թուրքիայի Եվրոպական միության հարցերով նախարար Վոլքան Բոզքիրը Եվրոպական խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովում ունեցած իր ելույթում պնդեց, որ իր երկիրը դաշնակիցներին առաջարկել է միասին մտնել Քոբանի, սակայն ՆԱՏՕ-ն և ԱՄՆ-ը այդպես էլ չեն պատասխանել [25]:
2. ԻՍԻՊ-ի դեմ պայքարող միջազգային դաշինքին միանալու մասին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից որոշումը հաստատվելուց անմիջապես հետո ճգնաժամային իրավիճակ առաջացավ Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտում (ԲՏԳ), ինչը ստիպեց Եվրոպական խորհրդին 2014թ. հոկտեմբերի 24-ին հրապարակած իր եզրակացություններում փաստել անվիճելին. ԵՄ-ը ճանաչում է Կիպրոսի Հանրապետության ինքնիշխան իրավունքները: Նաև հիշատակվեց, որ Թուրքիան պետք է հետևի 2005թ. սեպտեմբերի 21-ին շրջանառված ԵՄ հռչակագրին, որում, ի թիվս այլ դրույթների նշվում է, որ Թուրքիան պետք է ճանաչի Կիպրոսի Հանրապետությունը [26, p. 15]:

Իհարկե, 2014թ. հոկտեմբերին թուրքական կառավարությունն ավելի ճկուն դիրքորոշում որդեգրեց՝ թույլ տալով, որ Քոբանիի քուրդ պաշտպանները դրսից աջակցություն ստանան թուրքական տարածքի միջով: Բայց միևնույն ժամանակ թուրքական քաղաքականությունն ավելի ագրեսիվ դարձավ Կիպրոսի հարցում: Թուրքիայի կառավարությունը «Բարբարոս» սեյսմահետախուզական նավն ուղարկեց Կիպրոսի ԲՏԳ հետազոտությունների՝ դրանով կասկածի տակ դնելով Կիպրոսի ինքնիշխան իրավունքներն իր իսկ ԲՏԳ-ում [27]:

Գազայի հատվածի մոդելը

Ինչպես արդեն նշվեց, այս պահին Թուրքիայի վերադարձը քաղաքական առևտրի գաղափարին հիմնականում կենտրոնանում է Կիպրոսի Բացառիկ տնտեսական գոտու և Կիպրոսը թուրքական ափի հետ խողովակաշարով կա-

պելու վրա: Քաղաքական այս խաղը համապատասխանում է Թուրքիան տարածաշրջանային գերտերություն և էներգետիկ հանգույց դարձնելու ռազմավարական նպատակին: Բայց ի՞նչ գին կվճարի Թուրքիան դրա դիմաց: Քաղաքական տեսանկյունից մշտական սպառնալիք կստեղծվի, և Թուրքիան դատապարտված է դիմակայելու դրան: Այդ սպառնալիքը Թուրքիայի շեմին քրդական պետության ստեղծումն է, որը կարծես նրա մեջքին խրվելու պատրաստ մի դաշույն լինի: Սակայն այս խնդիրը դիտարկելու մեկ այլ մոտեցում էլ կա: Ամենուրեք սփռված քրդական բնակչությունը մեկ փոքր և թույլ պետության մեջ հավաքելը Թուրքիային լավ հնարավորություն կարող է ընձեռել, քանի որ նման պետությունը թուրքական ռազմական մեքենայի համար հեշտ թիրախ կլինի: Այսպիսի սցենարը նման է Իսրայելի ստեղծած մոդելին, երբ այն ճանաչեց Գազայի հատվածի պաղեստինյան իշխանություններին, թեև, իհարկե, այս երկու դեպքերն ամբողջապես նույնը չեն: Անշուշտ, Թուրքիային մտահոգող խնդիրների մի ալիք է բարձրանում: Մեկ այլ սցենարի հիմք է հանդիսանում «կորսված քրդական հայրենիքի» հայեցակարգը [28]: «Կորսված քրդական հայրենիք» են համարվում Թուրքիայի, ինչպես նաև Սիրիայի և Իրանի կազմում գտնվող որոշ տարածքներ: Ռազմավարական տեսանկյունից քրդական պետության ստեղծումը և «կորսված քրդական հայրենիքի» հայեցակարգը ձեռնտու են ԱՄՆ արտաքին քաղաքականությանը, քանի որ քրդական գործոնի կրակը բորբոքելով՝ Վաշինգտոնը կկարողանա լուծել էներգետիկ խնդիրներ և առաջ մղել իր ազգային շահերը: Սակայն հիմնական հարցն այն է, թե ինչ պլաններ ունի ԱՄՆ-ը տարածաշրջանում: Առայժմ ամերիկյան ռազմավարությունը եղել է անարդյունավետ և անհուսալի, ինչը վնաս է հասցրել ԱՄՆ իմիջին և վստահելիությանը, իսկ ԱՄՆ ազգային շահերը լավագույն կերպով չեն սպասարկվել:

Կիբեռպարտիզանական պատերազմ

2014թ. օգոստոսի 7-ին ԱՄՆ ռազմաօդային ուժերի կողմից ԻՍԻՊ ջիհադականներին հասցրած հարվածները նպատակաուղղված էին պաշարման մեջ գտնվող քուրդ բնակչությանն աջակցելուն: Սակայն հումանիտար նկատառումները ԻՍԻՊ մարտական դիրքերին ԱՄՆ հասցրած հարվածների միակ պատճառը չէին: Այստեղ վտանգված էին ամերիկյան ազգային շահերը, և ԱՄՆ-ը մտադիր էր թույլ չտալ ջիհադականներին սպառնալիքի տակ դնել նավթային պաշարները: Ահա թե ինչու ԱՄՆ-ը ցանկանում է, որ քուրդ զինյալներն իր

փոխարեն կատարեն «կեղտոտ գործը» և վնասազերծեն ԻՍԻՊ ապստամբնե-
րին: Ամերիկացիների և բրիտանացիների ռազմական գործողությունները
պայմանավորված էին ևս մեկ գործոնով: Եթե ԻՍԻՊ-ին հաջողվեր գրավել Մո-
սուլի ջրամբարը և վերահսկողություն սահմանել ջրային պաշարների նկատ-
մամբ, ապա Իրաք պետությունը կհայտնվեր չափազանց դժվար իրավիճակում:
Ջուրը կարևորագույն ռազմավարական ռեսուրս է և ունի նավթին ու գազին
հավասար կամ նույնիսկ ավելի մեծ նշանակություն: Մոսուլի ջրամբարին
տիրելու պարագայում ԻՍԻՊ-ը կարող էր կառավարել նաև ջրամատակարար-
ման և էլեկտրաէներգիայի մատակարարման հետ կապված կրիտիկական և
ռազմավարական ենթակառուցվածքները: Այսպիսով, շեշտենք, որ ԱՄՆ և Մեծ
Բրիտանիայի դրդապատճառը հիմնված է իրենց ազգային շահերի վրա և
բխում է պետության գործառույթների իրականացման համար հիմնարար նշա-
նակություն ունեցող կրիտիկական ռամավարական ռեսուրսների, օրինակ՝
ջրի, նավթի և գազի պաշարների տիրապետման խնդրից: ԻՍԻՊ հիմնական
նպատակն էր՝ կաթվածահար անել Իրաք պետությունը և իր սեփական ան-
օրինական խալիֆայությունը հաստատել որպես Հյուսիսային Իրաքը և Սի-
րիայի մի շարք շրջանները վերահսկող միակ պետական միավոր: ԻՍԻՊ-ը
հավելյալ առավելություն ունի. այն ինքնաբավ կազմակերպություն է, որովհե-
տև վերահսկում է առնվազն չորս նավթահանք Մոսուլում և էլի մի քանիսը
Քիրքուքում: Չվերամշակված նավթը սև շուկաներում վաճառելով՝ ԻՍԻՊ-ն
օրական $1-2 մլն-ի շահույթ է ստանում [29]: 2014թ. օգոստոսի գնահատական-
ներով՝ այդ նավթահանքերը ԻՍԻՊ-ին օրական $750 հազ. – 1 մլն էին բերում
[30]: Այսպիսի գումարներով ԻՍԻՊ-ը կարող է ֆինանսավորել իր ռազմական
գործողություններն Իրաքում, Սիրիայում և այլուր: Իսկ ինչպե՞ս է ԻՍԻՊ-ին
հաջողվել իր գրված տարածքներից նավթ վաճառել արտաքին աշխարհին:
Նախ՝ այն վերահսկում է ճանապարհները, և երկրորդ՝ չվերամշակված նավթը
վաճառում է ցածր գներով: Երբ նավթի շուկայական գինը մեկ բարելի դիմաց
կազմում էր $100, ԻՍԻՊ-ը նավթի մեկ բարելը վաճառում էր $26-50 գնով:
Ինչպես նշում է Լուայ ալ–Խատիբը. *«Իրաքի կենտրոնում և հյուսիսում բավա-
կանաչափ հարուստ պաշարներ կան, որոնք ձեռք գցելու դեպքում ԻՍԻՊ-ը
կարող է ներկայիս օրական 30 հազ. բարելի արտադրանքը հասցնել մինչև
օրական 1 մլն բարելի, եթե կարողանա իր հսկողության տակ առնել նավթով
հարուստ Քիրքուք քաղաքը և շրջակա բնակավայրերը: Այս պաշարներին*

տիրապետելու դեպքում դրամական ներհոսքի օգնությամբ հնարավոր կլինի ահաբեկչության կայսրությունն ընդլայնելով հասցնել աներևակայելի մասշտաբների: Սակայն առայժմ ԻՍԻՊ նավթի առևտուրը մնում է տեղական մասշտաբի, ընդ որում, հիմնական գնորդները գտնվում են Հորդանանում, Թուրքիայում, Սիրիայում և Իրանում ու գործում են միջնորդների ցանցի և բեռնատար ավտոմեքենաների սեփականատերերի միջոցով» [30]:

Նշված երկրները՝ Հորդանանը, Թուրքիան, Սիրիան և Իրանը [31, 30], ԻՍԻՊ-ից էժան նավթ գնելով, փաստորեն, հովանավորել են վերջինիս ահաբեկչական գործողությունները և այդ պատճառով դարձան *«Anonymous»* հաքերական խմբի ակտիվիստների թիրախը: ԻՍԻՊ-ի դեմ կիբեռպատերազմը ստացավ *«Operation NO2ISIS»* (Օպերացիա «Ո՛չ ԻՍԻՊ-ին») պայմանական անվանումը: *«Anonymous»*-ը համակարգչային սաբոտաժի (*DDoS*) հարձակումներ ձեռնարկեց՝ նպատակ հետապնդելով խափանել կառավարական կայքերի և համակարգչային ցանցերի աշխատանքը: Սա կիբեռպատերազմի առաջին մակարդակն է և դրա ամենաթեթև տեսակը: Եթե ցանցահենները որոշեն սրել կիբեռպատերազմը, ապա գործը կհասնի բարձր մակարդակների և ավելի բարդ կառուցվածքով վնասաբեր համակարգչային ծրագրերի կիրառման: Ջորդան Շախտելը նշում է. *«Anonymous»-ի աղբյուրի հաղորդմամբ. «Մենք ծրագրել ենք պարգորոշ ուղերձ հղել Թուրքիային, Սաուդյան Արաբիային, Կատարին և բոլոր այն երկրներին, որոնք բացահայտորեն մատակարարում են ԻՍԻՊ-ին սեփական շահի համար: Գալիք մի քանի օրերին մենք կսկսենք դիմազրկել այդ երկրների կառավարական վեբ–կայքերը, որպեսզի նրանք հստակորեն ըմբռնեն մեր ուղերձը»* [32]:

ԻՍԻՊ-ն արդեն ներգրավված է կիբեռպատերազմում՝ սոցիալական կայքերի կիրառմամբ: Փորձագետները տարակարծիք են ԻՍԻՊ կիբեռպատերազմ վարելու կարողությունների մասին: Հայտնի է, որ *«Anonymous»*-ի գործած առաջին հարձակմանը ԻՍԻՊ-ը պատասխան տվեց՝ դիմազրկելով *«Anonymous»*-ի թվիթերյան էջը՝ *@anonmessage* [32]: Որոշ փորձագետների պնդմամբ՝ այս ցանցահենությունը նման էր «Սիրիայի էլեկտրոնային բանակի» (*Syrian Electronic Army, SEA*) կողմից կիրառվող մեթոդներին, սակայն ոմանք ժխտում են այդ տեսակետը: Ամեն դեպքում հայտնի չէ, թե ԻՍԻՊ կարողություններն ինչ մակարդակի կարող են հասնել: Մինչ այժմ ԻՍԻՊ-ն օգտագործել է սոցիալական կայքերը հոգեբանական պատերազմ վարելու

համար՝ համացանցի միջոցով կոչեր հղելով մահմեդականներին ոտքի կանգնել և մարտնչել արևմտյան պետությունների, հատկապես ԱՄՆ-ի դեմ: Արժանի է հիշատակման այն, որ ԻՍԻՊ պաղեստինյան ճյուղը մշակել և ծրագրավորել է Անդրոիդի վրա հիմնված կիրառական մի ծրագիր, որի օգնությամբ ԻՍԻՊ-ը կարողանում է իր աջակիցների թվիթերյան հաշիվների միջոցով հաղորդագրություններ առաքել և տարածել [32]: ԻՍԻՊ-ն օգտագործում է կիբեռտարածությունը և տեխնոլոգիան իր հրեշավոր ու արյունարբու չարագործությունների, անմեղ մարդկանց զանգվածային սպանությունների, մահապատիժների և գլխատումների տեսագրությունները տարածելու համար: Դրա նպատակը ահ ու սարսափ ներշնչելն է, ինչպես որ ժամանակին անում էին Բոսնիա–Հերցեգովինայի ջիհադականները, իսկ հետագայում՝ «Ալ Քաիդան»: Այս կապակցությամբ Ռան Լևսը գրում է. *«Իրաքի կառավարությունը որոշեց արգելափակել սոցիալական տարբեր կայքերի մուտքը: Ավելին, որոշ շրջաններում անգամ արգելափակվեց համացանցային ողջ հոսքը: Այս արգելապատնեշը հաղթահարելու համար ԻՍԻՊ անդամները կիրառեցին անանունության մեթոդներ և ծրագրեր: Դա պահանջում է որոշ տարրական տեխնիկական հմտություններ, որոնք կարող են կիրառվել նաև որպես այլ ցանցային գործողությունների իրականացման սկզբնակետ»* [33]:

ԱՄՆ-ը չդիմացավ ԻՍԻՊ կիբեռհարձակումներին պատասխան տալու գայթակղությանը: *Twitter*-ի, *Facebook*-ի և *YouTube*-ի միջոցով թվային բլից–արշավ սկսվեց ԻՍԻՊ «ընկերների» դեմ, որոնց անձնական հաշիվների միջոցով այն ձգտում է վերահսկողություն հաստատել, ինչպես նաև հաղթել տեղեկատվական ու քարոզչական պատերազմում՝ վնաս հասցնելով ԱՄՆ-ին: ԱՄՆ պետական դեպարտամենտի բարձրաստիճան պաշտոնյա Նիքոլաս Ռևիսեայի խոսքերով՝ դա մի տեսակ կիբեռպարտիզանական պատերազմ է. *«Սա համադարման կամ արծաթե փամփուշտ չէ: Որոշ մարդիկ չափազանցնում են, մյուսները համարում են, որ դա անօգուտ է, կամ էլ մտածում են, թե այս կախարդական փայտիկի շնորհիվ ահաբեկիչները կհանձնվեն: Նշվածներից ոչ մեկն էլ ճշմարիտ չէ: Սա դանդաղ, համառ, օրեցօր մղվող կռիվ է, որում մի փոքր առաջ ես շարժվում ամեն օր: Սա հազարավոր փոքր մարտերի պատերազմ է, որտեղ մեծ ճակատամարտերը բացակայում են: Ամերիկան սիրում է մեծ ճակատամարտեր, բայց այս դեպքում դրանք չկան. ավելի շուտ սա պարտիզանական պատերազմի է նմանվում»* [34]:

ԻՍԻՊ ռազմավարական պլանը և Թուրքիայի երկընտրանքը

ԻՍԻՊ ռազմավարական պլանը նպատակաուղղված է իսլամական պետության հիմնմանը: Ինչպես նշվեց, այդպիսի խալիֆայության կազմում ենթադրվում է ընդգրկել հարևան պետությունների տարածքները: Թուրքիան այդ պետություններից մեկն է: Նման սցենարի իրականացումն ի չիք կդարձնի Հյուսիսային Իրաքում քրդական պետության հռչակմանն ուղղված ջանքերը՝ միևնույն ժամանակ սպառնալիքի տակ դնելով Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Այսպիսով, օդային ռմբակոծությունների միջոցով ԱՄՆ ռազմական միջամտության համար կան մի շարք էթիկական, քաղաքական, տնտեսական և ռազմավարական դրդապատճառներ: Մյուս կողմից, որքան ԱՄՆ-ը ավելի խոր ներգրավվի հակամարտության մեջ, այնքան ԻՍԻՊ-ն իր դաժան գործողությունների արդարացման ավելի մեծ հնարավորություն կստանա՝ որպես պատրվակ օգտագործելով պայքարը հանուն Ալլահի և մահմեդական ժողովուրդների պաշտպանությունը «չարիքի ուժերից» ու Արևմուտքի անհավատ պետություններից, որոնց նպատակը մուսուլմանների բնական ռեսուրսների և հարստության թալանն է [4, pp. 66-67]:

2014թ. օգոստոսի 15-ին ԵՄ-ը որոշում կայացրեց զենք, զինամթերք և ռազմական օգնություն տրամադրել Հյուսիսային Իրաքի քրդերին: Այս որոշումը չէր նախատեսում ԵՄ ուղղակի ռազմական աջակցության տրամադրում քուրդ զինյալներին, սակայն ԵՄ անդամ երկրներին թույլ էր տալիս ինքնուրույն կերպով ռազմական միջամտություն իրականացնել: Ինչ վերաբերում է Թուրքիային, այն չի ցանկանում, որ ԻՍԻՊ-ը հզորանա, քանի որ վերջինիս պայքարի նպատակ հանդիսացող նոր խալիֆայության ստեղծումը ենթադրում է թուրքական տարածքների զավթում: Թեև ԻՍԻՊ-ը սուննի մահմեդական կազմակերպություն է, սակայն նրա ռազմավարական նպատակները սպառնալիք են հանդիսանում Թուրքիայի տարածքային ամբողջականության համար: Այս տրամաբանության շրջանակում Թուրքիան կարող է հանդուրժել քրդերին, որպեսզի նրանք «մաքրեն» տարածաշրջանը ԻՍԻՊ ապստամբներից: ԻՍԻՊ հարուցած վտանգի չեզոքացումը բխում է Թուրքիայի շահերից: Վերջինիս առջև ծառացած նոր մարտահրավերներից մեկն էլ հենց իր շուրջը գոյացող վտանգների չեզոքացումն է: Աշխարհաքաղաքական զարգացումները կարող են Թուրքիային կանգնեցնել երկընտրանքի առջև. պե՞տք է արդյոք «կանաչ լույս» տալ Հյուսիսային Իրաքում քրդական պետության

ստեղծմանը, թե՞ ոչ: Թուրքերի շահագրգռվածությունն այս հարցում հիմնվում է ԻՍԻՊ-ի կողմից սուննի խալիֆայության ստեղծմամբ թուրքական տարածքներին սպառնացող վտանգի կանխման ռազմավարական հայեցակարգի վրա: Հարցն այն է, թե Թուրքիայի համար ով է ավելի մեծ վտանգ ներկայացնում՝ ԻՍԻՊ-ը, թե՞ քրդերը: Մեկ բան հաստատ պարզ է. երկուսն էլ հավակնություններ ունեն Թուրքիայի տարածքների նկատմամբ: Թուրքերն իրենց որոշումները կկայացնեն աշխարհաքաղաքական զարգացումներից, ռազմավարական նպատակներից և երկրին սպառնացող վտանգների բնույթից ելնելով:

Եզրահանգումներ

ԻՍԻՊ ահաբեկչական գործողություններն ապակայունացրել են տարածաշրջանային համակարգը և պայմանավորել իրավիճակի բերումով գոյացող, ահաբեկչության դեմ պայքարին ուղղված նոր դաշինքների ստեղծումը: Սույն վերլուծությունը թույլ է տալիս հանգել որոշակի եզրակացությունների, որոնք վերաբերում են ԻՍԻՊ-ին և այլ առանցքային դերակատարներին, ինչպիսիք են գերտերություններն ու տարածաշրջանային տերությունները, այդ թվում՝ Թուրքիան: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը.

1. ԻՍԻՊ ռազմավարական նպատակն է՝ ստեղծել շարիաթի օրենքներով ղեկավարվող տարածաշրջանային, այնուհետև համաշխարհային խալիֆայություն: Սա արևմտյան և մահմեդական գլոբալացումների միջև առճակատում է, որը դուրս է գալիս ազգային շահերի շրջանակից: ԻՍԻՊ-ը փատորեն հայտարարել է ջիհադ, այսինքն՝ սրբազան պատերազմ [4, pp. 75-79]: Մյուս կողմից, արևմտյան երկրները հերքում են ԻՍԻՊ պատերազմի հայեցակարգը և պնդում, որ ԻՍԻՊ-ի դեմ պատերազմը պայքար է ահաբեկչության դեմ, որին միացել են նաև արաբական և մահմեդական երկրներ:
2. Տարածաշրջանային համակարգում տիրում է անկայուն իրավիճակ, որի հետևանքով առաջացել են բարդ դաշինքներ: Այս դաշինքներում ընդգրկվել են ԱՄՆ-ը, Ռուսաստանը և այլ երկրներ: Նույնիսկ Իրանն է պատրաստ աջակցություն ցուցաբերել միջազգային դաշինքի գործողություններին, սակայն գերադասում է հեռավորություն պահպանել: Այստեղ հակադիր շահերի բախում կա: Մի կողմից՝ ազգային անվտանգության խնդիրն է, որը պահանջում է աջակցել ԻՍԻՊ-ի դեմ պատերազմին, իսկ մյուս

կողմից Իրանի թեոկրատական քաղաքական համակարգի օրինավորության հարցն է, որը հիմնվում է արևմտյան իմպերիալիզմի դեմ պայքարի վրա: ԱՄՆ-ը, Ռուսաստանը և մյուս երկրները մի կողմ դրեցին իրենց տարաձայնություններն ու հանդուրժեցին միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար, որպեսզի պաշտպանեն իրենց ազգային շահերը և կանգնեցնեն ԻՍԻՊ վայրագ ու արյունոտ արշավանքը: Քաղաքական այս հայեցակարգը ցուցադրում է, որ ընդհանուր սպառնալիքին հակազդելու կարիքը պարարտ հող և հիմնավոր պատճառներ է ստեղծում պահի թելադրանքով պայմանավորված ու համընկնող շահերի վրա հիմնված կոալիցիայի (միջազգային դաշինքի) առաջացման համար:

3. Թուրքիան չվարանեց օգտվել իր աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական դիրքերն ամրապնդելու հնարավորությունից՝ ձգտելով իրեն հաստատել որպես տարածաշրջանային անառարկելի տերություն: Այս արդյունքին հասնելու նպատակով Թուրքիան «սակարկության» մեջ ներքաշվեց հատկապես ԱՄՆ-ի հետ՝ փորձելով զիջումներ կորզել Կիպրոսի հարցում: Հիմնական գաղափարն այն է, որ Թուրքիան ցանկանում է Կիպրոսի գազային պաշարներից բաժին ունենալ, որպեսզի վերածվի էներգակիրների ոչ միայն տարանցիկ, այլև արտադրող երկրի: Միևնույն ժամանակ, Թուրքիայի առջև ծառացած հիմնական խնդիրը քրդական հարցն է, որը կարող է նոր թափ ստանալ Թուրքիային, Իրաքին և Սիրիային պատկանող տարածքներում քրդական պետության ստեղծման կապակցությամբ: Նման իրադարձությունը կարող է մղձավանջ հանդիսանալ Թուրքիայի համար, եթե չհաջողվի այն ուղղել Գազայի հատվածի մոդելի հունով, որը և Թուրքիայի փրկարար օղակը կդառնա: Այս սցենարի հիմքում ընկած է քրդերին Թուրքիայի հսկողության տակ գտնվող որոշակի հողատարածքում կենտրոնացնելու գաղափարը: Այս դեպքում Թուրքիան հնարավորություն կստանա ոչ միայն իր հսկողության տակ պահել քրդական ինքնավար շրջանը կամ նույնիսկ քրդական անկախ, բայց թույլ պետությունը, այլև պատժել նրան, եթե համարի, որ իր ազգային շահերը, հատկապես անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը վտանգվում են: Հարկավ, կարելի է պնդել, որ դա կնշանակի ոչ թե հակամարտության ավարտ, այլ դրա նոր փուլի սկիզբ:

4. Փաստորեն, տեխնոլոգիան հզորության հիմնական գործոններից մեկն է:

Կիբեռտարածությունը, դրանում կիրառվող մեթոդներն ու զենքերը (համակարգչային վիրուսները և այլ վնասաբեր ծրագրերը) իրենց սեփական դերակատարումն ունեն ԻՍԻՊ-ի և միջազգային դաշինքի միջև առճակատման մեջ: Հետևապես, կիբեռպատերազմն իր ուրույն տեղն է գրավում որպես հակամարտությունների ժամանակակից ձև՝ գոյակցելով պատերազմի ավանդական միջոցների և ռազմավարական ծրագրերի հետ մեկտեղ:

Վերոգրյալ վերլուծությունը հաշվի առնելով՝ նկատենք հետևյալը.

- հակամարտության պատճառով ձևավորված սև շուկան իր ազդեցությունն է թողնում նավթի գների վրա: ԻՍԻՊ պարագայում նրա կողմից վերահսկվող նավթահանքերի քանակը բավարար չէ նավթի գների վրա լրջորեն անդրադառնալու համար: Թերևս, ԻՍԻՊ-ին դժվար կլինի գրավել Հյուսիսային Իրաքում գտնվող նավթահանքերի մեծ մասը [32];
- նավթագազային պաշարները կարող են հանդիսանալ ռազմավարական գործիք կամ դառնալ «աքիլեսյան գարշապար»: Մի կողմից՝ նավթը ԻՍԻՊ ռազմավարական գործիքն է, քանի որ չվերամշակված նավթի վաճառքի շնորհիվ ԻՍԻՊ-ը դառնում է ինքնաֆինանսավորվող կազմակերպություն: Մյուս կողմից՝ նավթը «աքիլեսյան գարշապար» է, որովհետև ԱՄՆ-ը և արևմտյան մյուս երկրները դրա պատճառով զայրացան ԻՍԻՊ-ի վրա և համատեղ օդային հարվածներ հասցրեցին դրությունը շտկելու համար: Տրամաբանական հաշվարկը ցույց է տալիս, սակայն, որ շահն ու օգուտը շատ ավելի մեծ են, քան կորուստները: Առանց նավթային ռեսուրսների վերահսկողության ԻՍԻՊ-ը միջոցներ չէր ունենա և չէր կարողանա իր շահերը առաջ մղել և սպասարկել, առավել ևս՝ իրականացնել իր ռազմավարական նպատակները:

ԻՍԻՊ-ը ցույց տվեց, որ ահաբեկչությունը միջազգային համակարգին հատուկ երևույթ է: Անցյալում եղել են ահաբեկչական համարվող բազմաթիվ կազմակերպություններ, ինչպես, օրինակ՝ «Կարմիր բրիգադները» (Իտալիա), ԻՀԲ-ը (Իռլանդական հանրապետական բանակ), ՊԱԿ-ը (Պաղեստինի ազատագրման կազմակերպություն), իսկ այժմ նաև *PKK-ն (Partiya Karkerên Kurdistanê* - Քրդական բանվորական կուսակցություն): Նրանց նպատակները, գա-

ղափարախոսությունը, ինքնությունը և գործելակերպը տարբերվում են: Որոշ կազմակերպություններ ձերբազատվել են ահաբեկչականի պիտակից, որովհետև կարողացել են համոզել ուրիշներին, որ իրենց հետապնդած նպատակը բարի է: Յասեր Արաֆաթն իր գործունեությունը մեկնարկեց որպես ահաբեկիչ, սակայն կյանքից հեռանալու պահին արդեն Պաղեստինյան ինքնավարության նախագահն էր: Ինչպես նշվեց, «Ալ Քահիդան» կորցրել է իր առաջնորդին ու կարծես թե գլխատված է: Սակայն նրա գավազանը փոխանցվեց ԻՍԻՊ-ին: Ահաբեկչության հանդեպ ահ ու սարսափը ստիպում են պետություններին միավորել իրենց ուժերը թե՛ սիմետրիկ, թե՛ ասիմետրիկ վտանգների դեմ պայքարում [4, pp. 58-59]: Ազգային շահերը դեռևս շարունակում են թելադրել միջազգային հարաբերությունները, և այս իրողությունն արտահայտվում է իրավիճակի բերումով ձևավորվող կոալիցիաներում: ԱՄՆ-ի, Ռուսաստանի և այլ երկրների միջև նման կոալիցիաներ կազմվում են ԻՍԻՊ ահաբեկչական գործողությունների պատճառով: Պահի թելադրանքով ստեղծված այս կոալիցիաները գոյատևում են, քանի դեռ կան ընդհանուր սպառնալիքներ և թշնամիներ: Դրանք փխրուն են, հեղհեղուկ և հետևապես՝ անհուսալի: ԻՍԻՊ-ը որպես երևույթ սնուցվում է մի կողմից՝ կրոնական մոլեռանդությամբ, մյուս կողմից՝ ԱՄՆ և Արևմուտքի այլ պետությունների վարած սխալ քաղաքականությամբ: Ինչ վերաբերում է Թուրքիային, այն բաց չի թողնում տարածաշրջանային տերության վերածվելու իրեն ընձեռված հնարավորությունը: Սակայն, միևնույն ժամանակ, Թուրքիան կանգնած է բարդագույն երկընտրանքների առջև, թե ինչպես պետք է վարվել քրդական հարցում և ինչ լուծում պետք է տրվի դրան:

Այսպիսով, կարելի է փաստարկել, որ ԻՍԻՊ-ը և ահաբեկչությունը միջազգային համակարգի գործունեությանն ընդհանուր առմամբ հատուկ երևույթներ են, որ մասնավորապես երևան են հանում դրա քաոսային էությունը և հակադիր ու համընկնող ազգային շահերի միջև վայրիվերումները: Ահաբեկչությունը և ԻՍԻՊ-ը առասպել չեն, այլ իրականություն, որում մարմնավորվել է առասպելական հրեշ «Լեռնեյան հիդրան»: Հետևապես, հարկավոր է պարզել, թե ով է միջազգային համակարգի «Հերակլեսը»:

Նոյեմբեր, 2014թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Francis Fukuyama*, The End of the World And The Last Man, Free Press, New York, 1992.

2. CNN, The death of Osama bin Laden Fast Facts, November 6, 2014, CNN Library, viewed 7 November 2014: http://edition.cnn.com/2013/09/09/world/death-of-osama-bin-laden-fast-facts/
3. *M. Pizzi*, Cyber-warfare greater threat to US than terrorism, say security experts/ Intelligence and defense officials warn of 'cyber Pearl Harbor', Aljazeera America, January 7, 2014, accessed 3 November 2014: http://america.aljazeera.com/articles/2014/1/7/defense-leaders-saycyberwarfaregreatestthreattous.html
4. *Yiannos Charalambides*, The Third World War, Global Titans and Sworn Soldiers, ERPIC, 2013.
5. *Hans J. Morgenthau*, Politics among Nations: The Struggle for Power and Peace, Brief Edition, Revised, Alfred A. Knopf, New York, 1985.
6. BBC News, Isis rebels declare 'Islamic state' in Iraq and Syria", 30 June 2014, accessed 25 October 2014: http://www.bbc.com/news/world-middle-east-28082962
7. *S.L. Spark, N. Robertson , and M. Tawfeeq*, Iraq crisis: ISIS advances on Baquba as U.S. moves firepower to region, CNN. June 18, 2014, accessed 3 October 2014. http://edition.cnn.com/2014/06/17/world/meast/iraq-crisis/
8. Al ArabiyaNews, , ISIS urges militants to march to Baghdad, 2014: accessed November 2, 2014. http://english.alarabiya.net/en/News/2014/06/12/ISIS-militants-plan-to-march-on-Baghdad.html
9. *B.Starr and T. Cohen*, Obama says 'small number' of military advisers going to Iraq, CNN, June 20, 2014, accessed 2 October 2014: http://dition.cnn.com/2014/06/19/politics/us-iraq/
10. PRESSTV, 2014, Iran, Russia to join forces against terror in Iraq: Tehran, viewed 3 November 2014: http://www.presstv.ir/detail/2014/07/06/370157/iran-russia-agree-to-join-forces-in-iraq/
11. *J. Walters*, Expand US air strikes on Isis militants, senior Republicans urge, theguardian, August 24, 2014, accessed 23 October 2014: http://www.theguardian.com/world/2014/aug/24/republicans-isis-militants-us-air-strikes
12. *J.Sciutto, M.Castillo and H.Yan*, U.S. airstrikes hit ISIS inside Syria for first time, CNN, September 23, 2014, accessed 22 October 2014: http://edition.cnn.com/2014/09/22/world/meast/u-s-airstrikes-isis-syria/
13. *J.Mullen*, U.S.-led airstrikes on ISIS in Syria: Who's in, who's not, CNN, October 2, 2014, accessed 1 November 2014: http://edition.cnn.com/2014/09/23/world/meast/syria-airstrikes-countries-involved/
14. BBC News, Islamic State Crisis: Obama targets 'network of death', September 24, 2014, accessed 24 October 2014: http://www.bbc.com/news/world-middle-east-29351672
15. *J.C. Carter, E. Labott and J Sciutto*, 'The Turk' is dead: Al Qaeda-linked terror group says leader died in Syria airstrikes, CNN, September 24, 2014, viewed 4 November 2014: http://edition.cnn.com/2014/09/23/world/meast/isis-airstrikes/
16. CNN, TRANSCRIPTS, President Obama at United Nations; Revenge Killing?; New U.S. Terror Alert After Airstrikes, September 24, 2014, accessed 3 November 2014: http://edition.cnn.com/TRANSCRIPTS/1409/24/cg.01.html
17. The Guardian, Iraq crisis: Baghdad requests US air strikes against Sunni militants – live, 18 June, 2014, accessed 1 November 2014: http://www.theguardian.com/world/middle-east-live
18. *J.Karadsheh*, Iraqi lawmakers approve new government; al-Maliki becomes VP, CNN, September 9, 2014, accessed 23 October 2014: http://edition.cnn.com/2014/09/08/world/meast/iraq-government/
19. *M.Chulov and S.Ackerman*, How Nouri al-Maliki fell out of favour with the US, The Guardian, June 19, 2014, accessed 12 October 2014: http://www.theguardian.com/world/2014/jun/19/how-nouri-al-maliki-fell-out-favour-with-us-iraq

20. *R.Saliman and M.Georgy*, Iraq's Maliki finally steps aside, paving way for new government, Reuters, August 14, 2014, accessed 5 November 2014. http://www.reuters.com/article/2014/08/14/us-iraq-security-usa-military-idUSKBN0GD1KS20140814
21. *S.Li and D.Bennetee*, Pentagon Confirms U.S. Airstrikes in Iraq, The Wire, August 7, 2014, accessed 14 September 2014. http://www.thewire.com/global/2014/08/pentagon-denies-reports-of-us-bombing-in-iraq/375769/
22. *S.Pfeifer*, Exxon signs Kurd exploration contracts, Financial Times, November 10, 2011, accessed 8 November 2014. http://www.ft.com/cms/s/0/4e44f860-0bda-11e1-9861-00144feabdc0.html#axzz3IRN9d0gu
23. ALMONITOR, Turkey, ExxonMobil Going Ahead With Gas Project in Iraqi Kurdistan, May 20, 2013, accessed 8 November 2014: http://www.al-monitor.com/pulse/business/2013/05/turkey-and-exxon-explore-oil-in-iraqi-kurdistan.html#
24. *L.Doucet*, Islamic State crisis: Turkish PM rejects Kobani criticism, BBC, October 28, 2014, accessed 8 November 2014: http://www.bbc.com/news/world-middle-east-29799646
25. *A.Unal*, Minister explains Turkey's EU strategy, informs European Parliament on Kobani crisis, Daily Sabah, October 16, 2014, accessed 1 November 2014. http://www.dailysabah.com/politics/2014/10/16/minister-explains-turkeys-eu-strategy-informs-european-parliament-on-kobani-crisis
26. European Council (23 and 24 October 2014), EUCO 169/14 CO EUR 13, CONCL 5, October 24, 2014, accessed 3 November 2014. http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/ec/145397.pdf
27. *M.Langfan*, Turkish Warship in Cyprus Zone Sends Tensions Soaring: Turkey is sending a seismographic vessel to explore areas in the Cypriot Exclusive Economic Zone, Arutz Sheva, October 7, 2014, accessed 12 October 2014: http://www.israelnationalnews.com/News/News.aspx/185928#.VF2SfDSsUbc
28. *S.Kaleyi*, The Kurdish Conflict: Aspirations for Statehood within the Spirals of International Relations in the 21st Century, Kurdish Aspect, Kurdish Views, June 9, 2010, accessed 3 November 2014. http://www.kurdishaspect.com/doc060910SK.html
29. *P.Crompton*, Sales of black market oil surge in Middle East, Al Arabiya, July 29, 2014, accessed 29 October 2014: http://english.alarabiya.net/en/perspective/analysis/2014/07/29/-Rogue-oil-sales-of-illicit-cut-price-crude-in-Mideast-surge.html
30. *L.Al-Khatteeb*, How Iraq's black market in oil funds ISIS, CNN, August 22, 2014, accessed 6 November 2014. http://edition.cnn.com/2014/08/18/business/al-khatteeb-isis-oil-iraq/
31. The Wrongologist, Turkey's Role in ISIS Oil Smuggling, Geopolitics Power and Political Economy, 26 September, 2014, accessed 23 October 2014: http://wrongologist.com/2014/09/turkeys-role-in-isis-oil-smuggling/
32. *J.Schachtel*, Hacktivist Group Anonymous Plans Cyber Warfare against countries that supports ISIS, Preitbart, July 1, 2014, accessed 20 August 2014. http://www.breitbart.com/Big-Peace/2014/07/01/Anonymous-Hacktivist-Group-Plans-Cyber-Warfare-Against-Countries-That-Support-ISIS
33. *J.Levs*, Which Mideast power brokers support Hamas?, CNN, August 6, 2014, accessed 6 August 2014: http://edition.cnn.com/2014/08/06/world/meast/mideast-hamas-support/
34. *N.Revisea*, The US Has Launched A Social Media Offensive Against ISIS, Business Insider – Military and Defence, August 31, 2014, accessed 4 September 2014. http://www.businessinsider.com/afp-us-cyber-warriors-battling-islamic-state-on-twitter-2014-8

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ «ԼԵՌՆԵՅԱՆ ՀԻԴՐԱՆ»

Յանոս Խարալամբիդիս

Ամփոփագիր

Թուրքիան կանգնած է բարդագույն երկընտրանքների առջև, թե ինչպես պետք է վարվել քրդական հարցում և ինչ լուծում պետք է տրվի դրան: ԻՍԻՊ-ը և ահաբեկչությունը միջազգային համակարգի գործունեությանն ընդհանուր առմամբ հատուկ երևույթներ են, որ մասնավորապես երևան են հանում դրա քաոսային էությունը և հակադիր ու համընկնող ազգային շահերի միջև վայրիվերումները: Ահաբեկչությունը և ԻՍԻՊ-ը առասպել չեն, այլ իրականություն, որում մարմնավորվել է առասպելական հրեշ «Լեռնեյան հիդրան»: Հետևապես, հարկավոր է պարզել, թե ով է միջազգային համակարգի «Հերակլեսը»:

«ЛЕРНЕЙСКАЯ ГИДРА» ТЕРРОРИЗМА

Янос Хараламбидис

Резюме

Турция стоит перед сложнейшей дилеммой: как нужно поступить в курдском вопросе и как его решить. ИГИС и терроризм в целом свойственны системе международных отношений, эти явления, в частности, выявляют хаотическую сущность и перипетии взаимодействий между совпадающими и противоречивыми национальными интересами. ИГИС и терроризм – это не мифы, а реальность, в которой воплотилась мифологическая «лернейская гидра». Следовательно, необходимо выяснить, кто является «Гераклом» международной системы.

THE LERNAEAN HYDRA OF TERRORISM

Yiannos Charalambides

Resume

Turkey faces difficult dilemmas about how to deal with the Kurdish problem and what solution should be given to it. ISIS and terrorism are phenomena generally inherent to the functioning of the international system, which particularly uncover its chaotic character and swinging between conflicting and convergent national interests. Terrorism and ISIS is not a myth, but a reality in which the mythic monster Lernaean Hydra is incarnated. Therefore, what needs to be found out is who the “Hercules” of the international system is.

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄԻ ԵՎ ԴԻԼԵՏԱՆՏԻԶՄԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Արման Նավասարդյան*

Բանալի բառեր ՝ պրոֆեսիոնալիզմի և դիլետանտիզմի անհամատեղելիություն, գաղափարախոսական-դասակարգային դիվանագիտություն, նոմենկլատուրային նշանակում, դիլետանտ դեսպանի սայթաքում, դիվանագետը և սակրավորը սխալվում են մեկ անգամ:

Մարդկային գործունեության բոլոր բնագավառներում առկա են պրոֆեսիոնալներ և դիլետանտներ (սիրողներ), որոնց միջև մշտապես ընթանում է խուլ կամ բացահայտ պայքար, որը հաճախ փոխակերպվում է նախանձի ու թշնամանքի: Ապացուցված է, որ, եթե զանազան ուղիներով տվյալ ոլորտում բույն դրած դիլետանտին անգամ հաջողվում է հասնել կարիերայի բարձունքների, ի վերջո, նրա ներկայությունը տվյալ բնագավառում անպայմանորեն վնաս է հասցնում պետության հետաքրքրություններին ու շահերին:

Այս երևույթը ցայտուն կերպով հանդես է գալիս դիվանագիտության մեջ, որը մագնիսի նման ձգում է շատերին, այդ թվում դիլետանտներին: Մինչդեռ ապացուցված է, որ համապատասխան պրոֆեսիոնալ կրթություն չունեցող անձանց բարոյակամային հատկանիշներն ու խառնվածքն անգամ անհարիր են դիվանագիտությանը: Դիվանագիտականության «աշխարհ» մտնելու ձգտումը բացատրվում է նրանով, որ լինելով գործունեության փակ և երբեմն անհիմն քողարկված ոլորտ՝ այն շարժում է մարդկանց հետաքրքրությունը, որոնք, դատելով իրենց հասանելի ինֆորմացիայի աղբյուրներից, միանգամայն թյուր կարծիք են կազմում դիվանագիտության մասին՝ նույնացնելով այդ դժվարին, մտավոր և բարոյական լարվածություն, բարձր պա-

* Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, Արտակարգ և լիազոր դեսպան:

տասխանատվություն պահանջող աշխատանքը անհոգ, գեղեցիկ, մի փոքր արկածախնդրային և ռոմանտիկայով լի կյանքի հետ: Մյուս գործոնը, որը դիվանագիտությանը հաղորդում է ձգողականություն, այն է, որ դիվանագետները համարվում են հասարակության ընտրյալները, նրա սերուցքը, էլիտար խավը: Ճիշտ է, այդ համարումը ժամանակ առ ժամանակ փոխվել է հեղափոխությունների և հասարակության փոփոխությունների ընթացքում, սակայն դիվանագետները բոլոր ժամանակներում դիտվել են որպես առանձնահատուկ, այլ մասնագետներից տարբերվող մարդիկ, ինչն, ի դեպ, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Իսկ եթե վերցնելու լինենք նորանկախ պետությունները, որոնք գոյացել են տոտալիտար ռեժիմների փլատակների վրա, օրինակ, ԱՊՀ երկրները, ապա վերը նշված հետաքրքրություններին ավելանում են ևս մի քանիսը՝ պայմանավորված տեղական առանձնահատկություններով, տվյալ երկրների պատմական անցյալով և սովորույթներով: Խնդիրն այն է, որ անկախացած երկրները, մինչ այդ զրկված լինելով միջազգային իրավունքի սուբյեկտ լինելուց, դառնալով ինքնիշխան՝ շտապում են օգտվել ընձեռված հնարավորություններից, որոնց մեջ առաջնայինը դիվանագիտությունն է: Արդյունքում՝ Հայաստանն, օրինակ, այնքան միջազգայնագետ և դիվանագետ է պատրաստում, որ եթե դեսպանություններ բացվեն աշխարհի բոլոր 200 պետություններում, ապա դարձյալ կլինի դիվանագետների անգործություն: Կադրերի նման մասսայական, հախուռն «արտադրությունը», բնականաբար, ազդում է որակի վրա, քանի որ դիվանագետների ուսուցման գործում հարգի են առանձին, անհատական, ընտրովի մեթոդիկան ու մեթոդոլոգիան: Դիվանագիտության ձգողականության մյուս երևույթն ավելի հոգեբանական, քան քաղաքական երևույթ է: Երկաթյա վարագույրի պայմաններում մարդկանց արտասահման մեկնելու հազվագյուտ հնարավորություններից մեկն էլ դիվանագիտական անձնագիր ունենալն էր, մինչդեռ այսօր երկրից դուրս գալու համար կան շատ այլ, թերևս՝ ավելի հեշտ ու շահեկան միջոցներ: «Նոր» շրջանի դիվանագիտության մեջ պրոֆեսիոնալ (կարիերային) դիվանագետներին արտաքին քաղաքականությունից դուրս մղելու և դիլետանտների առաջ կանաչ լույս վառելու գործընթացում աչքի ընկան բոլշևիկները, որոնք հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլոր մասնագետներին վտարեցին աշխատանքից, քանի որ այն կարծիքին էին, թե սոցիալիստական հեղափոխությունը արագ հաղ-

թելու է ողջ աշխարհում, իսկ անդասակարգ հասարակությունում դիվանագիտությունն անիմաստ շռայլություն կլիներ: Այս տրամաբանության հետևանքով Լև Տրոցկին նշանակվեց արտաքին գործերի կոմիսար (նախարար), որի համար դիվանագիտությունը և ռազմական գործը հոմանիշներ էին, ասել կուզի՝ միջպետական հարաբերություններում փոխզիջումը բացառված էր: Սակայն Բրեստ-Լիտովսկի խայտառակ բանակցություններից հետո, միջազգային շրջափակման պայմաններում բոլշևիկները ստիպված եղան ձեռնամուխ լինել դիվանագիտական ծառայության ստեղծման գործին՝ առաջնորդվելով, սակայն, կուսակցական-գաղափարախոսական անզիջում սկզբունքներով: Խորհրդային դիվանագիտությունն ընդհուպ մինչև համակարգի փլուզումը պահպանեց այս ուղղվածությունը՝ հավատարիմ մնալով Լենինի այն ցուցումին, որ *ՀԿԻԴ*-ը՝ ԱԳՆ-ն, Ռուսաստանի ամենակուսակցական օրգանն է: Տրոցկիստկան դիվանագիտության տապալումից հետո արտաքին գործերի կոմիսար նշանակվեց տաղանդավոր դիվանագետ Գեորգի Չիչերինը, արտասահմանից աշխատանքի հրավիրվեցին վտարանդիության մեջ գտնվող հեղափոխականներ Մ.Լիտվինովը, Իվան Մայսկին և ուրիշներ, որոնք, չլինելով կարիերային դիվանագետներ, ունեին կրթական բարձր մակարդակ, կյանքի փորձ, տիրապետում էին օտար լեզուների և կարող էին օգտակար լինել որակյալ դիվանագիտական դպրոց ստեղծելու գործում, եթե ստալինյան ռեժիմը նրանց վստահեր և հալածանքների չենթարկեր: 1939թ. արտաքին գործերի կոմիսար նշանակվեց Վ.Մ. Մոլոտովը, որի օրոք կատարվեց կադրային «մաքրում» («чистки»), իսկ Նարկոմատը երեք անգամ վերակազմավորվեց, 2-2,5 հազար դիվանագետ, 7 կոմիսարի տեղակալ, 40 պոլպրեդ (դեսպան) ենթարկվեցին բռնաճնշումների, իսկ նրանց փոխարեն աշխատանքի ներգրավվեցին կուսակցական-կոմերիտական ակտիվիստներ արդյունաբերությունից՝ այսպես կոչված «մոլոտովյան կոչով» [1, c. 449]:

Խորհրդային դիվանագիտությունն ի սկզբանե եղել է գաղափարախոսական, կուսակցական և դասակարգային: Այս պոստուլատներից Մոսկվան երբեք չի հրաժարվել: Պարզապես Երկրորդ համաշխարհային պատերազմից և Ստալինի մահից հետո ոչ պրոֆեսիոնալ դիվանագետների ներգրավումը ԱԳՆ (1946թ. *ՀԿԻԴ*-ը վերանվանվեց ԱԳՆ՝ արտաքին գործերի նախարարություն) նկատելիորեն նվազեց: Ի տարբերություն հեղաշրջումից հետո գործարաններից և բանակից դիվանագիտական կադրերի հավաքագրման, նորա-

ստեղծ Դիվանագիտական ակադեմիայում (1944թ.) բացվեցին կարճատև 1-3-ամսյա դասընթացներ կուսակցական-կոմերիտական նոմենկլատուրայի համար: Այդ դասընթացներն ավարտողները, այդպես էլ չտիրապետելով կամ վատ տիրապետելով օտար լեզուներին ու դիվանագիտության հիմունքներին, նշանակում էին ստանում արտասահմանյան ներկայացուցչություններում՝ բավական բարձր դիվանագիտական պաշտոններով (1-ին քարտուղար, խորհրդական): Այս կարգի դիվանագետները, գրեթե առանց բացառության, մնում էին օտար «մարմիններ», «բալաստ» օպերատիվ-վերլուծական աշխատանքի համար, զբաղվում էին ներդեսպանական կուսակցական, հասարակական կամ վարչական գործունեությամբ՝ շարունակելով այն հայրենիք վերադառնալուց հետո, ԱԳՆ համապատասխան ստորաբաժանումներում: Նոմենկլատուրային, հապճեպ կրթություն ստացած կադրերը, չհաշված հազվագյուտ բացառությունները, ողջ կյանքում մնում էին դիլետանտներ: Նրանց և պրոֆեսիոնալ դիվանագետների միջև գոյություն ուներ նկատելի անտագոնիզմ, որը սրվում էր արտասահմանյան պայմաններում: Կարիերային դիվանագետները հակակրում էին դիլետանտներին և նրանց հանդեպ վատ թաքցված արհամարհանք ունեին: Նույնը կարելի է ասել դիվանագետների և արտասահմանյան մեկ այլ համակազմի՝ հետախույզների հարաբերությունների մասին, որոնք երբեք հաշտ ու հարթ չեն եղել: Կուսակցական, այլ կերպ ասած՝ ոչ պրոֆեսիոնալ կադրերի նշանակումները, երբ բարձրաստիճան քաղաքական և պետական գործիչները գործուղվում էին արտասահման, ունեին երկու պատճառ.

1. զանցառու բարձրաստիճան չինովնիկը մեկուսացվում էր «մեծ քաղաքականությունից» և «արտաքսվում» էր արտասահման (օրինակ, երբ Վ.Մոլոտովը հայտարարվեց «ժողովրդի թշնամի», նշանակվեց դեսպան Մոնղոլիայում),
2. քաղաքական կամ կուսակցական գործչին խրախուսանքի կարգով շնորհում էին դեսպանի աստիճան և գործուղում արտասահման:

Այս կարգի նշանակումները հիմնականում լինում էին սոցիալիստական ճամբարի կամ խորհրդային ուղղվածություն ունեցող երրորդ աշխարհի պետություններում: Կապիտալիստական զարգացած երկրներում, որպես կանոն, աշխատում էին փորձառու պրոֆեսիոնալներ: ԽՍՀՄ փլուզումից հետո

Ռուսաստանը կարծես թե հրաժարվում է դիլետանտիզմի վնասաբեր պրակտիկայից և նախապատվությունը տալիս է պրոֆեսիոնալներին:

Դիվանագիտության մեջ դիլետանտիզմի առաջամարտիկը, սակայն, ոչ թե Ռուսաստանն է, այլ ԱՄՆ-ը, «որտեղ XIX դարում արտասահմանյան ներկայացուցչությունները գտնվում էին ոչ պրոֆեսիոնալների ձեռքում: Գերակայում էր *«spoil system»* - «փչացած համակարգը», որի պայմաններում մի շարք արտասահմանյան ներկայացուցչությունների ղեկավար պաշտոնները բաշխվում էին հաղթած նախագահի հովանավորների միջև» [2, c. 11]: Նեպոտիզմի արատավոր պրակտիկան, երբ հաղթանակած նախագահը դիվանագիտական պաշտոններ է բաժանում իր շրջապատին, ամերիկյան դիվանագիտության մեջ գագաթնակետին հասավ 30-ական թթ. սկզբին, նախագահ Հերբերտ Հուվերի օրոք, որը պնդում էր պետական բարձրաստճան պաշտոններում, այդ թվում դեսպանների պաշտոններում, նշանակել բիզնեսմենների, որոնց նա ընտրել էր առևտրի նախարար աշխատելու տարիներին: Մեր օրերում ևս Միացյալ Նահանգներում եզակի չեն դիլետանտներին դեսպաններ նշանակելու դեպքերը. Բիլ Քլինթոնն իր «մոտ» մարդուն որպես դեսպան ուղարկում է Փարիզ, հետո նույն պաշտոնին Բուշ-կրտսերը նշանակում է փայտի արտադրության մագնատի, որը մեծ գումար էր տրամադրել նրա ընտրարշավին, իսկ Մադրիդում դեսպան է դառնում անշարժ գույքի բիզնեսմենը, որը հանրապետական կուսակցության բյուջե է փոխանցել $200 մլն: Դեսպանի դիլետանտիզմը ոչ միայն հակադարձ համեմատական է դիվանագիտության բոլոր գրված և չգրված կանոններին, այլև կարող է լուրջ վնաս հասցնել նրա երկրին: Դա նկատի ունի Հենրի Քիսինջերը, երբ մեկնաբանում է Մոսկվայում Վաշինգտոնի դեսպան Ժոզեֆ Է. Դևիսի գործունեությունը՝ փաստորեն մեղադրելով նրան դիվանագետի լոյալությունը կորցնելու մեջ, և լոկալիտիսի երևույթը, որը փաստորեն նշանակում է դեսպանընկալ երկրի շահերը գերադասել սեփական երկրի շահերից: «Դա Ժոզեֆ Է. Դևիսն էր, պատերազմից առաջ դեսպանը Մոսկվայում, որը «Առաքելություն Մոսկվայում» բեսթսելերի հեղինակն էր: Եվ չնայած Դևիսը ներդնող բանկիր էր, այսինքն՝ արխիկապիտալիստ էր կոմունիստների աչքում, բայց ուներ ամերիկյան շատ դեսպանների այն հակումները, որոնք չեն պատկանում կարիերային դիվանագետների թվին և դառնում են հավատարմագրված երկրների ինքնակոչ քարոզիչներ: Դեսպանի արկածները նկարագրող Դևիսի գիրքը

թութակի նման կրկնօրինակում էր սովետական պրոպագանդայի բոլոր թեզերը, ներառյալ զոհերի մեղավորությունը հաստատող ցուցադրական դատավարությունները»: «…Դնիսի կարծիքով՝ Արևելքի և Արևմուտքի միջև դիվանագիտական հարաբերությունները կմտնեն փակուղի, եթե չհենվեն Ստալինի բարի կամքի նկատմամբ հավատի վրա» [3, p. 430]: Ամերիկյան դիվանագիտության կադրային քաղաքականության համար, նշված արատներից բացի, հատկանշական է նրա քաղաքականացվածությունը. երկու հիմնական կուսակցություններին չպատկանող դիվանագետը դեսպան դառնալու շանսեր չունի: Դիվանագիտական *«spoil system»*-ի մեթոդ է կիրառել Սիլվիո Բեռլուսկոնին, չնայած իտալական օրենքն արգելում է դեսպան նշանակել ոչ պրոֆեսիոնալի: Առանձին դեպքերում նույնը կարելի է ասել Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մասին: Սակայն նույն Ֆրանսիան և Իտալիան ծայր աստիճան ժլատ են դեսպանի կոչում շնորհելու գործում: Քե դ'Օրսեում (Ֆրանսիայի ԱԳՆ) ներկայումս հաշվվում է դեսպանի դիվանագիտական աստիճան ունեցող 10, իսկ Ֆարնեզինայում (Իտալիայի ԱԳՆ)՝ 20 մարդ: Դիլետանտների օգտագործումը պետության դիվանագիտական ծառայությունում տարբեր կերպ կարող է ազդել տվյալ երկրի արտաքին քաղաքականության վրա՝ կախված նրա մասշտաբներից, ներուժից, համաշխարհային քաղաքականությունում նրա գրաված դիրքից ու հեղինակությունից: ԱՄՆ, Ռուսաստանի կամ Չինաստանի դիլետանտ դեսպանի վրիպումներն այլ պետությունների կողմից ընկալվում են մի կերպ, իսկ փոքր և միջին երկրների դիլետանտ դեսպանի սայթաքումներն ու սխալները՝ բոլորովին այլ կերպ: Աքսիոմատիկ ճշմարտություն է, որ հատկապես փոքր պետությունների դեսպանների սխալները չեն ներվում: Այնպես որ՝ ՀՀ դիվանագիտության մեջ մեծ թվով դիլետանտների օգտագործումը, կասկածից դուրս է, որ կարող է վնասակար հետևանքներ ունենալ հանրապետության ազգային ու պետական շահերի համար: Պատմությունը ցույց է տալիս, որ դիլետանտների և պրոֆեսիոնալների հարաբերակցությունն արտգործնախարարություններում փոփոխական են: Անգամ այն պետությունները, որոնց դիվանագիտական գերատեսչություններն ավանդականորեն հիմնականում կազմված են կարիերային դիվանագետներից, քաղաքական իրադրության կտրուկ փոփոխությունների դեպքում լայնորեն կիրառում են դեսպանների քաղաքական նշանակումներ: Ֆրանսիական և ռուսական հեղափոխություններից հետո այդ երկրների դի-

վանագիտական ծառայություններն ամբողջովին ձևափոխվեցին, ԽՍՀՄ փլուզումից հետո դեսպաններ նշանակվեցին այնպիսի քաղաքական և հասարակական գործիչներ, ինչպիսիք են Վ.Լուկինը (ԱՄՆ), Ա.Բովինը (Իսրայել), Վ.Կոստիկովը (Վատիկան) և այլն, որոնք, ի դեպ, արդարացրին այդ նշանակումները, սակայն, կրկնում ենք, դրանք առանձին դեպքեր են: Ընդհանրապես, բոլոր առաջատար և զարգացած երկրներում տեղի են ունենում դիվանագիտության կադրային խնդիրների շուրջ լուրջ բանավեճեր, արվում են դիլետանտիզմի բացառման անհրաժեշտության կոնկրետ առաջարկներ: Հենց Միացյալ Նահանգներում, որն ինչ-որ տեղ դիլետանտիզմի «կնքահայրն» է, անվանի գիտնականները և դիվանագետները մշտապես անդրադառնում են այդ կենսական կարևորություն ունեցող խնդրին, հանդես են գալիս *«American Diplomacy»* կամ *«Foreign Affairs»* ամսագրերում և տարբեր լսարաններում: Պետդեպարտամենտի փորձագետների հանձնաժողովը պարբերաբար հրապարակում է զեկուցագրեր այդ հարցի շուրջ կատարված հետազոտությունների վերաբերյալ: Պրոֆեսիոնալ-դիլետանտ քննարկումների ֆոնին հաճախ երևան են գալիս դեսպանի մասնագիտական և հոգեբանական հատկանիշների խնդիրները, որոնք պայմանավորված են հասարակության զարգացման կոնկրետ փուլի, պետության արտաքին քաղաքականության հարցերով և միջազգային հարաբերությունների կոնկրետ իրավիճակով: Միջնադարի դիվանագետի առաջ հետևյալ պայմաններն է դնում վենետիկցի դիվանագետ Օտավիանո Մաջին իր 1596թ. գրած «Դեսպանի մասին» գրքում: Դեսպանը պետք է լինի գիտնական-աստվածաբան, լավ իմանա Արիստոտելի և Պլատոնի աշխատությունները, դիալեկտիկայի կանոնների համաձայն կարողանա լուծել ցանկացած խնդիր: Դեսպանը պետք է լինի մասնագետ մաթեմատիկայի, ճարտարապետության, երաժշտության, ֆիզիկայի, քաղաքացիական և եկեղեցական իրավունքի բնագավառներում: Նա պետք է ազատ խոսի և գրի լատիներեն, իմանա հունարեն, իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն և թուրքերեն: Նա պետք է ունենա դասական կրթություն, իմանա պատմություն և աշխարհագրություն, լինի ռազմական գործի մասնագետ, ինչպես նաև պոեզիայի գիտակ: Բացի այդ, ամենից առաջ դեսպանը պետք է լինի ճանաչված անձնավորություն, հարուստ, արտաքինով՝ գրավիչ: Երբեմն դեսպանների համար պահանջվել են հատուկ որակներ: Օրինակ, արքայադուստր Ցերբսկայան՝ Եկատերինա Երկրորդի մայրը, Ֆրիդրիխ Մեծին ուղղված նա-

մակում պատվիրում է, որ Պետերբուրգ ուղարկվող դեսպանը լինի երիտասարդ, գեղեցիկ, ունենա լավ կառուցվածք: Իսկ Գերմանիայի և Հոլանդիայի դեսպաններից պահանջվում էր, որ նրանք կարողանան օգտագործել մեծ քանակությամբ ոգելից խմիչքներ [4]:

Հարոլդ Նիքոլսոնը թվարկում է մի քանի հատկանիշներ, որոնք մեծապես խոչընդոտում են դիլետանտների գործունեությանը՝ վնասելով նրանց կառավարությունների շահերին: Անվանի տեսաբանի դիտողություններն այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը: «Դիվանագետ-դիլետանտը,- գրում է նա,- հաճախ փառասիրությունից դրդված ձգտում է արագ հաջողության հասնել, մինչդեռ նա նոր է ժամանել այդ երկիր: Սեփական ուժերի նկատմամբ թերահավատության պատճառով նա կասկածամիտ է, չափից ավելի փութաջան, հակված է իրագործել «փայլուն» գաղափարներ: Նա դեռևս զուրկ է մարդկային համբերատարությունից և սկեպտիկ ներողամտությունից, որոնք ձեռք է բերվում դիվանագիտական երկարատև ծառայության հետևանքով, հաճախ է ընկնում ուրիշների համոզմունքների, պատահական իմպուլսների և համակրանքի ազդեցության տակ: Դիլետանտը հասկանալի արհամարհանքով է վերաբերվում դիվանագիտական արարողակարգին և անհամբերությամբ է նայում այդ պայմանականություններին, որի հետևանքով հաճախ վիրավորանք է հասցնում այնտեղ, որտեղ միայն ցանկանում էր բարեհոգություն դրսևորել: Իր զեկույցներում և հաղորդագրություններում շատ հաճախ ձգտում է ոչ այնքան խելամիտ ձևով ներկայացնել փաստերը, որքան՝ ցուցադրել իր հնարամտությունն ու գրական տաղանդը [4, c. 52]:

Եթե մի քանի տասնյակ տարի առաջ դիլետանտ դիվանագետի գործունեությունն ինչ-որ չափով ընդունելի էր, ապա այսօր միանշանակ կարելի է պնդել, որ այն անընդունելի է: Համաշխարհային քաղաքականության բարդությունը, միջազգային ասպարեզում տարբեր հետաքրքրությունների խաչաձևումը, արտաքին քաղաքականության փոփոխությունը, գլոբալացման նոր որակների երևան գալը վկայում են հենց պրոֆեսիոնալ դիվանագետների պահանջված լինելն ավելի, քան երբևիցե: «XX դարի վերջին - XXI-ի սկզբին աշխարհը դարձավ նկատելիորեն բարդ: Արտաքին քաղաքականության որոշումների դերը մեծացավ, իսկ սխալի գինը ոչ ճիշտ ընդունված որոշումների արդյունքում՝ աճեց: Յուրաքանչյուր նման որոշումից են կախված հա-

րյուր միլիոնավոր մարդկանց ճակատագրերը» [5, c. 55]: Եթե ավելի նեղացնելու լինենք «սխալի գինը» և պրոյեկտենք այն մեկ առանձին պետության վրա, ապա կարող ենք ասել, որ «դիվանագետը և սակրավորը սխալվում են ընդամենը մեկ անգամ» [6, էջ 155]:

Մարտ, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Внешняя политика России», Теория и практика, изд. «Книга и бизнес», М., 2013.
2. *Зонова Т.В.*, Дипломатия, Модели, формы, методы, изд. Аспект Пресс, М. 2013.
3. *Henry Kissinger*, Diplomacy.
4. *Никольсон Г.,* Дипломат, изд. Государсвенное издательство политической литературы, 1941.
5. Внешняя политика: вопросы теории и практики, Материалы научного семинара, изд. Университет, книжный дом, М. 2009.
6. *Նավասարդյան Ա.,* Հերմեսից մինչև մեր օրերը, հրատ. «Հայաստան», 2012:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄԻ ԵՎ ԴԻԼԵՏԱՆՏԻԶՄԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Արման Նավասարդյան

Ամփոփագիր

Դիվանագիտության ոլորտում տեղ գտած դիլետանտիզմը հակացուցված է պետության արտաքին քաղաքականությանը և վնասաբեր նրա պետական շահերին: Հեղափոխությունների և երկրների քաղաքական իրադրությունների կտրուկ փոփոխությունների պայմաններում, որպես կանոն, տեղի է ունենում ոչ պրոֆեսիոնալ մասնագետների ներհոսք դիվանագիտական համակարգ: Բացի այդ, նման գործընթացները հաճախ զուգակցվում են դիվանագիտական ծառայության կուսակցականացմամբ և քաղաքականացմամբ, ինչը տեղի ունեցավ 1917թ. ռուսական քաղաքական հեղաշրջումից հետո և շարունակվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը: Դիլետանտիզմի առկայությունը դիվանագիտության մեջ միջազգային երևույթ է: Այն հատուկ է անցյալ դարի երկրորդ կեսերի ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչության գործունեությանը ևս: Սակայն դիլետանտիզմն առանձնապես վտանգավոր է փոքր պետությունների համար: Ներկա գլոբալիզացիայի և նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացներում նկատելի է առաջատար երկրների դիվանագիտական ծառայություններից ոչ պրոֆեսիոնալ դիվանագետների արտամղման միտումը:

НЕСОВМЕСТИМОСТЬ ПРОФЕССИОНАЛИЗМА И ДИЛЕТАНТИЗМА В ДИПЛОМАТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ

Арман Навасардян

Резюме

Дилетантизм в дипломатической сфере противопоказан внешней политике и вреден для государственных интересов. В условиях революций и резких изменений политической ситуации, как правило, наблюдается приток непрофессиональных кадров в дипломатическую систему. Кроме того, подобные процессы сопровождаются партийной монополизацией и политизацией дипломатической службы, как это было после политического переворота в России в 1917 году и продолжалось до распада СССР. Дилетантизм в дипломатии – явление международное. Он был характерен и для деятельности внешнеполитического ведомства США во второй половине прошлого столетия. Однако для малых государств дилетантизм представляет особую опасность. В нынешних условиях глобализации и формирования нового миропорядка наблюдается тенденция оттока непрофессионалов из дипломатических служб ведущих стран мира.

THE INCOMPATIBILITY OF PROFESSIONALISM AND DILETTANTISM IN DIPLOMATIC PROCESSES

Arman Navasardian

Resume

Dilettantism in diplomacy is contraindicated for the government's foreign policy and it is detrimental to the state interests. As a rule, during revolutions and in conditions of dramatic changes of political situation of countries, an inflow of non-professionals into the diplomatic system occurs. In addition, such processes are often combined with politicization of diplomatic service, which happened after the Russian Revolution in 1917 and continued till the collapse of the USSR. The existence of dilettantism in diplomacy is an international phenomenon. It is also characteristic even to the US State Department's political affairs. However, dilettantism is especially dangerous for small countries. In the current process of globalization and formation of a new world order there is a noticeable trend of excluding non-professional diplomats from the diplomatic services of the leading countries.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արեստակես Սիմավորյան՝, Վահրամ Հովյան՝՝

Բանալի բառեր՝ հայագիտական կենտրոններ, հայագիտություն, Սփյուռք, համագործակցություն, աջակցություն։

Հայագիտական կենտրոնների խնդիրները

Այսօր արտերկրի հայագիտական կենտրոնների առջև լրջագույն խնդիրներ և մարտահրավերներ են կանգնած, որոնք ոչ միայն խոչընդոտում են նրանց բնականոն գործունեությանը, այլև սպառնալիքի տակ են դնում նրանց գոյությունը։ Այդ խնդիրներն ունեն ֆինանսական, կադրային, գիտահետազոտական և ուսումնական նյութերի անբավարարության, գործունեության չհամակարգվածության և այլ բնույթ։

Արտերկրի հայագիտական կենտրոնների ֆինանսական խնդիրները պատկերացնելու համար անհրաժեշտ է նախ անդրադառնալ դրանց ֆինանսավորման աղբյուրներին։ Արտերկրի հայագիտական կենտրոնները ֆինանսավորվում են հետևյալ հիմնական աղբյուրներից.

- Սփյուռքի համազգային կառույցներից (Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, ՀԲԸՄ և այլն)։
- Տեղի հայ համայնքներից։
- Հայաստանից՝ ՀՀ պետական բյուջեից։
- Այն գիտական և/կամ կրթական հաստատությունների բյուջեներից, որոնց մաս են կազմում։

Վերոհիշյալի հիման վրա արտերկրի հայագիտական կենտրոնների ֆինանսավորման աղբյուրները կարելի է բաժանել երկու մասի՝ հայկական և

՝ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար։
՝՝ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ։

օտարերկրյա: Հայկական աղբյուրներն են ՀՀ պետբյուջեն, սփյուռքյան համազգային կառույցները և տեղի հայ համայնքները: Օտարերկրյա ֆինանսավորման աղբյուրներն այն գիտական և/կամ կրթական հաստատությունների բյուջեներն են, որոնց մաս են կազմում հայագիտական կենտրոնները: Հաճախ լինում է նաև ֆինանսական աղբյուրների (այդ թվում նաև հայկական և ոչ հայկական) համադրություն:

Այսպիսով, արտերկրի հայագիտական կենտրոնների ֆինանսավորման աղբյուրները հիմնականում հայկական են՝ մեծ մասամբ ՀՀ և Սփյուռքի միջոցները: Իսկ Սփյուռքի և ՀՀ միջոցներն անսահմանափակ չեն: Ֆինանսական սղության պատճառով արտերկրի շատ հայագիտական կենտրոններ կանգնել են անգամ փակման սպառնալիքի առջև[1]:

Արտերկրի հայագիտական կենտրոնների հաջորդ կարևոր մարտահրավերը կադրային խնդիրն է: Հաճախ անհրաժեշտ կադրերի սղության կամ բացակայության պատճառով հայագիտական կենտրոնները չեն կարողանում լիարժեք իրականացնել իրենց գործառույթները, երբեմն մատնվում են անգործության, իսկ երբեմն էլ՝ կանգնում փակման սպառնալիքի առջև: Օրինակ՝ Երուսաղեմի եբրայական համալսարանի Հայագիտական ծրագիրը [1, էջ 100-101]: Այսպիսի խնդիրներ ունեն նույնիսկ Եվրոպայի հայագիտական կենտրոնները: Օրինակ՝ Իտալիայում, «երբ ամպիոնի մը վարիչը թոշակառու դարձաւ, անոր ամպիոնը ի վիճակի չեղաւ իր գործունէութիւնը շարունակել իբր բուն ամպիոն, փրոֆեսօր տիտղոսով» [2, էջ 40]:

Հաջորդ կարևոր խնդիրը գիտահետազոտական և ուսումնական նյութերի անբավարարությունն է: Գտնվելով Հայաստանից հեռու՝ արտերկրի հայագիտական կենտրոնները հաճախ բախվում են դասագրքերի, անհրաժեշտ գրականության, փաստաթղթերի, արխիվային և այլ նյութերի պակասի խնդրին:

Որպես հայագիտական կենտրոնների առջև ծառացած լուրջ խնդիր կարելի է մատնանշել նաև դրանց գործունեության անբավարար համակարգվածությունը: Միայն Եվրոպայում և ԱՄՆ-ում գործող հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների գործունեությունն է համակարգված: Այդ նպատակով 1981 թվականից Եվրոպայում գործում է Հայկական ուսումնասի-

[1] Տե՛ս, օրինակ, Вопрос существования отдела арменоведения германского «Freie Universitat Berlin» никак не удается решить, http://www.panarmenian.net/rus/details/44753/; *Սարուխանյան Ս. և ուրիշներ,* Հայությունն Իսրայելում. որոշ խնդիրներ, Երևան, 2009, էջ 100-101:

րությունների միջազգային ընկերակցությունը [2, էջ 36, 42-43]: ԱՄՆ-ում նույն նպատակով գործում են Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ընկերակցությունը (1955թ.) և Հայկական հետազոտությունների ընկերակցությունը (1974թ.): Վերջերս հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների գործունեությունը համակարգող կառույցի ստեղծման փորձեր են արվում նաև Ռուսաստանում[1]:

Եթե Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցությունը (Եվրոպա) տարածաշրջանային կամ միջազգային կառույց է, որը համակարգում է Եվրոպայի հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների գործունեությունը, ապա ԱՄՆ վերոհիշյալ հայագիտական ընկերակցությունները համապետական (ոչ տարածաշրջանային կամ միջազգային) կառույց են ներկայացնում, որոնց գործունեությունը տարածվում է մեկ երկրի՝ ԱՄՆ հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների վրա: Այդպիսին պետք է լինի նաև Ռուսաստանում ստեղծվելիք հայագիտական կենտրոնների և առանձին հայագետների գործունեությունը համակարգող կառույցը: Սա ինչ-որ տեղ բնական է, քանի որ ԱՄՆ-ը և Ռուսաստանը, լինելով հսկայական տարածությամբ և գիտական հաստատությունների մեծ ցանց ունեցող երկրներ, հայագիտական կենտրոնների քանակով ու տեղաբաշխվածությամբ հասնում են տարածաշրջանային կամ միջազգային մակարդակի:

Աշխարհի այլ երկրներում և տարածաշրջաններում, որտեղ գործում են հայագիտական կենտրոններ կամ քիչ թե շատ զարգացած է հայագիտությունը, հայագիտական կառույցների գործունեությունը համակարգող հաստատություններ չկան, ինչը նշանակում է, որ չկան նաև նրանց արդյունավետ փոխգործակցության և փոխօգնության մեխանիզմներ: Մինչդեռ համակարգված փոխգործակցությունը կարող է էապես բարձրացնել հայագիտական կենտրոնների գործունեության արդյունավետությունը:

Հարկ է նշել, որ, չնայած վերջին տարիներին գործադրված ջանքերին, գործունեության անբավարար համակարգվածության խնդիրն առկա է նաև հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև [3, էջ 84]: Մինչդեռ Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև համագործակցության խորացումն ու համակարգումը մեր օրերի հրամայականն են:

[1] Տե՛ս Մոսկվայում ստեղծվում է «Ռուսաստանի հայագետների ընկերությունը», http://hayernaysor.am/մոսկվայում-ստեղծվում-է-ռուսաստանի-h/

Խնդիրը բխում է արդի ժամանակաշրջանում ի հայտ եկած նոր իրողություններից.

1. *Ի դեմս ՀՀ-ի և ԼՂՀ-ի՝ Հայոց ազգային անկախ պետության վերածննդից,* որը հայության և նրա մտավոր ներուժի համախմբման ու զարգացման կենտրոնն է: Իսկ այդ գործում մեծ դերակատարում է վերապահված հայագիտությանը:
2. *Ներկայումս հայության առջև ծառացած նոր մարտահրավերներից:* Արդի աշխարհում առաջացած նոր իրողությունները՝ աշխարհի հայահոծ շրջաններում անկայունության և պատերազմական իրավիճակների առաջացումը, ահաբեկչության ծավալումը, տեղեկատվական պատերազմների թեժացումը, Հայաստանի նկատմամբ թուրք-ադրբեջանական ագրեսիվ քաղաքականությունը և այլն, հարկադրում են հայությանը համախմբել իր ներուժը (այդ թվում նաև մտավոր) ազգային պետության շուրջ:

Հասկանալի է, որ արտերկրի հայագիտական կենտրոնների առջև ծառացած կադրային և այլ խնդիրները հաճախ ծագում են ֆինանսական խնդիրներից: Ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով է, որ հաճախ հայագիտական կենտրոնները լուրջ խնդիրներ են ունենում իրենց կադրերին պահելու, նոր կադրեր ներգրավելու, անհրաժեշտ գրականության, նյութերի ձեռքբերման և այլ հարցերում:

Խնդիրների լուծման ուղիները

Կարելի է նշել վերոհիշյալ խնդիրների լուծման երկու ուղի՝ Հայաստանի հետ կապերի ու համագործակցության խորացում և կազմակերպական մակարդակի բարձրացման միջոցով հայագիտական կենտրոնների գործունեության համակարգում:

Ակնհայտ է, որ առանց Հայաստանի հետ համագործակցության՝ արտերկրի հայագիտական կենտրոնների համար խիստ դժվար կլինի բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը:

Արտերկրի հայագիտական կենտրոնների հետ համագործակցող հայաստանյան կառույցներն են.

- պետական գերատեսչությունները՝ ի դեմս Սփյուռքի նախարարության, Կրթության և գիտության նախարարության, Արտաքին գործերի նախարարության և այլն,
- գիտակրթական հաստատությունները՝ ԵՊՀ (Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, պատմության ֆակուլտետ, բանասիրության ֆակուլտետ և այլն), Մատենադարան, ԳԱԱ (Պատմության ինստիտուտ, Արևելագիտության ինստիտուտ և այլն), «Նորավանք» ԳԿՀ և այլն։

Արտասահմանյան հայագիտական կենտրոնների առջև ծառացած ամենամեծ մարտահրավերը ֆինանսական միջոցների սղությունն է, որից էլ ածանցվում են մյուս խնդիրները։ Ֆինանսական խնդիրների լուծման աջակցությունն ակնկալվում է այդ կենտրոնների և Հայաստանի համագործակցության ենթատեքստում։ Հայաստանի Հանրապետությունն իր սուղ հնարավորություններով առ այսօր հնարավորին չափով ֆինանսապես աջակցել է արտերկրի հայագիտական կենտրոններին։ Դա իր դրսևորումն է ստացել ՀՀ Սփյուռքի նախարարության և արտերկրի հայագիտական կենտրոնների կողմից համատեղ իրականացված բազմաթիվ ծրագրերում, ինչպիսիք են.

1. *Ֆինանսավորումը՝ հայկական ժառանգության պահպանման նպատակով։* Սա ՀՀ-ից արտերկրի հայագիտական կենտրոններին ֆինանսական աջակցության ամենաակնառու դրսևորումն է։ Այս առումով ուշագրավ է ՀՀ պետբյուջեից 100.000 եվրոյի հատկացումը՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում և գրադարանում պահվող շուրջ 3.000 ձեռագրերի, 200.000 հնատիպ գրքերի և 18-րդ դարից մինչև օրս հավաքված դիվանագիտական և այլ փաստաթղթերի թվայնացման նպատակով։ ՀՀ Սփյուռքի նախարարության և Երևանի Մատենադարանի աջակցությամբ ներկայումս ընթացքի մեջ են նաև Զմմառի Պատրիարքական միաբանության մատենադարանում պահվող հայկական ձեռագրերի թվայնացման, հաշվառման, մատենագրման և հրապարակման աշխատանքները [3, էջ 82-83]։
2. *Աջակցություն գիտաժողովների կազմակերպմանը։* Օրինակ՝ 2011թ. ՀՀ Սփյուռքի նախարարությունը Վենետիկի Մխիթարյան միաբանության հետ կազմակերպել է «Հայ գրքի հետքերով» գիտաժողովը։ Սփյուռքի նախարարությունը, համագործակցելով հայաստանյան և արտերկրի

հայագիտական կենտրոնների հետ, կազմակերպել է նաև հայագիտական բազմաթիվ գիտաժողովներ, ինչպիսիք են՝ «1946-48թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր», «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» և այլն:

3. *Աջակցություն ցուցահանդեսների կազմակերպմանը:* Այս առումով նշանավոր է, օրինակ, հայ տպագրության 500-ամյա հոբելյանին նվիրված հայկական տպարանների մնայուն ցուցահանդեսը Վենետիկի Սուրբ Ղազար կղզում: Կամ 2012թ. նոյեմբերի 26-28-ը ՀՀ Սփյուռքի նախարարության և Զմմառի միաբանության համագործակցությամբ կազմակերպված՝ միաբանությունում պահվող հայկական ձեռագրերի և հնատիպ գրքերի ցուցահանդեսը:
4. *Հայագիտական կենտրոններում կատարվող արժեքավոր հետազոտությունների հովանավորում:* Այս առումով հետաքրքիր օրինակ է ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից Վենետիկի Մխիթարյան միաբանության Ընդհանուր աթոռակալի տեղապահ, հայր Վահան ծ. վրդ. Օհանյանի և Ոսկան Մխիթարյանի հեղինակած «Հայերը Օսմանյան կայսրության վերջալույսին» աշխատության հովանավորումը:

Այսպիսով, ՀՀ Սփյուռքի նախարարության հովանավորությամբ արտերկրի հայագիտական կենտրոնների կողմից իրականացվել է մեծածավալ աշխատանք՝ կազմակերպվել են գիտաժողովներ և ցուցահանդեսներ, հրատարակվել են արժեքավոր աշխատություններ: Սակայն ակնհայտ է, որ արտերկրի հայագիտական կենտրոնների ֆինանսական խնդիրների լուծումը մեծապես կապված է Հայաստանի տնտեսական զարգացման և, հետևաբար, վերջինիս ֆինանսական հնարավորությունների մեծացման հետ:

Բացի ֆինանսական աջակցությունից, Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև համագործակցության՝ ներկայումս հնարավոր այլ եղանակներն են.

- *Մեթոդաբանական աջակցություն:* Համագործակցության սույն ձևը վերաբերում է փոխադարձ աջակցությանը կուտակված փորձի փոխանակման միջոցով: Հայաստանի հայագիտական կենտրոններն իրենց երկար-

ամյա աշխատանքի ընթացքում կարողացել են կուտակել հսկայական փորձ թե՛ հետազոտական աշխատանքի, թե՛ ուսումնական գործունեության, թե՛ գիտաուսումնական աշխատանքի կազմակերպման և թե՛ այլ բնագավառներում: Այդ փորձը կարող է ուսանելի լինել արտերկրի հայագիտական կենտրոնների համար: Խոսքն, իհարկե, չի վերաբերում Հայաստանի հայագիտական կենտրոնների փորձի մեխանիկական ընդօրինակմանը: Դա կարող է արդյունավետ չլինել՝ հաշվի առնելով հայաստանյան և արտասահմանյան հայագիտական կենտրոնների գործունեության պայմանների և այլ հանգամանքների տարբերությունը: Խոսքն ավելի շուտ սեփական գործունեության մեջ հայաստանյան հայագիտական կենտրոնների փորձը հաշվի առնելու մասին է: Այս առումով խորհրդատվությունների միջոցով հայաստանյան հայագիտական կենտրոնների մեթոդաբանական աջակցությունն արտերկրի հայագիտական կենտրոններին կարող է նպաստել վերջիններիս խնդիրների լուծմանը և գործունեության արդյունավետության բարձրացմանը:

- *Ուսումնական և հետազոտական նյութերի տրամադրում*: Ինչպես վերը նշվեց, արտերկրի հայագիտական կենտրոնների հիմնական խնդիրներից մեկն էլ հետազոտական և ուսումնական նյութերի անբավարարությունը կամ պակասն է: Հայագիտական կենտրոնները Հայաստանում այս առումով գտնվում են համեմատաբար բարվոք պայմաններում: Նախ՝ հայ ժողովրդի պատմական հայրենիքը և ազգային պետությունը լինելու բերումով Հայաստանում է կենտրոնացված հայագիտական արժեք ներկայացնող հետազոտական նյութերի մեծ մասը: Դրանք պահվում են այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են Հայաստանի ազգային արխիվը, Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանը, Պատմության և այլ թանգարանները, ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը և այլն: Չենք խոսում այն մասին, որ Հայաստանի պատմամշակութային հուշարձանները, առանձին վայրերն ինքնին հետազոտության ենթակա հայագիտական նյութ են հանդիսանում: Բացի այդ, Հայաստանում է ամենաշատը ստեղծվում հայագիտական նշանակություն ունեցող գրականությունը՝ ի դեմս հետազոտական աշխատությունների, ուսումնական ձեռնարկների և այլն: Եվ Հայաստանի հայագիտական կենտրոններն

իրենց ունեցած հետազոտական նյութերը, իրենց ստեղծած և ձեռք բերած գրականությունը կարող են տրամադրել նաև արտերկրի հայագիտական կենտրոններին՝ նրանց հետազոտական նյութերի և անհրաժեշտ գրականության անբավարարության խնդիրը թեկուզ մասնակիորեն լուծելու նպատակով: Ի դեպ, այս հարցում ժամանակակից տեխնիկական միջոցները կիրառման մեծ տեղ ունեն: Մասնավորապես, անհրաժեշտ գրականությունը կարող է տրամադրվել ոչ միայն տպագիր, այլև էլեկտրոնային տարբերակով: Կամ՝ հայագիտական այն նյութերը, որոնք ենթակա չեն հանրապետության տարածքից դուրս բերվելու (օրինակ՝ ձեռագիր մատյանները), կարող են տրամադրվել արտերկրի հայագիտական կենտրոններին թվայնացված ձևով՝ էլեկտրոնային տարբերակով: Այդ խնդիրը կարելի է լուծել ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների լայն կիրառման միջոցով:

- *Համատեղ հետազոտություններ:* Գիտական կառույցների միջև համագործակցության սույն ձևն ամենատարածվածներից է արդի աշխարհում: Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնները կարող են համատեղ հետազոտություններ իրականացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաների և խնդիրների շուրջ: Ջանքերի նման համատեղումը կնպաստի հայագիտական կենտրոնների գործունեության արդյունավետության բարձրացմանը, քանի որ կկատարվեն որևէ կոնկրետ նպատակի (ի դեմս հետազոտության) շուրջ ռեսուրսների համախմբում և փոխլրացում: Բացի այդ, դա կնպաստի նաև հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև կապերի ընդլայնմանն ու խորացմանը:

Հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոններն ունեն համատեղ հետազոտությունների որոշակի փորձ: Ուշագրավ է, օրինակ, Բեյրութի Համազգային հայ կրթական և մշակութային միության Հայագիտական բարձրագույն հիմնարկի և ԵՊՀ համագործակցության անմիջական արդյունք հանդիսացող, 1998թ. Բեյրութում հրատարակված «Հայոց պատմություն (սկզբից մինչև մ.թ. 1 թվականը)» դասագիրքը, որը հայոց պատմության միասնական դասագիրք ստեղծելու առաջին փորձն էր և համապատասխանում էր Լիբանանի հայկական դպրոցների ուսումնական ծրագրերին [4, էջ 25]:

- *Համատեղ գիտաժողովներ:* Արտերկրի և հայաստանյան հայագիտական կենտրոնների միջև կապերի և համագործակցության ամրապնդման գործուն ձևերից մեկն էլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ համատեղ գիտաժողովների կազմակերպումն է, ինչը նույնպես ժամանակակից աշխարհում գիտական հաստատությունների միջև համագործակցության ամենատարածված և արդյունավետ մեխանիզմներից մեկն է: Համատեղ գիտաժողովների կազմակերպման միջոցով արտերկրի և հայաստանյան հայագիտական կենտրոնները ռեսուրսների փոխլրացման միջոցով կկարողանան համատեղ ուժերով հասնել ընդհանուր խնդիրների լուծմանը: Ընդ որում՝ համատեղ գիտաժողովների կազմակերպման շրջանակներում նույնպես կարող են լայնորեն կիրառվել ժամանակակից հեռահաղորդակցային տեխնոլոգիաները՝ էապես նվազեցնելով տարածական հեռավորությունից բխող խնդիրները: Խոսքն առաջին հերթին վերաբերում է առցանց գիտաժողովների, աշխատաժողովների, դասախոսությունների կազմակերպմանը:
- *Հետազոտությունների պատվիրում:* Արտերկրի հայագիտական կենտրոններին համազգային նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը ներգրավելու արդյունավետ միջոցներից կարող է լինել Հայաստանից՝ պետական մարմինների, հայագիտական կենտրոնների և այլ հաստատությունների կողմից, նրանց այնպիսի հետազոտությունների պատվիրումը, որոնք հայության համար այժմեական են, ինչպես նաև գիտական նորույթ (ակադեմիական և կիրառական) են պարունակում: Այդպիսի հետազոտութուններ իրականացնելու համար արտերկրի հայագիտական կենտրոնները պետք է ունենան համապատասխան ներուժ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է անհրաժեշտ քանակությամբ մասնագետների, գիտահետազոտական նյութերի և այլնի առկայությանը:
- *Հրատարակությունների փոխանակում:* Փոխադարձ ճանաչողության խորացման, միմյանց գիտական և այլ նվաճումներին, խնդիրներին ու մարտահրավերներին հասու լինելու արդյունավետ միջոցներից է հրատարակությունների փոխանակումը հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև: Խոսքը թե՛ էլեկտրոնային, թե՛ տպագիր հրատարակությունների մասին է: Էլեկտրոնային հրատարակությունների առումով փոխանակման ձևերից են համացանցային բաններների

(*banner*) տեղադրումը միմյանց կայքերում, էլ. փոստի միջոցով հրատարակությունների (առանձին հոդվածներ, զեկույցներ, ամսագրերի, մենագրությունների և այլնի էլեկտրոնային տարբերակներ) առաքումը միմյանց և այլն: Տպագիր հրատարակությունների առումով խոսքը հայագիտական կենտրոնների հրատարակած պարբերական հանդեսների (գիտական, վերլուծական), անհատական և կոլեկտիվ հետազոտությունների և այլնի փոխանակման մասին է:

- *Մասնագետների փոխանակում:* Համագործակցության սույն եղանակը ենթադրում է հայագիտական մի կենտրոնից մասնագետների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործուղումներ մեկ այլ կենտրոն՝ գիտահետազոտական, ինչպես նաև ուսումնական նպատակներով, և հակառակը: Այս եղանակը նույնպես կարևոր նշանակություն ունի փորձի (գիտահետազոտական աշխատանքի, մանկավարժության, ուսուցման մեթոդիկայի և այլն) փոխանակման միջոցով փոխհարստացման տեսանկյունից: Մասնագետների փոխանակումը կարևոր նշանակություն ունի ինչպես հայագիտական կենտրոնների գործունեությանը նոր լիցք հաղորդելու, այնպես էլ առանձին մասնագետների մասնագիտական աճի տեսանկյունից: Հայտնվելով գիտահետազոտական և ուսումնական աշխատանքի նոր միջավայրում, շփվելով նոր կադրերի հետ, ինչպես նաև հասու լինելով մինչ այդ իրենց համար անհասանելի գիտահետազոտական նյութերին (արտերկրի կամ Հայաստանի հայագիտական կենտրոններում պահվող ձեռագրեր, հնատիպ գրքեր և այլ հրատարակություններ, արխիվային փաստաթղթեր, թանգարանային նմուշներ և այլն), մասնագիտական գրականությանը և այլն՝ գործուղված մասնագետները կբարձրացնեն իրենց մասնագիտական պատրաստվածության աստիճանը, կհարստացնեն գիտելիքները, կտիրապետեն գիտահետազոտական և ուսումնական աշխատանքի նոր մեթոդների: Դա էլ, իր հերթին, կնպաստի նրանց կենտրոնների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, քանի որ, վերադառնալով իրենց կենտրոններ, գործուղված մասնագետները կկիրառեն ձեռք բերած գիտելիքներն ու փորձն իրենց կենտրոններում՝ տարածելով դրանք նաև իրենց գործընկերների շրջանում:

- *Համատեղ հրատարակությունների հիմնում:* Հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոններն իրենց համագործակցությունն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու նպատակով կարող են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմատիկայի վերաբերյալ (ինչպիսիք են, օրինակ, ցեղասպանագիտությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման, հատուցման, հետևանքների վերացման հարցը, արդի Հայկական սփյուռքը և այլն) հիմնել ամսագրեր, տարեգրքեր, համացանցային կայքեր և այլն:

Համագործակցության այս միջոցների կիրառումն ունի փոխշահավետ նշանակություն, քանզի նպաստում է կողմերի հարստացմանը՝ փորձով, գիտելիքներով, նոր մեթոդներով և այլն: Հետևաբար, համակարգված փոխգործակցությունն անհրաժեշտություն է ոչ միայն արտերկրի, այլև հայաստանյան հայագիտական կենտրոնների համար [5, էջ 51]: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, վերոհիշյալ և այլ[1] եղանակներով համագործակցությունը կարող է բարձրացնել Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների փոխադարձ ճանաչողության մակարդակը, նպաստել նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, միմյանց խնդիրների համատեղ լուծմանը, համազգային խնդիրների լուծման գործում նրանց ջանքերի համադրմանը և այլն:

Համագործակցության վերոնշյալ եղանակներն առկա են Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների հարաբերություններում: Ուշագրավ է, օրինակ, 2009թ. հոկտեմբերի 3-ին Բեյրութի Հայկազյան համալսարանի և ԵՊՀ-ի միջև ստորագրված համագործակցության պայմանագիրը, որում, մասնավորապես, ասվում է. «Երկու համալսարաններն, ընդունելով, որ ակադեմիական և գիտական հետազոտական նպատակների համար գործակցությունն անփոխարինելի ազդակ է երկուստեք զարգացման համար, հանձն են առնում ըստ կարիքի և հնարավորության պայմաններ ստեղծել իրենց աշխատակիցների, մասնագետների, ուսանողների և հրատարակությունների փոխանակության համար» [6, էջ 18]: Խնդիրը ներկայումս այդ եղանակների համակարգումն է[2], զարգացումը և խորացումը:

[1] Թվարկված եղանակները չեն սպառում Հայաստանի և արտերկրի հայագիտական կենտրոնների միջև համագործակցության ողջ հնարավորությունը և, հետևաբար, չեն բացառում համագործակցության այլ ձևեր:

[2] Տարերայնությունից և պահի թելադրանքով պայմանավորված քայլերից խուսափելու նպատակով:

Արտերկրի հայագիտական կենտրոնների առջև ծառացած խնդիրների լուծման միջոցներից մեկն էլ նրանց գործունեության համակարգման արդյունավետ մեխանիզմների ստեղծումն է: Այս խնդրի լուծումը կապված է հայաստանյան և արտերկրի հայագիտական կենտրոնների և անհատ հայագետների գործունեությունը համակարգող համաշխարհային կազմակերպական կառույցի ձևավորման հետ:

Համաշխարհային մասշտաբով հայագիտական կենտրոնների գործունեությունը համակարգող կառույցի մի տարբերակ ստեղծելու առաջարկություն հնչել է 2013թ. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի ընթացքում: Խոսքը Համահայկական Հայագիտական խորհրդի՝ որպես համահայկական հայագիտության ղեկավար և համակարգող մարմնի, գաղափարի մասին է: Խորհրդի գործունեության մեջ կարևորվում են հայագիտության միասնական և համակարգված քաղաքականության ու հայեցակարգի գիտական լրամշակումը, նրա գերակա ուղղությունների հստակեցումը, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում գործող հայագիտական հաստատությունների առավել արդյունավետ ծրագրերի մշակումը և դրանց համադրումը, էլեկտրոնային կայքի միջոցով ոլորտի միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորումը՝ հետազոտվող թեմաների և նյութերի առավելագույն հասանելիություն ապահովելու նպատակով, խմբագրական խորհրդի ստեղծումը՝ տարվա հայագիտական լավագույն աշխատանքներն առանձնացնելու, խմբագրելու և դրանք հատուկ ալմանախում օտար լեզուներով, մասնավորապես անգլերենով հրատարակելու համար [3, էջ 90]:

Մարտ, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարուխանյան Ս. և ուրիշներ,* Հայությունն Իսրայելում. որոշ խնդիրներ, Երևան, 2009:
2. *Կալցոլարի Վ.,* Եվրոպական հայագիտութեան արդի վիճակը եւ խնդիրները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013:
3. *Հակոբյան Հ.,* Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները և հայագիտության հիմնախնդիրները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Լիագումար նիստի զեկուցումներ, Երևան, 2013:
4. *Մինասյան Էդ.,* Հայրենիք-Սփյուռք կապերի հիմնական ուղղությունները, *Մինասյան Էդ., Վարդանյան Ա.,* Հայրենիք-սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.) հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010:

5. *Ղանալանյան Տ.,* Բեյրութի Հայկազյան համալսարանը, «Գլոբուս», թիվ 2, 2013:
6. «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», Երևան, թիվ 4, 2009:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արեստակես Սիմավորյան, Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Հոդվածում քննության են առնվել արտերկրի հայագիտական կենտրոնների առջև ծառացած մարտահրավերներն ու հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են դրանց արդյունավետ գործունեությանը: Առաջարկվում են այդ խոչընդոտների հաղթահարման մի շարք լուծումներ:

ПРОБЛЕМЫ АРМЕНОВЕДЧЕСКИХ ЦЕНТРОВ

Арестакес Симаворян, Вашоам Овян

Резюме

В статье рассматриваются проблемы и вызовы, стоящие перед зарубежными арменоведческими центрами, мешающие эффективной деятельности последних. Предлагается ряд способов урегулирования этих проблем.

PROBLEMS OF THE CENTERS FOR ARMENIAN STUDIES

Arestakes Simavoryan, Vahram Hovyan

Resume

The article reviews the challenges and problems that the centers for Armenian Studies face, which impede their efficient activities. A number of solutions for overcoming these barriers are suggested.

ՀՀ ԴԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ստալ Սարդարյան*

Բանալի բառեր ՝ Սփյուռք, Հայաստան, համայնքներ, ինքնություն, մշակույթ, լեզու, արևմտահայերեն, դպրոց։

Ազգային ինքնության պահպանման պայքարի հարցում Հայաստանը միշտ էլ թիկունք է կանգնել Սփյուռքին, քանի որ միշտ էլ շահագրգռված է եղել ուժեղ Սփյուռքի պահպանմամբ։ Իսկ ուժեղ Սփյուռք, առանց ազգային ինքնության պահպանման, հնարավոր չէ։ Հետևաբար, Հայաստանն անում է ամեն ինչ Սփյուռքում հայոց լեզվի, հայկական մշակույթի, կենցաղի, ազգային հիշողության և գիտակցության պահպանման համար։

Հայաստանի անկախացումից հետո Սփյուռքում հայ ինքնության պահպանման գործն այստեղ դրվեց որակապես նոր մակարդակի վրա։ Իսկ ՀՀ Սփյուռքի նախարարության հիմնադրմամբ (2008թ. հոկտեմբերի 1) այդ գործը ստացավ էլ ավելի կազմակերպված և համակարգված բնույթ։

Հայաստանի կողմից Սփյուռքում ազգային ինքնության պահպանմանն աջակցության հիմնական եղանակներն են.

- Սփյուռքի դպրոցների համար մանկավարժական կադրերի պատրաստումը
- Սփյուռքահայ մանկավարժների վերապատրաստման դասընթացները
- Տարբեր մշակութային միջոցառումների (համերգներ, ցուցահանդեսներ, փառատոներ և այլն) հովանավորումը կամ համատեղ կազմակերպումը Սփյուռքում։
- Աջակցությունը Սփյուռքում հայագիտական հետազոտությունների իրականացմանը։

* ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ։

- Արտերկրում (հիմնականում աշխարհի տարբեր երկրների համալսարաններում) հայագիտական կենտրոնների հիմնումը և դրանց աջակցությունը ֆինանսապես:
- Համահայկական միջոցառումների կազմակերպումը:
- Աջակցությունն արտերկրում հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը:
- Սփյուռքահայերի, հատկապես երիտասարդների՝ Հայաստան այցելությունների կազմակերպումը:
- Աջակցությունը վիրտուալ կրթօջախների և կրթական ծրագրերի հիմնմանը:

Սփյուռքի դպրոցների համար մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման վերաբերյալ մանրամասն կխոսենք ստորև՝ լեզվի խնդիրների առնչությամբ: Մինչ այդ համառոտակի անդրադառնանք Սփյուռքում ազգային ինքնության պահպանման գործում Հայաստանի կողմից գործադրված ջանքերի մյուս եղանակներին:

Սփյուռքում հայագիտական հետազոտություններին նպաստելու առումով, օրինակ, Հայաստանն աջակցում է արտասահմանյան առաջատար հայագիտական կենտրոններում տարբեր հետազոտությունների իրականացմանը և հրատարակմանը: Սփյուռքի նախարարությունը հովանավորել է Վենետիկի Մխիթարյան միաբանության Ընդհանուր Աթոռակալի տեղապահ հայր Վահան ծայրագույն վարդապետ Օհանյանի և Ոսկան Մխիթարյանի հեղինակած «Հայերը Օսմանյան կայսրության վերջալույսին» արժեքավոր հետազոտությունը[1]:

Սփյուռքում հայագիտական կենտրոնների հիմնման և դրանց ֆինանսական աջակցության առումով, օրինակ, 2007թ. ՀՀ և Սփյուռքի ջանքերով հայագիտական կենտրոն է հիմնվել Կահիրեի համալսարանում[2]:

[1] *Հակոբյան Հ.,* Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները և հայագիտության հիմնախնդիրները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները»: Լիազումար նիստի զեկուցումներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, էջ 83:

[2] *Դանիելյան Է.Լ.,* Հայաստան – Եգիպտոս. հայագիտական կամուրջ, «Գլոբուս. ազգային անվտանգություն», թիվ 1, 2011, էջ 39:

Ինչ վերաբերում է համազգային միջոցառումների կազմակերպմանը, ապա այդպիսիք են Համահայկական խաղերը, Հայրենիք-Սփյուռք համաժողովները, տարբեր մասնագիտական ոլորտներում՝ բժիշկների, ճարտարապետների, իրավաբանների, հայագետների համահայկական համաժողովները:

Առաջին Համահայկական խաղերն անցկացվել են 1999թ. Երևանում: Հետագայում նույնպես Երևանում անցկացվել են Համահայկական խաղեր: Հայաստան այցելությունը և որոշ ժամանակ հայրենիքում ապրելը (թեկուզ սպորտային նպատակներով) լրացուցիչ խթան են հանդիսանում այլ երկրներում ապրող հայերի մեջ ազգային ինքնության պահպանման համար: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ Համահայկական խաղերի ժամանակ Հայաստան ժամանած սփյուռքահայերի համար կազմակերպվում են նաև մշակութային միջոցառումներ և էքսկուրսիաներ Հայաստանի տեսարժան վայրեր, ինչը նշանակում է, որ Հայաստան ժամանած սփյուռքահայերը, բացի մարզական միջոցառումներին մասնակցելուց, հաղորդակցվում են նաև հայրենի մշակույթին և բնաշխարհին, ծանոթանում հայրենիքում բնակվող իրենց հայրենակիցներին: Ասել է թե՝ կենդանի շփումը Հայաստանի և սփյուռքահայերի միջև լուրջ լիցք է տալիս Սփյուռքում ազգային ինքնության պահպանմանը: Համահայկական խաղերի անցկացման վայրի հետ կապված միօրինակությունը հաղթահարելու նպատակով հետագայում կարելի է այդ խաղերը, բացի Երևանից, կազմակերպել նաև ՀՀ և ԼՂՀ այլ քաղաքներում: Ի դեպ, Համահայկական խաղերը կարելի է կազմակերպել ինչպես մեկ, այնպես էլ միաժամանակ տարբեր քաղաքներում:

Ինչ վերաբերում է Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովներին, ապա դրանց լայնորեն մասնակցում են Սփյուռքի գրեթե բոլոր համայնքների և կազմակերպությունների ներկայացուցիչները, դրանցում քննարկվում են համազգային նշանակություն ունեցող հարցեր: Ավանդաբար Հայրենիք-Սփյուռք խորհրդաժողովները գումարվում են սեպտեմբեր ամսին Երևանում: Առաջին այդպիսի խորհրդաժողովը նույնպես անցկացվել է 1999թ.: Ներկայումս արդեն անցկացվել է այդպիսի 5 խորհրդաժողով: Վերջինը՝ հինգերորդը, անցկացվեց 2014թ. սեպտեմբերի 19-20-ը[1]:

[1] *Тигранян С.,* Форум «Армения-Диаспора»: мы сильны единством, Ноев ковчег, Октябрь (16-31) 2014 года, с. 15.

Ինչ վերաբերում է տարբեր մասնագիտությունների գծով համահայկական համաժողովների կազմակերպմանը, ապա առ այսօր կազմակերպվել են հայ բժիշկների, ճարտարապետների, իրավաբանների, հայագետների, քաղաքագետների, միջազգայնագետների, լրագրողների և այլ բնագավառների մասնագետների բազմաթիվ համահայկական խորհրդաժողովներ: 2012թ. նոյեմբերի 19-20-ը Երևանում կազմակերպվեց Քաղաքագետների և միջազգայնագետների համահայկական համաժողովը՝ «21-րդ դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» խորագրով[1]: 2013թ. հոկտեմբերի 17-19-ը Երևանում անցկացվեց Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովը՝ «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» թեմայով[2]: Տարբեր մասնագիտությունների գծով համահայկական համաժողովները նույնպես ավանդաբար անցկացվում են Հայաստանում:

Արտերկրում հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման և զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հատկապես գրական ժառանգության և արխիվային փաստաթղթերի պահպանումը: Ժամանակակից աշխարհում գրական ժառանգության և արխիվային փաստաթղթերի պահպանման նպատակով լայնորեն կիրառվում է դրանց թվայնացումը: Չթվայնացման պայմաններում հին ժամանակներից եկող գրական ժառանգությունը (ձեռագրեր, հնատիպ գրքեր և այլն), որքան էլ լավ պահպանվեն, միևնույն է, ժամանակի ընթացքում ենթարկվում են ինչպես բնական մաշվածության, այնպես էլ արտակարգ իրավիճակներից (հրդեհներ, երկրաշարժեր, պատերազմներ) բխող ոչնչացումի: Դրա ապացույցը 2015թ. հունվարի 30-ին Մոսկվայի առաջատար գրադարաններից մեկում՝ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության ինստիտուտի գրադարանում բռնկված հրդեհն էր, որի արդյունքում կրակին և ավերածությանը զոհ գնացին հսկայական քանակությամբ բարձրարժեք և հազվագյուտ գրքեր[3]: Մեկ այլ սահմռկեցուցիչ փաստ է Մոսուլի կենտրոնական գրադարանի հրդեհումը «Իսլամական

[1] Տե՛ս Մեկնարկեց «21-րդ դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» խորագրով համաժողովը,
http://www.tert.am/am/news/2012/11/19/21-dari-martahraver-hamajoghov/634494
[2] http://www.armin.am/am/news/77
[3] Пожар в библиотеке ИНИОН в Москве, http://www.interfax.ru/photo/2110

պետություն» կազմակերպության ծայրահեղականների կողմից 2015թ. փետրվարին, որի հետևանքով կրակի ճարակ դարձան մոտ տասը հազար գրքեր ու հին ձեռագրեր[1]: Արդ, ելնելով արտերկրում հայկական գրական ժառանգության պահպանման հրամայականից՝ ՀՀ-ն հսկայական միջոցներ է հատկացրել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում և Զմմառի Հայ Կաթողիկե պատրիարքարանում հայագիտական արժեք ներկայացնող հազարավոր ձեռագրերի, հնատիպ գրքերի, արխիվային նյութերի թվայնացման և հրատարակման համար[2]:

Դեպի Հայաստան սփյուռքահայերի, հատկապես երիտասարդների այցելությունների կազմակերպման տեսանկյունից առանցքային է հատկապես ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից 2009 թվականից իրականացվող ամենամյա «Արի տուն» ծրագիրը, որով ամեն տարի սփյուռքահայ բազմաթիվ երիտասարդներ ու պատանիներ իրենց ամառային հանգիստն են անցկացնում Հայաստանում: ՀՀ Սփյուռքի նախարարության ջանքերով սփյուռքահայ երիտասարդների և պատանիների հանգիստը Հայաստանում ուղեկցվում է հետաքրքիր մարզամշակութային միջոցառումներով և էքսկուրսիաներով: Ամեն տարի ավելանում է ծրագրին մասնակցող սփյուռքահայ երիտասարդների և պատանիների թիվը: «Արի տուն» ծրագրի նպատակն է ոչ միայն ծանոթացնել սփյուռքահայ երիտասարդներին ու պատանիներին հայրենի բնաշխարհի և մշակույթի հետ, այլև ծանոթություն և շփում հաստատել Սփյուռքի տարբեր համայնքները ներկայացնող հայերի, ինչպես նաև սփյուռքահայ երիտասարդների ու պատանիների և Հայաստանի նրանց հասակակիցների միջև:

Հայաստանը Սփյուռքում ազգային ինքնության պահպանման համար պայքարում օգտվում է նաև ժամանակակից հեռահաղորդակցային տեխնոլոգիաներից, որոնք հնարավորություն են տալիս վիրտուալ տարածքում ջանքեր գործադրել Սփյուռքում ազգային ինքնության բաղադրիչների (լեզու, մշակույթ, պատմական հիշողություն, ազգային ինքնագիտակցություն և այլն) պահպանման համար: Այդպիսի նախագծերից մեկն է Հայկական վիրտուալ

[1] ԻՊ զինյալները պայթեցրել են Մոսուլի կենտրոնական գրադարանը, http://atv.am/news/?p=687

[2] Տե՛ս *Հակոբյան Հ.,* Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները և հայագիտության հիմնախնդիրները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները»: Լիագումար նիստի զեկուցումներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, էջ 82-83:

համալսարանը (*Armenian Virtual College*), որը հիմնադրվել է 2009թ. ՀԲԸՄ և ՀՀ Սփյուռքի նախարարության ջանքերով: Այդ նախագծի շնորհիվ սփյուռքահայերն առցանց ռեժիմով կարողանում են գիտելիքներ ստանալ մայրենի լեզվի (և՛ արևմտահայերեն, և՛ արևելահայերեն), պատմության, մշակույթի վերաբերյալ[1]: Վիրտուալ տարածքում հայկական կրթական ծրագրերի և կրթական հաստատությունների հիմնումն ու գործարկումը թույլ են տալիս հաղթահարել աշխարհագրական հեռավորությունից և սփռվածությունից բխող խնդիրներն ու խոչընդոտները:

Հարկ է նշել, որ ազգային ինքնության բաղադրիչների թվում առանցքայինը, այնուամենայնիվ, լեզուն է: Վերջինիս միջոցով է, որ արտերկրում բնակվող հայությունն ավելի արդյունավետ կարող է հաղորդակից լինել ազգային մշակույթին, պատմությանը, հիշողությանը: Մինչդեռ մայրենի լեզվին չտիրապետելու պարագայում սփյուռքահայերի համար խիստ դժվար կլինի պահպանել իրենց հայկականությունը, եթե անգամ ազգային ինքնության մյուս բաղադրիչները (կրոն, ազգային մշակույթի առանձին բաղադրիչներ և այլն) պահպանվեն: Հետևաբար, Սփյուռքի կենսունակության հարցում միշտ էլ առանցքային նշանակություն է ունեցել արևմտահայերենի՝ որպես սփյուռքահայության գերակշիռ մեծամասնության ազգային լեզվի, պահպանումը:

Ցավով պետք է արձանագրել, որ արևմտահայերենի պահպանման հարցում դրությունը հեռու է բարվոք լինելուց: Այն Սփյուռքում նահանջ է ապրում: Սփյուռքահայերի շրջանում նվազում է արևմտահայերենով խոսողների կամ արևմտահայերենին տիրապետողների թիվը: Ի հավելումն ընդհանուր օտար քաղաքակրթական միջավայրերի ազդեցության, որոնցում գտնվում են Սփյուռքի համայնքները, արևմտահայերենի նահանջին նպաստում է ևս երկու կարևոր հանգամանք.

- *Արևմտահայերենի՝ որպես պետական լեզվի, կարգավիճակի բացակայությունը:* Ի տարբերություն արևելահայերենի, որը ՀՀ պետական լեզուն է, արևմտահայերենն աշխարհի ոչ մի երկրում չունի պետական լեզվի կարգավիճակ և իր պահպանության հարցում չի վայելում որևէ պետության աջակցությունը:

[1] https://www.avc-agbu.org/en.html

- *Մերձավոր Արևելքում հայերի թվաքանակի կտրուկ նվազումը:* Մերձավոր Արևելքի հայ համայնքների շարունակական նոսրացումն ու սպառումն իրենց հերթին են խթանում արևմտահայերենի նահանջը[1], քանի որ այդ տարածաշրջանի հայությունն է արևմտահայ քաղաքակրթության (այդ թվում՝ նաև լեզվի) անմիջական կրողը: Պատահական չէ, որ Մերձավոր Արևելքի հայ համայնքներում հայ ինքնությունն ավելի ամուր է և համեմատաբար ավելի երկար է գոյատևում, քան այլ տարածաշրջանների հայ համայնքներում[2]: Եթե այլ տարածաշրջաններում ցեղասպանությունից փրկված հայերի երկրորդ սերունդն արդեն լուրջ խնդիրներ է ունենում ազգային ինքնության պահպանման հետ կապված, ապա Մերձավոր Արևելքի հայ համայնքներում արդեն ցեղասպանությունից փրկված հայերի չորրորդ կամ հինգերորդ սերունդն է, որ պահպանում է իր ինքնությունը:

Վերոհիշյալ գործոնների ազդեցությամբ ներկայումս արևմտահայերենի դիրքերն այնքան են թուլացել Սփյուռքում, որ այն դասվում է *UNESCO*-ի «կորուստի եզրին հասած լեզուներու շարքին»[3]:

Հարկ է նշել, որ արևմտահայերենի փրկությունը կորստից ոչ միայն Սփյուռքի, այլև Հայաստանի գործն է, քանի որ այն ոչ միայն Սփյուռքի, այլև համազգային հարստություն է: Արևմտահայերենով ստեղծվել է հսկայական գրական ժառանգություն, որն էապես հարստացրել է հայ մշակույթը: Ներկայումս արևմտահայերենի կորստի սպառնալիքը վտանգի տակ է դնում նաև արևմտահայերենով ստեղծված այդ հսկայական գրական ժառանգությունը: Արևմտահայերենի կորուստը կնշանակի ոչ այլ ինչ, քան 20-րդ դարասկզբին իրականացված Հայոց ցեղասպանության վերջնական փուլ, քանի որ «կարմիր» ցեղասպանությունն իր վերջնական հանգրվանին կհասնի «սպիտակ» ցեղասպանությամբ, այն է՝ արևմտահայերենի և արևմտահայ մշակույթի կորստով:

---

[1] *Հովյան Վ.,* Հայկական Սփյուռքի փոխակերպումը. մարտահրավերներ և հնարավորություններ, «Գլոբուս», թիվ 5, 2013, էջ 47-48:

[2] *Հովյան Վ.,* Հայկական Սփյուռքի անվտանգության մարտահրավերները, «Գլոբուս», թիվ 5, 2014, էջ 43-45:

[3] *Տաքէսեան Կ.,* Արեւմտահայերէնի կարգավիճակը եւ երկլեզու դասավանդութիւնը, Արևմտահայերենի ուսուցման վիճակը Սփյուռքում: Համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Զանգակ-97, 2011, էջ 34:

Ուստի, ազգային մշակույթի ու գրականության հարստության և բազմազանության հարցում շահագրգռված հայոց ազգային պետությունը՝ Հայաստանը, պետք է շահագրգռված լինի արևմտահայերենի պահպանմամբ և զարգացմամբ: Ոչ միայն պետք է պահպանվի արևմտահայերենով ստեղծված գրական հարուստ ժառանգությունը, այլև պետք է ստեղծվի նորը:

Արևմտահայերենի պահպանման և զարգացման գործում կարևոր նշանակություն ունեն հետևյալ գործոնները, որոնց ապահովմանն իր գործուն մասնակցությունն է ցուցաբերում Հայաստանը.

- *Արևմտահայերենի կանոնակարգում:* Արևմտահայերենի պահպանման և զարգացման համար չափազանց կարևոր նշանակություն ունի նրա կանոնակարգումը: Ներկայումս, չնայած արևմտահայերենով շարունակում են լույս տեսնել տպագիր և էլեկտրոնային պարբերականներ, ստեղծվում է գրականություն, սակայն նրա կանոնակարգվածությունը գտնվում է խիստ ցածր մակարդակի վրա: Արևմտահայ գրավոր խոսքն աչքի է ընկնում խիստ տարազանությամբ՝ կախված այն հանգամանքից, թե ով է այդ խոսքի հեղինակը կամ որտեղ է այն ստեղծվում: Չկա քիչ թե շատ միասնական ուղղագրություն կամ կետադրություն: Չկանոնակարգվածությունը բարդ և խրթին է դարձնում արևմտահայերենը՝ հատկապես ընթերցողի համար, ինչն էլ, իր հերթին, սահմանափակում է արևմտահայերենի կիրառման շրջանակները և ուսուցման հնարավորությունները: Արևմտահայերենի կանոնակարգումը Սփյուռքի անվտանգության ապահովման, այն է՝ Սփյուռքում հայ ազգային ինքնության պահպանման գործում Հայրենիք-Սփյուռք համագործակցության կարևորագույն ոլորտներից մեկն է: Այս հարցում կարևոր դերակատարում ունեն ինչպես ՀՀ պետական կառավարման մարմինները՝ ՀՀ Սփյուռքի նախարարությունը, Կրթության և գիտության նախարարությունը, այնպես էլ գիտակրթական հաստատությունները՝ ԵՊՀ-ն (ի դեմս բանասիրական ֆակուլտետի, Հայագիտության կենտրոնի), ԳԱԱ-ն (ի դեմս Լեզվի ինստիտուտի, Գրականության ինստիտուտի), Երևանի Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանը և այլն: Համագործակցելով Սփյուռքի ղեկավար կառույցների և գիտակրթական հաստատությունների (Բեյրութի Հայկազյան համալսարան, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններ, այլ հայագիտական կենտրոններ) հետ՝ նրանք պետք է

հաջողությամբ լուծեն արևմտահայերենի կանոնակարգման վաղուց հասունացած խնդիրը: Այս ուղղությամբ որոշակի քայլեր Հայաստանի կողմից արդեն արվել են: Վերջերս մայրենի լեզվին նվիրված գիտաժողովում, որին մասնակցում էին ՀՀ Սփյուռքի նախարարությունը, Հայաստանի և Սփյուռքի ճանաչված գիտնականներ, հնչեց առաջարկ՝ ստեղծել հատուկ մայրենի լեզվի խնդիրներով զբաղվող հանձնաժողով Հայաստանի և Սփյուռքի ճանաչված մասնագետների մասնակցությամբ, որը, ի թիվս այլ հարցերի, կզբաղվի նաև արևմտահայերենի կանոնակարգման (կանոնարկման) խնդրով:

- *Արևմտահայերենի կիրառման համար համապատասխան միջավայրի ապահովում:* Ցանկացած լեզու դատապարտված է անհետացման, եթե զրկված է կիրառականությունից, այն է՝ չունի գործնական կիրառման հնարավորություն: Իսկ լեզվի կիրառման հնարավորությունների ապահովումը ենթադրում է համապատասխան միջավայրի առկայություն:

Սփյուռքահայերի պարագայում այդ միջավայրը կարելի է բաժանել երկու մակարդակի՝ միկրո- և մակրոմիջավայրեր: Հայոց լեզվի օգտագործման միկրոմիջավայրը ընտանիքն է, իսկ մակրոմիջավայրը՝ ընտանիքից դուրս գտնվող մարդկային հանրույթը՝ համայնքը, հասարակությունը: Ընտանիքն ապահովում է հայոց լեզվի կիրառության առաջնային փուլը, քանի որ երեխան իր առաջնային սոցիալականացումը, այդ թվում նաև՝ հաղորդակցության միջոցի՝ լեզվի տիրապետությունը ստանում է ընտանիքում:

Ինչ վերաբերում է մակրոմիջավայրին, ապա չնայած այն առաջնային փուլ չէ լեզվի տիրապետության հարցում, ինչպես ընտանիքը, սակայն իր կարևորությամբ չի զիջում վերջինիս, քանի որ ապահովում է լեզվի կիրառականության ավելի լայն դաշտ և հնարավորություններ: Հայոց լեզվի կիրառման համար մակրոմիջավայրի ապահովման հարցում Սփյուռքի հայ համայնքները կանգնած են ծանր երկընտրանքի առաջ: Մի կողմից՝ ինտեգրումն այն երկրների հասարակությունների մեջ, որտեղ բնակվում են սփյուռքահայ համայնքները, հանգեցնում է ձուլման կամ նվազագույնը՝ էապես մեծացնում է ուծացման վտանգը: Մյուս կողմից, սակայն, խուսափումը ինտեգրվելուց անխուսափելիորեն հանգեցնելու է հայ համայնքների գետտոյացմանը և լճացմանը:

Այս հանգամանքներում փրկության միակ տարբերակը համայնքային կյանքի աշխուժացումն է՝ զուգորդված տվյալ երկրի հասարակության հետ ինտեգրվածության բարձր աստիճանով: Համայնքային կյանքի աշխուժության պարագայում, մի կողմից, հայ համայնքները չեն դատապարտվի գետտոյացման և լճացման և չեն դադարի լինել գործոն ինչպես տվյալ երկրի, այնպես էլ հայության կյանքում, իսկ մյուս կողմից՝ ինտեգրումը տվյալ հասարակության մեջ չի հանգեցնի հայերի ուծացման:

Սփյուռքահայ համայնքներում համայնքային կյանքի կազմակերպման և աշխուժացման գործում մեծ ներդրում ունի Հայաստանը՝ ի դեմս տարբեր երկրներում իր դեսպանությունների: Հայաստանի անկախացումը, տարբեր երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, դեսպանությունների հիմնումը և գործունեությունը ոչ միայն կարևոր նշանակություն ունեցան արտերկրում բնակվող հայերի ազգային ինքնագիտակցության ու հպարտության վերելքի առումով, այլև լուրջ խթան հանդիսացան Սփյուռքի հայ համայնքներում ազգային կյանքի աշխուժացման համար: Արտերկրի ՀՀ դեսպանությունները, բացի դիվանագիտական գործունեությունից, իրենց նախաձեռնությամբ կազմակերպում են հայկական համայնքային միջոցառումներ կամ, համագործակցելով տեղի հայկական կառույցների հետ, մասնակից են դառնում բազմաթիվ համայնքային միջոցառումների կազմակերպմանը: Հատկապես կարևոր նշանակություն ունեն հայության համար հիշատակելի օրերի նշումները, ինչպիսիք են ՀՀ անկախության օրը (սեպտեմբերի 21), Պետականության վերականգնման կամ Հանրապետության տոնի օրը (մայիսի 28), Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման օրը (ապրիլի 24) և այլն[1]: ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների (նախագահ, Ազգային ժողովի նախագահ, վարչապետ և այլն) արտասահմանյան այցելությունները նույնպես վերածվում են յուրահատուկ տոնի Սփյուռքի հայ համայնքների համար՝ ուղեկցվելով հայ համայնքի հետ հանդիպումներով և այլ միջոցառումներով: Այսպիսով, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններն արտերկրում, համագործակցելով տեղի հայկական կազմակերպությունների հետ, մեծ ներդրում են ունենում սփյուռքահայ համայնքներում համայնքային կյանքի ակտիվացման գործում, ինչը խթանում է սփյուռքահայ

[1] Տե՛ս, օրինակ, *Հովյան Վ.,* Հունաստանի հայ համայնքը արդի փուլում, Գլոբուս, թիվ 5, 2012, էջ 23-24:

համայնքներում ապրող հայերի փոխադարձ շփումները, ստեղծում միասնական գործողությունների ասպարեզ՝ այդ կերպ նպաստելով ոչ միայն արևմտահայերենի, այլ նաև ազգային ինքնության մյուս բաղադրիչների՝ մշակույթի, միասնական էթնիկ պատկանելության գիտակցության պահպանմանը:

•*Սփյուռքի դպրոցների համար արևմտահայերենի ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում:* Ակնհայտ է, որ առանց պատրաստված և բանիմաց մանկավարժական կադրերի Սփյուռքի հայկական դպրոցները չեն կարող արդյունավետ իրականացնել իրենց առաքելությունը: Խնդիրը սուր է դրված նաև լեզվի՝ արևմտահայերենի պահպանման հարցում, քանի որ ներկայումս սփյուռքահայ դպրոցների գլխավոր խնդիրներից մեկն էլ արևմտահայերենի ուսուցիչների անբավարարությունն է: Հաճախ սփյուռքահայ դպրոցներում ուսուցանում են ոչ բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ, որոնք չեն բավարարում կրթության անհրաժեշտ պահանջները:

Գիտակրթական ոլորտում արևմտահայերենի պաշտպանության գործում մեծ դեր ունի Հայաստանը: Նախ՝ Հայաստանի գիտակրթական հաստատություններում արևմտահայերենի ուսումնասիրությունը և դասավանդումն արդեն իսկ որոշակի նպաստ են արևմտահայերենի պահպանմանը: ԵՊՀ Հայկական բանասիրական ֆակուլտետի կազմում Արևմտահայերենի ամբիոնի, ԳԱԱ Լեզվի ինստիտուտի շրջանակներում Արևմտահայերենի ուսումնասիրության բաժանմունքի և այլ կառույցների գործունեությունը նպաստում է ոչ միայն ակադեմիական հետազոտություններին արևմտահայերենի բնագավառում, այլև մասնագիտական կադրերի պատրաստմանը: Իսկ վերջիններս կարող են օգտակար լինել Սփյուռքի դպրոցներում արևմտահայերենի ուսուցիչների պակասը լրացնելու հարցում: Վերջերս ԵՊՀ (հայ բանասիրության, այնուհետև՝ պատմության ֆակուլտետի) կազմում Սփյուռքագիտության ամբիոնի հիմնումը նույնպես կարող է ունենալ այդպիսի կիրառական նշանակություն:

Այս տեսակետից կարևոր է հիշյալ գիտակրթական կառույցներում (ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ, Սփյուռքագիտության ամբիոն) սփյուռքահայ ուսանողների կրթությունը, որոնք էլ հետագայում, վերադառնալով իրենց համայնքներ, կարող են ստանձնել դպրոցներում արևմտահայերենի ուսուցիչների պաշտոնները: Սա կարևոր հանգամանք է՝ հաշվի առնելով, որ

հայաստանյան ուսանողների մեջ հազիվ թե լայն տարածում ունի հայ համայնքներ մեկնելու և Սփյուռքի դպրոցներում որպես արևմտահայերենի ուսուցիչ աշխատելու ձգտումը: Հետևաբար, Հայաստանի բուհերում Սփյուռքի դպրոցների համար արևմտահայերենի ուսուցիչներ պատրաստելու գործում որպես «ատաղձ» պետք է օգտագործվի հիմնականում Սփյուռքի մարդկային ներուժը՝ երիտասարդությունը: Հայաստանի բուհերում ուսանելու, իսկ այնուհետև սփյուռքահայ համայնքներում մանկավարժական գործունեությամբ զբաղվելու պրակտիկան նորություն չէ հայ իրականության մեջ: Այն առկա է եղել վաղուց՝ դեռևս խորհրդային ժամանակներից: Օրինակ՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում է ուսանել և այնուհետև սիրիահայ համայնքում մանկավարժական երկարատև գործունեություն ծավալել անվանի սիրիահայ հայագետ Հակոբ Չոլաքյանը: ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ է նաև Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն Անդրանիկ Տագեսյանը: Ի դեպ, Հայաստանի բուհերն ավարտած սփյուռքահայ շրջանավարտները հետագայում Սփյուռքում զբաղվում են ոչ միայն մանկավարժական, այլև հասարակական գործունեությամբ:

Հայաստանի դերակատարությունը սփյուռքահայ դպրոցներն արևմտահայերենի մասնագետ ուսուցիչներով ապահովելու գործում պետք է լինի սփյուռքահայ երիտասարդների խրախուսումը՝ Հայաստանի բուհերում ուսանելու գործում: Այդ խրախուսման համար կարող են լինել բազմաթիվ մեխանիզմներ, օրինակ՝ Հայաստանի բուհերում սփյուռքահայ երիտասարդների ուսանելու համար արտոնյալ պայմանների ստեղծումը՝ ընդհուպ մինչև նրանց ուսման վճարներից ազատումը: Կամ՝ Հայաստանը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն իր վրա վերցնել սփյուռքահայ երիտասարդների կեցության ծախսերը հայաստանյան բուհերում ուսանելու ընթացքում: Այս ամենը Հայաստանը կարող է իրականացնել կամ իր միջոցներով, կամ էլ սփյուռքահայ կազմակերպությունների հետ համագործակցաբար: Մինչ այժմ սփյուռքահայ երիտասարդների ուսուցումը հայաստանյան բուհերում իրականացվել է տարերայնորեն՝ վերջիններիս նախաձեռնությամբ և միջոցներով: Արդեն վաղուց ժամանակն է, որպեսզի այն կրի կազմակերպված և նպատակային բնույթ: Նպատակահարմար է մշակել և իրականացնել սփյուռքա-

հայ երիտասարդների ուսուցումը հայաստանյան բուհերում կազմակերպելու ծրագրեր: Խոսքն այն սփյուռքահայ երիտասարդների մասին է, որոնք Հայաստանում կուսումնասիրեն հայագիտություն՝ սփյուռքագիտություն, արևմտահայերեն և այլն, քանի որ վերջիններս են վերադառնալու իրենց համայնքներ և ստանձնելու արևմտահայերենի ուսուցչի պարտականությունները:

Արևմտահայերենի ուսուցման նպատակով սփյուռքահայ երիտասարդների՝ հայաստանյան բուհերում կրթության կազմակերպման ծրագրերը կարող են լինել ավելի մեծ՝ Սփյուռքում արևմտահայերենի պահպանման ծրագրերի բաղկացուցիչը: Նպատակահարմար է, որ այդ ծրագրերը համատեղ մշակվեն և իրականացվեն ՀՀ-ի և սփյուռքյան կառույցների կողմից: Այդպիսի ծրագրերի իրականացումը կլինի արևմտահայերենի պահպանության բնագավառում Հայրենիք-Սփյուռք ջանքերի մեկտեղման լավ դրսևորում: Անհրաժեշտ է նաև, որ սփյուռքահայ երիտասարդների՝ հայաստանյան բուհերում կրթություն ստանալու ծրագրերում ամրագրվի դրույթ, համաձայն որի՝ արտոնյալ պայմաններով (կամ հայրենիքի և Սփյուռքի միջոցների հաշվին) Հայաստանում կրթություն ստացող երիտասարդը պարտավոր է ուսումն ավարտելուց հետո վերադառնալ իր համայնք (կամ Սփյուռքի որևէ համայնք) և այնտեղի դպրոց(ներ)ում որոշ ժամանակ զբաղվել արևմտահայերենի ուսուցչությամբ: Նման դրույթ անհրաժեշտ է ամրագրել նաև Հայաստանի բուհերում ՀՀ և Սփյուռքի միջոցների հաշվին կրթություն ստանալու եկող սփյուռքահայ երիտասարդների հետ կնքվելիք պայմանագրերում: Նույն հիմունքներով Սփյուռքի դպրոցներում արևմտահայերենի ուսուցչության գործում կարելի է ներգրավել նաև հայաստանցի ուսանողներին:

Արևմտահայերենի ուսուցիչների պատրաստումից բացի, Հայաստանը կարևոր դերակատարություն ունի նաև ներկայումս Սփյուռքի դպրոցների արևմտահայերենի ուսուցիչների վերապատրաստման գործում: ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից ամեն տարի կազմակերպվում են սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստաման ծրագրեր է իրականացնում նաև Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանը: Չմոռանանք նաև Հայ Առաքելական եկեղեցու դերն այս հարցում. Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը նույնպես իրականացնում է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Վերապատրաստման այս ծրագրերը կարևոր դեր են խաղում Սփյուռքում արևմտահայերենի ուսուցիչների մասնագիտական կատարելագործման, նրանց գիտելիքների և պատրաստվածության բարձրացման, անընդհատ փոփոխվող և զարգացող աշխարհում ուսուցման նոր մեթոդների տիրապետման տեսանկյունից, ինչը, անշուշտ, որոշակի նպաստ է Սփյուռքի դպրոցներում արևմտահայերենի ուսուցման որակի պահպանման և բարձրացման տեսանկյունից և այդ կերպ նպաստում է Սփյուռքում արևմտահայերենի պահպանման գործին:

Սփյուռքահայ դպրոցների համար արևմտահայերենի ուսուցիչներ պատրաստելու և եղած ուսուցիչների վերապատրաստման հետ մեկտեղ կարևոր նշանակություն ունի նաև սփյուռքահայ դպրոցների համար արևմտահայերենի դասագրքերի և այլ ուսումնական ձեռնարկների պատրաստումը: Այս հարցում Հայաստանը կրկին մեծ դեր ունի իրականացնելու: Նպաստելով սփյուռքահայ դպրոցներում արևմտահայերենի ժամանակակից և արդյունավետ (ընկալելի, ուսանելու համար մատչելի) դասագրքերի և այլ ուսումնական ձեռնարկների պատրաստմանը՝ Հայաստանը կնպաստի սփյուռքահայ դպրոցների կենսունակությանը, սփյուռքահայ երեխաների կողմից արևմտահայերենի յուրացմանը և այդ կերպ՝ Սփյուռքում հայ ինքնության պահպանմանը:

Քանի որ արևմտահայերենը չունի պետական լեզվի կարգավիճակ, ինչը խոցելի է դարձնում վերջինիս՝ կանգնեցնելով նրան արդեն անհետացման սպառնալիքի առաջ (իսկ Հայաստանը բոլոր հայերի, այդ թվում նաև՝ սփյուռքահայերի ազգային պետությունն է), արևմտահայերենի փրկության նպատակով կարելի է մտածել արևմտահայերենին Հայաստանում պետական լեզվի կարգավիճակ շնորհելու մասին՝ գոնե Հայաստանում ապրող սփյուռքահայերի կամ նոր հայրենադարձների համար, որոնք չեն տիրապետում արևելահայերենին: Վերջիններս կարող են անգամ պաշտոնական մակարդակով հաղորդակցության մեջ կիրառել արևմտահայերենը՝ թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում:

Արևմտահայերենին Հայաստանում պետական լեզվի կարգավիճակի շնորհումը՝

- կմեծացնի հետաքրքրությունը նրա նկատմամբ թե՛ հայ և թե՛ օտար իրականություններում,

- կխթանի գիտական հետազոտություններն արևմտահայերենի ոլորտում, քանի որ այդ հետազոտությունները կունենան ոչ միայն տեսական կամ ակադեմիական, այլև կիրառական նշանակություն,
- կընդլայնի արևմտահայերենի կիրառության շրջանակները,
- կխթանի արևմտահայերենով նոր գրական ստեղծագործությունների ստեղծմանը,
- լրացուցիչ խթան կհանդիսանա արևմտահայերենը կանոնակարգելու համար,
- կմեծացնի արևմտահայերենով հրատարակությունների շրջանակը (գրքեր, պարբերական հանդեսներ, թերթեր և այլն) և քանակը:

Իսկ այս ամենը համախումբ կերպով լուրջ հիմք կհանդիսանա արևմտահայերենի փրկության և մեռնող լեզվից կենսունակ, զարգացող լեզվի վերածվելու համար, ինչն էլ իր հերթին լուրջ հիմք կհանդիսանա Սփյուռքում հայ ինքնության պահպանման համար:

Մարտ, 2015թ.

ՀՀ ԴԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ստալ Սարդարյան

Ամփոփագիր

Սփյուռքում հայ ինքնության բաղադրիչների պահպանմանը Հայաստանը նպաստում է այնտեղ մշակութային կյանքի աշխուժացմամբ՝ համերգների, ցուցահանդեսների, փառատոների և այլ միջոցառումների հովանավորմամբ և համատեղ կազմակերպմամբ, հայագիտական հետազոտություններին աջակցությամբ, արտերկրում հայագիտական կենտրոնների հիմնմամբ և աջակցությամբ, համահայկական միջոցառումների կազմակերպմամբ, արտասահմանում հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանն աջակցությամբ, դեպի Հայաստան սփյուռքահայ երիտասարդների այցելությունների կազմակերպմամբ, վիրտուալ կրթօջախների հիմնադրմանն աջակցությամբ: Արևմտահայերենի պահպանման հարցում կարևոր նշանակություն ունեն դրա կանոնակարգումը, Սփյուռքի դպրոցների համար մանկավարժական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը: Կարելի է մտածել նաև ՀՀ-ում արևմտահայերենին պետական լեզվի կարգավիճակ շնորհելու մասին:

РОЛЬ РА В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ В ДИАСПОРЕ

Стал Сардарян

Резюме

Армения способствует сохранению армянской идентичности в Диаспоре за счет активизации там культурной жизни: спонсирования и совместной организации концертов, выставок, фестивалей и других мероприятий, поддержки арменоведческих исследований, учреждения арменоведческих центров за рубежом, организации панармянских мероприятий, сохранения и способствования развитию армянского духовно-культурного наследия, организации поездок диаспоральной молодежи в Армению, поддержке учреждению виртуальных образовательных площадок. В сохранении западноармянского языка важное значение имеет также его упорядочение, подготовка и переподготовка педагогических кадров для школ Диаспоры. Можно подумать и о присуждении западноармянскому языку государственного статуса в РА.

THE ROLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN PRESERVING THE ARMENIAN IDENTITY IN THE DIASPORA

Stal Sardaryan

Resume

Armenia contributes to preserving the components of Armenian identity by boosting the cultural life through sponsorship and joint organization of concerts, exhibitions, festivals and other events, support of Armenian Studies, establishment of and support to centers for Armenian Studies abroad, organization of pan-Armenian events, preservation and development of Armenian spiritual and cultural legacy in foreign countries, organization of young Diaspora Armenians' visits to Armenia, creation of virtual educational portals. In preservation of the Western Armenian language, the important factors include its regulation, training and professional development of teachers for the schools in Diaspora. The idea of assigning a status of national language to Western Armenian in the Republic of Armenia is another food for thought.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. *«ԱՐՄԱՏԱՎՈՐՄԱՆ» ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Թամարա Վարդանյան-Այվազյան*

Բանալի բառեր ՝ազգային քաղաքականություն, Անդրկովկաս, Անդրֆեդերացիա, արմատավորման քաղաքականություն, Խորհրդային Հայաստան:

Ներածություն

ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ. ազգային հարցերն իրենց լուծումն էին ստանում հիմնականում «արմատավորման» (*коренизация*) քաղաքականության շրջանակներում և ենթարկվում էին այդ քաղաքականության տրամաբանությանը: Պատմագրության մեջ արմատավորումն ընդունված է գնահատել, ընդհանուր առմամբ, որպես առաջադիմական երևույթ: Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Թ.Մարտինն այն բնորոշեց որպես «դրական գործողությունների քաղաքականություն» [1] և այս մոտեցումը թե՛ հետխորհրդային, թե՛ արևմտյան մասնագիտական շրջանակներում համընդհանուր ճանաչում գտավ: Եվ իրոք, խորհրդային հանրապետություններում այդ փուլում մշակութային ու տնտեսական ոլորտներում ակնհայտ հաջողություններ արձանագրվեցին: Սակայն արմատավորման քաղաքականությունն ուներ նաև իր ներքին առանձնահատկություններն ու անհարթությունները, որոնք դեռևս առանձին քննության չեն ենթարկվել և չեն դիտարկվել այսպես կոչված «ազգային ծայրամասերի», օրինակ, Անդրկովկասի հետ կապված: Բազմաթիվ հարցեր դեռ մնում են չլուսաբանված, ասենք՝ ինչպե՞ս էր ընթանում ռեսուրսների բաշխումը տեղերում, արմատավորման ի՞նչ տեմպեր էին արձանագրվել տարբեր հանրապետություններում, ի՞նչ գերակայություններ էին սահմանված հանրապետությունների միջև, վերջապես, ի՞նչ գործոններ էին ազդում այդ քաղաքականության իրականացման ընթացքում և այլն:

* «Նորավանք» ԳԿՀ փորձագետ, պ.գ.թ.:

Որո՞նք են արմատավորման քաղաքականության էությունն ու նպատակները։

1923թ. ՌԿ(բ)Կ XII համագումարի ընդունած բանաձևում նշվում է «ազգային հանրապետություններում արմատավորման քաղաքականության անցկացման անհրաժեշտության մասին։ Այն ենթադրում էր ազգային լեզվի գերակայության ապահովում ու լայն կիրառում գործավարությունում, մամուլում, լուսավորչա-մշակութային հաստատություններում, նաև ղեկավար պաշտոններում տեղական կադրերի առաջխաղացում, ովքեր ազատ տիրապետում են ազգային լեզվին» [2, c. 433-442]։ Արմատավորման քաղաքականության շրջանակներում նախատեսվում էր սոցիալ-տնտեսական և մշակութային ցածր մակարդակի վրա գտնվող հանրույթներին ընձեռել ազգային զարգացման լայն հնարավորություններ, որպեսզի վերջիններս հավասարվեն ԽՍՀՄ առավել զարգացած ազգերին։ Այդ նպատակով արմատավորումն իրականացվելու էր չորս հիմնական ուղղություններով՝ ազգային լեզու, ազգային տարածք, ազգային վերնախավ և ազգային մշակույթ[1]։ Նախատեսվում էր մեծաթիվ միջոցառումների մի ամբողջական համակարգ, որոնք պետք է նպաստեին նշված չորս ուղղությունների ձևավորմանը, հատկապես այն շրջաններում, որտեղ դրանք թույլ էին արտահայտված կամ բացակայում էին ընդհանրապես։ Ակնհայտ է, որ նշված ոլորտները կենսական նշանակություն ունեն ազգակերտման տեսակետից։

Այսպիսով, արմատավորման քաղաքականության միջոցով լուծվելու էր խորհրդային համակարգի կարևորագույն գաղափարական հիմքերից մեկի՝ համընդհանուր հավասարության հաստատման խնդիրը։ Բացի այդ, շնորհիվ դրա՝ խորհրդային իշխանությունը ԽՍՀՄ ազգերի և ազգությունների համար պետք է դառնար «հարազատ», «մտերիմ», «ժողովրդական» և «հասկանալի»։

Ադրբեջանն արմատավորման տարիներին

Արդեն 1920-ական թթ. սկզբներից ակնհայտ էր, որ Անդրկովկասի երեք հանրապետությունների շարքում բոլշևիկներն առավել բարյացակամ էին տրամադրված հատկապես Ադրբեջանի նկատմամբ։ Նման վերաբերմունքի պատճառները մի քանիսն էին. առաջինն այն էր, որ Ադրբեջանին վերապահված էր

[1] Նշենք, որ արմատավորման քաղաքականության առավել տեսանելի արդյունքներն արձանագրվեցին ժողովրդագրական բնագավառում, սակայն այս ոլորտը դուրս է տվյալ հոդվածի շրջանակներից։

առանցքային դերակատարում ունենալ Արևելքի երկրներում սոցիալիստական հեղափոխության տարածման գործում: Տեղական կոմունիստական կուսակցության առջև խնդիր էր դրված կարճ ժամկետներում Ադրբեջանը վերածել «[Արևելքի ճնշված ժողովուրդների] իմպերիալիզմի ճիրաններից ազատագրման դրոշակակիր»[1] և այն որպես դրական մոդել ծառայեցնել արևելյան ժողովուրդների համար, որոնք հետագայում կանցնեն սոցիալիստական կարգերին: Երկրորդ. նավթով հարուստ Ադրբեջանը կենսական նշանակություն ուներ ԽՍՀՄ կայուն տնտեսական համակարգի ձևավորման համար, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նորաստեղծ խորհրդային պետությունը ստիպված էր «գոյատևել և զարգանալ թշնամական կապիտալիստական շրջափակման պայմաններում»: Եվ վերջապես երրորդ՝ Անդրկովկասի երեք տիտղոսակիր ազգերից՝ հայեր, վրացիներ և անդրկովկասյան թաթարներ (հետագայում՝ ադրբեջանցիներ), միայն վերջիններս ընդգրկվեցին ԽՍՀՄ *«մշակութապես հետամնաց»* ազգությունների ցանկում[2]: Բոլշևիկները գտնում էին, որ այդ ցուցակում հայտնված 97 ազգություններին անհրաժեշտ է առավելագույնս աջակցել: Այսպիսով, անդրկովկասյան թաթարները լայն հնարավորություն ստացան ստեղծելու և զարգացնելու սեփական մշակույթը, լեզուն և ազգային այլ բաղադրիչներ, որոնցից նրանք, ի տարբերություն իրենց հարևանների, դեռևս զուրկ էին:

Ուշագրավ է, որ բոլշևիկներն ամենևին էլ չէին թաքցնում, որ իրենք նախապատվություն են տալիս Ադրբեջանին: Օրինակ, 1922թ. Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների երկրորդ կուսակցական կոնֆերանսում Ս.Օրջոնիկիձեն բացեիբաց հայտարարեց. «Հարևան երկրների աշխատավոր զանգվածների հեղափոխականացման գործում Վրաստանի ու Հայաստանի միջազգային դերակատարումը հավասար է զրոյի: Որևէ համաշխարհային դեր Վրաստանն ու Հայաստանը չունեն: Իսկ Ադրբեջանը որպես մահմեդական երկիր ազդեցություն ունի Թուրքիայում»[3]: Ուստի, ամենևին էլ զարմանալի չէ, որ Անդրկովկասի երեք հանրապետությունների շարքում ար-

[1] Приветствие от секретаря ЦК РКП тов. И.Сталина, РГАСПИ Ф.558, Оп.11. Д. 1202. Л. 428.

[2] Об ударном культобразовании отсталых национальностей // Бюллетень Народного комиссариата по просвещению РСФСР, 1932, № 5. С. 13-14, հղումը՝ ըստ *Martin T.* The Affirmative Action Empire: Nations and Nationalism in the Soviet Union, 1923-1939, Cornell University Press, 2001, p. 167.

[3] Из речи тов. Орджоникидзе на Второй партийной конференции коммунистических организаций Закавказья // Вопросы партийной жизни, вып. 11, 3-я серия. Тифлис, 1922, с. 26.

մատավորման քաղաքականությունն ամենավառ արտահայտությունը գտավ հենց Խորհրդային Ադրբեջանում: Այսպես, արդեն 1920-ական թթ. հենց Ադրբեջանն է ստանձնում ավանգարդի դերն այբուբենի լատինացման գործում (մինչ այդ կիրառվում էին արաբերեն գրերը): Այնուհետև հաջորդեցին բազմաթիվ այլ միջոցառումներ ազգային լեզվի ձևավորման ուղղությամբ: Այդ շրջանում ադրբեջանական թյուրքերը դեռևս զուրկ էին նորմավորված գրական լեզվից: Նույնիսկ 1920-ական թթ. տպագիր հրատարակությունների առյուծի բաժինը Թուրքիայից Ադրբեջան ներմուծվող գրականությանն էր, որն էլ Ստամբուլի բարբառով էր և Անդրկովկասի թյուրքալեզու մահմեդականներին լիովին հասկանալի չէր: Ելնելով ստեղծված իրադրությունից՝ անհրաժեշտություն առաջացավ տեղական բարբառը վերածել գրական լեզվի և այն դարձնել զանգվածային: Արագ տեմպերով սկսվեց գրական լեզվի ձևավորման գործընթացը՝ լատինական տառատեսակի հիմքով: Հաջորդ քայլը եղավ մշակված նոր գրական լեզվով ազգային (թյուրքական) գրականության ստեղծումը, գիտական աշխատությունների, դասագրքերի հրատարակումը: Սա ահռելի աշխատանք էր, որը հսկայական ռեսուրսներ էր պահանջում: Սակայն մշակութային հեղափոխությունը հնարավոր էր անցկացնել միայն այս ճանապարհով:

Փաստորեն, բոլշևիկների առջև դրված էր բարդագույն խնդիր՝ կարճ ժամկետներում անդրկովկասյան թաթարների մշակութային զարգացման աստիճանը հավասարեցնել իրենց հարևանների՝ հայերի ու վրացիների ընդհանուր քաղաքակրթական մակարդակին: Սակայն այս հարցի լուծման ճանապարհին առկա էին բազում խոչընդոտներ, այդ թվում՝ մահմեդականների շրջանում անգրագիտության բարձր ցուցանիշը: Մուսավաթականների օրոք (1918-1920թթ.) Ադրբեջանի բնակչության ընդհանուր գրագիտության մակարդակը կազմում էր ընդամենը 7%, իսկ որոշ գավառներում՝ նույնիսկ 4%[1]: Այս խնդիրը շարունակում էր հրատապ մնալ նույնիսկ խորհրդայնացման առաջին տարիներին: Գրագիտության մակարդակով թյուրքերը զգալիորեն զիջում էին իրենց երկու հարևաններին՝ հայերին և վրացիներին: 1926թ. գրագետ էր վրացիների 44%-ը, հայերի՝ 37.12%-ը, իսկ թյուրքերի՝ ընդամենը 9%-ը: Կիսագրագետ կադրեր կարելի էր հանդիպել անգամ Ադրբե-

[1] «Стенографический отчет III Всеазербайджанского съезда Советов», Баку, 1923, с. 75-80. Հղումն՝ ըստ *Тамразова И.И.,* Культурное строительство Закавказских республик в восстановительный период // Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, Երևան, № 11, 1969, էջ 46:

ջանի ղեկավար պաշտոնյաների շրջանում: 1927թ. Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա.Կարաևը դժգոհում էր, որ «յուրաքանչյուրն, ով ունի թյուրքական անուն և «հավատում է Ալլահին», իրեն թյուրք է համարում: Երբեմն նույնիսկ բավարար է *թյուրք* ներկայանալը: Այնինչ խնդիրն իրականում այն է, որ տեղի բնակչությունից դուրս եկած պաշտոնյաները թյուրքերեն գրել-կարդալ իմանան» [3, c. 323]:

Գրագետ կադրեր անհրաժեշտ էին նաև արմատավորման քաղաքականության մյուս կարևոր ուղղության՝ ազգային վերնախավի ձևավորման համար: Այսպիսով, խորհրդային իշխանությունները սկսեցին անասելի միջոցներ և ջանքեր գործադրել Ադրբեջանում տեղի թյուրքերի անգրագիտության վերացման ուղղությամբ:

Պաշտոնական տվյալներով՝ 1926-1939թթ. անգրագիտության վերացման ամենաբարձր տեմպերն արձանագրվել են Անդրկովկասի թյուրքերի շրջանում (տե՛ս *Աղյուսակ 1*).

Աղյուսակ 1

Գրագիտության մակարդակի բարձրացման տեմպերն ըստ ազգերի, 1926-1939թթ.

Տարիքային խումբ	Վրացի (ար.)	Վրացի (իգ.)	Հայ (ար.)	Հայ (իգ.)	Թյուրք (ար.)	Թյուրք (իգ.)
մինչև 9 տարեկան	+1,4	+1,8	+1,5	+2,3	+4,0	+17,6
9 – 49 տարեկան	+1,4	+1,8	+1,5	+2,4	+4,0	+17,7
50 տարեկան և բարձր	+1,7	+2,0	+1,7	+2,3	+2,7	+15,7

Մշակութային բարեփոխումներին զանգվածային բնույթ հաղորդելու նպատակով Ադրբեջանում մեծ թափ ստացավ նաև հրատարակչական գործը: Հենվելով Համամիութենական գրապալատի տվյալների վրա՝ Հումբոլդտի համալսարանի պրոֆեսոր Յ.Բաբերովսկին արձանագրում է. «Արևելքի ոչ մի հանրապետությունում հրատարակչական գործի նման աճ չի արձանագրվել, ինչպես Ադրբեջանում»: «1927թ. արդեն ադրբեջանական պետական հրատարակչությունը թողարկել էր ավելի քան 3 մլն օրինակ տպագիր նյութ թյուրքերենով, այն դեպքում, երբ ռուսալեզու գրականության ընդհանուր տպաքանակը 250 000-ից էլ պակաս էր: 1927-1931թթ. հրատարակված գրքերի անվանական ցանկն Ադրբեջանում աճեց 673-ից մինչև 1513, իսկ դրանց տպաքանակը՝ 1711-ից մինչև 7206 օրինակ» [3, c. 322]:

Այդ տարիներին Ադրբեջանում ընթացավ նաև կուսակցական-վարչական ապարատի աստիճանական թյուրքացումը: Ղեկավար պաշտոններից հետզհետե հեռացնում էին ռուսներին և ընդհանրապես բոլոր այլազգիներին: Ինչպես նշում է Թ.Մարտինը, «ռուսներն ընդհանուր առմամբ դժգոհ էին արմատավորման քաղաքականությունից: Եվ հատկապես մեծ վնաս հասցվեց ազգամիջյան հարաբերություններին այն պահից, երբ ռուսներին բացահայտ փոխարինում էին բնիկ ժողովուրդներով: Ադրբեջանի Կոմկուսի համագումարի ընթացքում պատգամավորներից մեկն իր ելույթում նշեց, որ ռուսներն ասում են. «Ինչո՞ւ ինձ ազատեցին աշխատանքից և իմ փոխարեն նշանակեցին ադրբեջանցու: Ինչո՞վ է նա ինձանից առավել» [1, p. 137][1]: Այս քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: 1929թ. սեպտեմբերի 23-ի ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ուղենիշում, որտեղ խոսվում էր հարյուրավոր բանվորների և գյուղացիների՝ պատասխանատու պաշտոնների առաջադրման անհրաժեշտության մասին, նշվում է, որ «հատկապես հարկ է առաջ մղել թյուրք աշխատավորներին և միաժամանակ ձգտել պահպանել հին կուսակցական կադրերին, ովքեր թյուրք են»[2]:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. սկզբներին արմատավորման քաղաքականությունն Ադրբեջանում, նպաստելով ազգային (թյուրքական) լեզվի, ազգային վերնախավի, ազգային տարածքի և ազգային մշակույթի ձևավորմանը, միաժամանակ մեծապես խթանեց թյուրքական ինքնության հիմքով ազգակերտման գործընթացներին:

Այնուամենայնիվ, բոլշևիկները քաջ գիտակցում էին, որ էթնոկրոնական տեսակետից Կովկասը բարդ տարածաշրջան է, որտեղ «ազգերն ու ազգությունները այնպես են միախառնված, որ կարծես նրանց ինչ-որ մեկը նույն պարկից հանել ու շաղ էր տվել: Այստեղ բոլոր հիմքերը կան ազգային հրաբխի ժայթքման համար»[3],- նշվում է 1922թ. Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների երկրորդ կուսակցական համաժողովում: Եվ որպեսզի «ազգային հարցը տեղափոխվի դասակարգային պայքարի հուն», ապահովվի «Կովկասի ժողովուրդների համերաշխությունն ու եղբայրությունը» և

[1] *Martin T.,* The Affirmative Action Empire: Nations and Nationalism in the Soviet Union, 1923-1939. – Cornell University Press, 2001, p. 137.

[2] РГАСПИ. Ф.17. Оп.3. Д.759. Л. 9.

[3] Вторая партийная конференция коммунистических организаций Закавказья // Вопросы партийной жизни, Вып. 11, 3-я серия, Тифлис, 1922, էջ 6:

դրանով իսկ վերջնականորեն լուծվի ազգային հարցը, 1922թ. մարտին որոշվեց Անդրկովկասի երեք հանրապետությունները միավորել մեկ միասնական ֆեդերացիայի շրջանակներում: Վ.Ի. Լենինի նախաձեռնությամբ և Ի.Ստալինի, Ս.Օրջոնիկիձեի ու Ս.Կիրովի ակտիվ մասնակցությամբ ստեղծվեց Անդրկովկասյան ֆեդերացիան, որն էլ դարձավ ՀամԿ(բ)Կ ազգային քաղաքականության յուրօրինակ փորձադաշտ: Անդրֆեդերացիան գոյատևեց 1922-19362թթ.: Այս տարիները գրեթե ամբողջությամբ համընկնում են արմատավորման քաղաքականության տարիների հետ:

Վրացիներն ու Անդրֆեդերացիան

Նշենք, որ ի տարբերություն անդրկովկասյան թյուրքերի, որոնք հայտնվել էին *«մշակութապես հետամնաց»* ազգությունների ցանկում, վրացիներն ու հայերը դասվեցին զարգացած «արևմտյան ազգությունների» շարքին: Հետևաբար, վերջիններս արագացված արմատավորման ենթակա չէին: Սակայն արմատավորումն իր ակնհայտ ու տեսանելի արդյունքներն արձանագրեց նաև Վրաստանում: Պատճառն այն էր, որ «ՀամԿ(բ)Կ Անդրկովկասի երկրամասային կոմիտեն ստեղծված օրվանից մինչև վերացումը՝ 1936թ., ավանդաբար ղեկավարում էին վրացի գործիչները: Նախ Սերգո Օրջոնիկիձեն էր, հետո Մամիա Օրախելաշվիլին, և վերջապես՝ Լավրենտի Բերիան: Ընդ որում, յուրաքանչյուրը միաժամանակ վարում էր նաև Վրաստանի Կոմկուսի առաջին քարտուղարի պարտականությունները» [4, c. 32]: Լավրենտի Պավլովիչը 1927թ. նշանակվեց Վրացական պետական քաղաքական վարչության (ՊՔՎ) նախագահ և միաժամանակ դարձավ Անդրկովկասի ՊՔՎ նախագահի տեղակալ: 1929թ., շարունակելով լինել Վրաստանի և Անդրկովկասի ՊՔՎ նախագահ, նա միաժամանակ ստանձնում է Անդրֆեդերացիայում ԽՍՀՄ ՊՔՎ ներկայացուցչության ղեկավարի պաշտոնը: Փաստորեն, Անդրֆեդերացիայի երեք սուբյեկտներից մեկի՝ Վրաստանի ներկայացուցիչները, միաժամանակ ղեկավարում էին ամբողջ ֆեդերացիան: Անաչառության համար պետք է նշել, որ այդ հանգամանքը, սակայն, ամենևին էլ չխոչընդոտեց բուն Վրաստանում նույնպես զանգվածային հալածանքների իրականացմանը:

Ուշագրավն այն է, որ վրաց կոմունիստներն ի սկզբանե բացահայտ ու հետևողականորեն դեմ էին հանդես գալիս միասնական մարմնի շրջանակներում Անդրկովկասի երեք հանրապետությունների միավորման, այսինքն՝

Անդրֆեդերացիայի ստեղծման գաղափարին: Նրանք գտնում էին, որ Վրաստանն ու անդրկովկասյան մյուս հանրապետությունները պետք է ինքնուրույն մտնեն ԽՍՀՄ կազմի մեջ, այնպես, ինչպես Ուկրաինան և Բելառուսը: Վրացական կողմը մտավախություն ուներ, որ միության շրջանակներում Վրաստանի ինքնիշխանությունը կվնասվի: Բայց երբ Անդրֆեդերացիան, այնուամենայնիվ, կազմավորվեց, վրացիներն այնտեղ գրավեցին բոլոր ղեկավար պաշտոնները՝ շնորհելով այդ մարմնին որոշակիորեն վրացամետ ուղղվածություն (գոնե բուն Հայաստանում Անդրֆեդերացիայի քաղաքականությունն այդպես էր ընկալվում):

Հայաստանն Անդրֆեդերացիայի կազմում

Որպես Անդրֆեդերացիայի կազմավորման հիմք հռչակված էր նրա մաս կազմող սուբյեկտների հավասարության սկզբունքը: Այդ մասին մշտապես շեշտվում էր թե՛ կազմավորման, թե՛ գոյատևման ողջ ընթացքում: Սակայն բացառված չէ, որ քողարկված աստիճանակարգումն ի սկզբանե դրված լիներ նրա ստեղծման հիմքում: Սուբյեկտների տարբեր կարգավիճակները, թերևս, պայմանավորված էին այն հանգամանքներով, որոնց շարքում է, օրինակ, արմատավորման քաղաքականությունը, որն ուղղված էր ԽՍՀՄ-ում բնակվող «մշակութապես հետամնաց» ազգությունների (Անդրկովկասում դրանք թյուրքերն էին) և «արևմտյան ազգերի» (հայեր և վրացիներ) միջև առկա տարբերությունների կրճատմանն ու վերացմանը: Հաջորդ գործոնը, որը նույնպես խախտելու էր հավասարության սկզբունքը, Անդրֆեդերացիայի ղեկավար պաշտոններում վրացիների գերակշռությունն էր: Ամեն դեպքում, այդ նորաստեղծ կազմավորման շրջանակներում կարելի է նկատել որոշ առանձնահատկություններ, որոնք խոսում են նրա մաս կազմող սուբյեկտների տարբեր քաղաքական կշիռների մասին:

Անդրֆեդերացիայի շրջանակներում ներքին սքողված գերակայությունները պարզելու համար համեմատենք երեք հանրապետությունների ցուցանիշները մի քանի ոլորտներում: Բոլոր տվյալները ցույց են տալիս, որ ազգայնացման (արմատավորման) ամենաբարձր տեմպերը գրանցված են Ադրբեջանում: Օրինակ, 1926-1939թթ. գրասենյակային աշխատակիցների կազմի թյուրքացման գործում հանրապետությունում արձանագրվեց դրական սալդո 22,9%-ով: Այս ցուցանիշը զգալիորեն գերազանցում է Վրաստանում

արձանագրված տվյալները, որտեղ գրասենյակային աշխատողների կազմի վրացացման տեմպը կազմում էր +8,8%։ Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ նկատվում է խորհրդային արմատավորման քաղաքականության պատմության մեջ աննախադեպ մի երևույթ, երբ նույն ժամանակահատվածում գրանցվում է բացասական ցուցանիշ՝ -7,5% [5, c. 528-529]։ Ինչպես նշում է Թ.Մարտինը, «բոլոր ազգային հանրապետություններում (բացառությամբ Հայաստանի, որտեղ դեռ 1926թ. հայերը գրավեցին գերակա դիրքեր) տեղի ունեցավ մտավոր աշխատանք պահանջող պաշտոններում արմատավորման մակարդակի զգալի աճ» [5, c. 515]։ Հայտնի է, որ Հայաստանն, ի տարբերություն հարևան երկու հանրապետությունների՝ Վրաստանի ու Ադրբեջանի, առավել միաէթնիկ էր (1926թ. մարդահամարի տվյալներով՝ բնակչության 84.5%-ը հայեր էին)։ Հավանաբար, հենց այս պատճառով էր, որ այն նույն ժամանակահատվածում, երբ ամբողջ Խորհրդային Միությունում լայն թափ էր ստացել արմատավորումը, այստեղ զարկ տրվեց հակառակ գործընթացին՝ ապաարմատավորմանը։

Ընդունված կարծիք է, որ Կոմկուսի շարքերում մեծ թիվ էին կազմում, ի տարբերություն թյուրքերի, հայերն ու վրացիները։ Բայց եթե կրկին դիտարկենք երեք հանրապետությունների կուսակցական ապարատների արմատավորման ընթացքը, ապա կարձանագրենք նույն միտումները, որոնք գրասենյակային աշխատակիցների պարագայում էին։ 1927-1932թթ. Ադրբեջանի կուսակցական ապարատը թյուրքացել է 12%-ով, Վրաստանինը վրացացել 11%-ով, իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, ապա կրկին ունենք բացասական ցուցանիշ՝ -2% [6, p. 32]։

Փաստորեն, արմատավորման քաղաքականության տարիներին, երբ ամենուր դրված էր ազգայնացման, ազգային՝ տեղական կադրերի առաջմղման խնդիրը, Հայաստանը դուրս էր մնացել ընդհանուր տրամաբանությունից. այստեղ ազգայնացում տեղի չունեցավ, այլ ընդհակառակը, կուսակցական և այլ մարմինները հնարավորինս համալրվում էին ոչ հայազգի գործիչներով։

«Մշակութապես հետամնաց» թյուրքերի և «արևմտյան ազգերի»՝ հայերի ու վրացիների միջև առկա տարբերության կրճատման քաղաքականությունը, որն ընկած էր արմատավորման հիմքում, վերաբերեց նաև այբուբենի բարեփոխման հարցերին։ Եթե թյուրքերի պարագայում լատինացման քաղաքականությունն առաջադիմական երևույթ էր, քանի որ այն ոչ միայն նպաստեց

մշակութային հեղափոխությանն Ադրբեջանում, այլև խթանեց «նոր ազգի» ձևավորմանը, ապա հայերի ու վրացիների պարագայում, ովքեր սեփական ազգային այբուբենն ունեին դեռ V դարից, իսկ ազգային ինքնությունը վաղուց կայացած էր, նման բարեփոխումը կործանարար կլիներ: Այն կնշանակեր հրաժարում մշակութային ավանդույթներից, կապի խզում հոգևոր պատմական ժառանգությունից ու հարուստ գրականությունից, փաստորեն, անհաղթահարելի անջրպետ կդցեր ներկայի ու անցյալի միջև՝ վտանգելով ազգային ինքնությունն ու, հետևաբար, ազգի ապագա գոյությունը: Սակայն այդ մարտահրավերի առջև կանգնեցին միայն հայերը, քանի որ «միակ այբուբենը, որն առհասարակ չէին պատրաստվում լատինացնել, վրացերենն էր» [5, c. 279],- նշում է Թ.Մարտինը: Ինչ վերաբերում է հայոց գրերին, ապա «Բաքվում (ընդ որում, ոչ Երևանում) նույնիսկ հանձնաժողով էր ստեղծվել, որը պետք է զբաղվեր հնագույն հայոց գրերի լատինացմամբ» [5, c. 279] (բարեբախտաբար, այդ նախաձեռնությունը տապալվեց):

Արմատավորման քաղաքականության տարիներին հայկական շահերի ոտնահարման մասին ակնարկում է Յ.Բաբերովսկին. «Հայերը, որպես քրիստոնյաներ, չհայտնվեցին «հետամնաց» ազգերի պաշտոնական ցանկում: Նրանք նաև խավար Արևելքի մասը չէին, այլ ներկայացնում էին քրիստոնյաների և «եվրոպացիների» հանրույթը, որի պատճառով էլ ընդգրկվեցին առաջադեմ, արևմտյան ազգերի շարքում: Ցարական կայսրությունում այս որակումը պատվավոր և հեղինակավոր կդիտվեր: Իսկ այժմ դա լիովին հակառակ ազդեցությունն ունեցավ հայ բնակչության վրա» [3, c. 310]:

Ի՞նչ նկատի ուներ հեղինակը, ի՞նչ զրկանքներ կրեց հայկական կողմն արմատավորման տարիներին:

Դիտարկենք, օրինակ, Անդրկովկասյան ժողկոմխորհի կառավարչական նիստի 1927թ. հոկտեմբերի 10-ի որոշումը, որտեղ հաստատված էր երեք հանրապետություններին հատկացված պրակտիկանտների և վերապատրաստվողների (ստաժոր) քանակը: Վրաստանին հատկացված էր 859 տեղ վերապատրաստվողների և 2977 պրակտիկանտների, Ադրբեջանին՝ 202 տեղ վերապատրաստվողների և 1765 տեղ պրակտիկանտների համար, իսկ Հայաստանին՝ ընդամենը համապատասխանաբար 37 և 72[1]: Եթե հաշվենք

[1] Հայաստանի ազգային արխիվ, Ф. 122, Наркомпрос Арм. ССР. Сп.1. Д. 943. Л.2. Протокол заседания междуведомственной комиссии по практике и стажу при Завнаркомтруде от 30 декабря 1927г.

յուրաքանչյուր շնչի հաշվով, ապա կունենանք հետևյալ պատկերը. Վրաստանում յուրաքանչյուր 10 000 մարդուն ընկնում էր 3.2 վերապատրաստվող և 11 պրակտիկանտ, Ադրբեջանում՝ 0.87 վերապատրաստվող և 7.6 պրակտիկանտ, իսկ Հայաստանում՝ համապատասխանաբար 0.4 և 0.81։

Խորհրդային Հայաստանում, ի տարբերություն հարևան հանրապետությունների, ուշացումով հիմնվեց նաև ասպիրանտական կոչումը՝ 1929թ. միայն։ Այդ պատաճառով ուշագրավ պատկեր է 1928թ. Անդրկովկասում ասպիրանտների կազմն ըստ ազգությունների. 40% վրացիներ, 40% թյուրքեր, 20%՝ ռուսներ, հայեր չկային ընդհանրապես [7, c. 232-233]։

Բոլոր տվյալները ցույց են տալիս, որ Անդրֆեդերացիայի շրջանակներում Հայաստանի ու հայ ժողովրդի շահերը ոտնահարված էին։ Այս երևույթը հաստատվում է նաև խորհրդահայ կուսակցական որոշ գործիչների տրամադրությունների քննության միջոցով, որոնք բացահայտվում են այսպես կոչված «հակահեղափոխական տարրերի մասին» 1930-ական թթ. զեկուցումներում։ 1936թ. մայիս-հուլիսին «բացահայտվեցին», իսկ հետագայում հալածանքների ենթարկվեցին «Ներսիկ Ստեփանյանի[1] հակահեղափոխական ահաբեկչական և ազգայնական խմբի» անդամները, որոնց մեղադրում էին Անդրֆեդերացիայի դեմ ուղղված գործունեություն ծավալելու մեջ։ Երկրորդ խմբին, որը բացահայտվեց 1936թ. նոյեմբերին, առաջադրված էին նույն մեղադրանքները։ Ահա մեջբերում ՀԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված Անդրֆեդերացիայի ՆԳԺԿ ՀԽՍՀ վարչության պետանվտանգության մայոր Խաչիկ Մուղդուսու զեկուցագրից. «Խումբն ընդհանուր առմամբ ուներ սուր արտահայտված ազգայնական, շովինիստական հակավրացական երանգ։ Կապված լինելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար դվուրուշնիկ[2] (*двурушник*) ազգայնական Խանջյանի հետ և նրանից համապատասխան տեղեկատվություն ստանալով անդրկովկասյան հանրապետությունների քաղաքական ու տնտեսական դրության, ՀամԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրամասային վարչության և անդրկովասյան այլ հիմնարկների անցկացրած միջոցառումների մասին, այս խումբը հայկական մարտնչող ազգայնականության դիրքերից զբաղված էր ՀամԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրամասային վարչության և անձնա-

[1] Հայկական ԽՍՀ լուսավորության ժողկոմ, հանրապետության մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, 1936թ. ձերբակալվեց, 1937թ. գնդակահարվեց։
[2] Անձ, ով ներկայանալով հավատարիմ՝ գաղտնի կերպով աշխատում է թշնամու օգտին։

պես ընկեր Բերիայի մասին չարամիտ զրպարտանքի տարածմամբ՝ մեղադրելով վերջինիս հակահայկական քաղաքականության իրականացման մեջ: Խումբը գտնում էր, որ ԽՍՀՄ փոքր ազգերի շրջանում ամենատաղանդավորն ու կուլտուրականը հայ ժողովուրդն է, սակայն նրա իրական ներուժի համար համապատասխան դաշտ չի ձևավորվում, քանի որ վրացիներից կազմված Անդրերկրամասի ղեկավարությունը կասեցնում է այդ ներուժի բացահայտումն ու դրսևորումը, որպեսզի արհեստականորեն առաջին պլան մղվի վրաց ժողովուրդը: Տնտեսական շինարարության բնագավառում խումբը գտնում է, որ Հայաստանը զգալիորեն հետ է մնում Վրաստանից: Հակահեղափոխական խմբի ղեկավար Ա.Եսայանը իր համախոհների շրջանում ՀԿ(բ)Կ Կենտկոմի տնտեսական քաղաքականությունը գնահատում էր որպես անհեռանկարային և այստեղից էլ հետևություն անում, որ եթե այս քաղաքականությունը շարունակվի նաև առաջիկա տարիներին, ապա Հայաստանին սպասվում է էլ ավելի աղքատացում: Բոլոր հակահեղափոխական ազգայնականներին բնորոշ ոճով Եսայանը հետևյալ ամփոփումն է անում, որ ողջ չարիքի աղբյուրը ՀամԿ(բ)Կ Անդրերկրամասից է բխում: Ինչպես ցուցմունք է տալիս ձերբակալված Դր. Տեր-Սիմոնյանը, Եսայանը եզրակացնում էր, որ… «*ՀամԿ (բ)Կ Անդրերկրամասը և նրա ղեկավարությունն անտեսում են Հայաստանի իրական կարիքները, ինչն Անդրերկրամասի հակահայկական քաղաքականության հետևանք է, այն իր ամբողջ ուշադրությունն ուղղել է Վրաստանին*» (Դ. Տեր-Սիմոնյանի ցուցմունքից, 11/XI-36թ.)[1]:

Անկասկած, զեկուցագրի տեքստը կեղծված է կուսակցական շարքերի «մաքրազերծման» և բռնաճնշումների անցկացման նպատակով: Սակայն այստեղ պարզ երևում են դժգոհության այն աղբյուրները, որոնք հետևողական քննության պարագայում, ինչպես տեսանք, ամենևին էլ անհիմն չեն: 1934թ. տվյալներով՝ 11 խորհրդային հանրապետությունների շարքում գյուղատնտեսական կադրերի պատրաստման քանակով Հայկական ԽՍՀ-ն գտնվում էր ամենավերջին տեղում[2]: Եվ զարմանալի չէ, որ երբ 1935թ.

[1] Հայաստանի ազգային արխիվ, Ֆ. Կ.-91, ց. 3, գ. 2276, թ. 31-44 (պատճեն, մեքենագիր), պատրաստեցին՝ *Մանուկյան Գ., Մխիթարյան Լ.,* Փաստաթղթեր 1930-ական թթ. քաղաքական բռնաճնշումների մասին // *Բանբեր Հայաստանի արխիվների,* Երևան, 2003, թիվ 2, էջ 69:

[2] *Левыкин К.,* КПСС организатор колхозного производства в годы второй пятилетки (1933-1937), М., 1969, с. 84. Հղումն՝ ըստ *Վիրաբյան Հ.,* Հայաստանում գյուղատնտեսական կադրերի պատրաստման պատմությունից (1920-1930-ական թվականներ) // Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2005, թիվ 2, էջ 217:

մարտին Կենտրոնական գործադիր կոմիտեն «գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտում ունեցած տարիների ակնառու հաջողությունների համար» առաջամարտիկներին շնորհում էր Լենինի շքանշան, այդ ցանկում էին Վրաստանը, Ադրբեջանն ու Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունը: Հայկական ԽՍՀ-ն և նրա ղեկավարությունը բացակայում էին[1]:

Խ.Մուղդուսու զեկուցագրից ևս մի հատված, որտեղ նույն բովանդակությամբ դժգոհություններ են հնչում. «Ա.Եսայանի հակահեղափոխական խմբի մասնակիցները շշուկներ էին տարածում, թե Ս.Տեր-Գաբրիելյանը[2] ՀամԿ(բ)Կ Անդրերկրամասի հակահայկական քաղաքականության զոհ է, որ Բերիան հեռացրեց Տեր-Գաբրիելյանին որպես ուժեղ և ինքնուրույն աշխատակցի… Նրանք վրդովվում էին, որ Տեր-Գաբրիելյանը, Հայաստանի Ժողկոմխորհի նախագահի պաշտոնից հեռանալիս, ոչ մի փաստաթույթ չի թողել ***Հայաստանի վիճակի և նրա հանդեպ Անդրերկրամասի ունեցած վերաբերմունքի մասին:*** Առանց ՀամԿ(բ)Կ Անդրերկրամասի դեմ պայքար մղելու Տեր-Գաբրիելյանի հեռանալը հակահեղափոխական խմբի ղեկավարներ Ա.Եսայանը, Ա.Եղիազարյանը և Ա.Երզնկյանը գնահատում էին որպես ***Հայաստանի և հայ ժողովրդի դեմ կատարած հանցագործություն***»[3] (ընդգծումը մերն է՝ *Թ. Վ.*):

Դր. Տեր-Սիմոնյանի ցուցմունքից, 22/Х-36թ. «Վահան Երեմյանը վառ արտահայտված հակաանդրերկրամասային սուբյեկտ է: Նա Դր. Տեր-Սիմոնյանի հետ ունեցած իր զրույցներից մեկում արտահայտվեց հետևյալ կերպ… «Ես Խանջյանին ասել եմ և քեզ էլ եմ ասում՝ պետք է ՀԿ(բ)Կ Կենտկոմի այնպիսի բյուրո հավաքել, որը կարող է բաց քաղաքական առճակատման գնալ ***ՀամԿ(բ)Կ Անդրերկրամասի Հայաստանի հանդեպ ունեցած քաղաքականության դեմ***՝ կոլեկտիվ կարգով պաշտոնից հրաժարվելու ճանապարհով: Թող որ նման բողոքի համար բյուրոյի բոլոր անդամներին մեկ անգամ ձերբակալեն, բայց ՀամԿ(բ)Կ Անդրերկրամասը մեծ հարված կստանա և կփոխի իր քաղաքականությունը հայկական խնդիրների նկատմամբ»[4]:

[1] Համեմատության համար նշենք, որ 1960-1970-ական թթ. երեք հանրապետությունների տնտեսական աճի պատկերը բոլորովին այլ է: Այսպես, յուրաքանչյուր շնչին ազգային եկամտի աճի տեմպերով 1970-1977թթ. Հայաստանն արդեն առաջամարտիկ էր ոչ միայն Անդրկովկասում, այլև ԽՍՀՄ 15 հանրապետությունների շարքում գտնվում էր առաջին տեղում (տե՛ս Народное Хозяйство СССР в 1977 году: статистический ежегодник, М., 1978, էջ 404):

[2] Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ 1928-1935թթ.:

[3] ՀԱԱ, Ֆ. Կ.-91, ց. 3, գ. 2276, թ. 31-44 (պատճեն, մեքենագիր), պատրաստեցին՝ *Մանուկյան Գ., Մխիթարյան Լ.,* Փաստաթղթեր 1930-ական թթ. քաղաքական բռնաճնշումների մասին // Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2003, թիվ 2, էջ 71:

[4] Նույն տեղում, էջ 73:

«Հակահեղափոխական ազգայնական կենտրոնի անդամ Ա.Եղիազարյանը հրճվում էր Անդրֆեդերացիայի վերացման փաստով և գտնում, որ դրա շնորհիվ ***Հայաստանը կազատագրվի ՀամԿ(բ)Կ Անդրերկրամասի և վրացիների լծից***: Նա համոզմունք էր հայտնում, որ Անդրֆեդերացիայի վերացման հետ մեկտեղ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը Հայաստան կուղարկի նոր քարտուղար՝ Խանջյանի փոխարեն, և միակ ընդունելի թեկնածուն այդ պաշտոնում նա համարում էր Հայկազ Կոստանյանին: Հայաստանի Կոմկուսի կենտկոմի բոլոր նախկին քարտուղարների շարքում Եղիազարյանը լավագույնը համարում էր Հ.Կոստանյանին, ***որի օրոք Հայաստանը Վրաստանի և Ադրբեջանի հետ նույն քաղաքական հարթության վրա էր գտնվում***»[1] (ընդգծումը մերն է՝ *Թ.Վ.*):

Դեկտեմբեր, 2014թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Martin T.,* The Affirmative Action Empire: Nations and Nationalism in the Soviet Union, 1923-1939, Cornell University Press, 2001; Пер. на русский: Мартин Т., Империя «положительной деятельности». Нации и национализм в СССР, 1923–1939, М., РОССПЭН, 2011.
2. КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК (1898–1971), 8-е изд., т. 2, М., 1970.
3. *Баберовски Й.,* Враг есть везде: Сталинизм на Кавказе (пер. с нем. В.Т. Алтухова), М., 2010.
4. *Топтыгин А.В.,* Неизвестный Берия, М., 2002.
5. *Мартин Т.,* Империя «положительной деятельности»: Нации и национализм в СССР, 1923-1939 (пер. с англ. О.Р. Щелковой), М., 2011.
6. *Simon G.,* Nationalism and Policy toward the Nationalities in the Soviet Union: From Totalitarian Dictatorship to Post-Stalinist Society. Boulder: Westview Press. 1991.
7. *Волков С.,* Интеллектуальный слой в советском обществе. М., 1999.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. *«ԱՐՄԱՏԱՎՈՐՄԱՆ» ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Թամարա Վարդանյան-Այվազյան

Ամփոփագիր

Ուսումնասիրվող խնդրի շուրջ համեմատական տվյալների և արխիվային նյութերի նախնական քննությունը վեր է հանում 1920-1930-ական թթ. Անդրկովկասում տարվող ազգային քաղաքականության մի շարք առանձնահատկություններ: Ադրբեջանի թյուր-

[1] Նույն տեղում, էջ 76:

քերը, գտնվելով ԽՍՀՄ «մշակութապես հետամնաց» ազգությունների ցանկում, լայնորեն օգտվում էին արմատավորման քաղաքականության բարիքներից: Այդ քաղաքականությունը մեծ թափ հաղորդեց Ադրբեջանում ազգակերտման գործընթացներին թյուրքական ինքնության հիմքի վրա: Վրացիները, կենտրոնական դիրքեր զբաղեցնելով Անդրֆեդերացիայում, որի վերահսկողական-օպերատիվ իրավասություններն ավելի ընդլայնվեցին 1929թ., վրացամետ ուղղվածություն հաղորդեցին այդ մարմնին և նույնպես կարողացան մեծապես օգտվել արմատավորման քաղաքականության ընձեռած արտոնություններից: Իսկ Հայաստանն ու հայ ժողովրդին այդ «դրական գործողությունների քաղաքականությունը» գրեթե շրջանցեց, որոշ ոլորտներում նույնիսկ հակառակ արդյունք արձանագրվեց, երբ կադրերի ազգայնացման փոխարեն տեղի էր ունենում այլազգիների ներթափանցում ՀԽՍՀ կուսակցական և կառավարման համակարգ: Այսպիսով, Խորհրդային Հայաստանն, ընդգրկվելով Անդրֆեդերացիայի կազմում, հայտնվեց քողարկված ներքին գերակայությունների վերջնամասում:

НАЦИОНАЛЬНАЯ ПОЛИТИКА В ЗАКАВКАЗЬЕ В 1920-1930ГГ. *ОСОБЕННОСТИ «КОРЕНИЗАЦИИ»*

Тамара Варданян-Айвазян

Резюме

Предварительно изучение архивных материалов и сопоставительных данных по исследуемому вопросу выявляет ряд особенностей национальной политики, осуществляемой в Закавказье в 1920-1930гг. Азербайджанские турки, будучи в советском списке «культурно отсталых» народностей, широко пользуются благами политики «коренизации». Эта политика сильно повлияла на формирование азербайджанской нации на основе тюркской идентичности. Грузины, занимая ведущее положение в Закфедерации, контрольно-оперативные полномочия которой еще более увеличились в 1929г., придали прогрузинскую направленность этой организации и тоже сумели максимально воспользоваться льготами, предоставляемыми политикой «коренизации». А Армению и армянский народ эта «политика положительных действий» практически обошла стороной, а в некоторых отраслях привела даже к обратному результату, когда вместо формирования национальных кадров в партийную и правительственную систему АрмССР проникли иноземцы. Таким образом, Советская Армения, входя в состав Закфедерации, оказалась на задворках латентных внутренних приоритетов.

ETHNIC POLICIES IN TRANSCAUCASIA IN 1920-1930s: *PECULIARITIES OF "INDIGENIZATION"*

Tamara Vardanyan-Ayvazyan

Resume

Preliminary review of comparative data and archive materials regarding the subject matter exposes a number of peculiarities of ethnic policies in Transcaucasia in 1920-1930s. The Turkic people of Azerbaijan were listed among the "culturally backward" ethnicities of the USSR, and hence, they reaped the benefits of indigenization policy. In Azerbaijan this policy significantly boosted the processes of nation-building based on Turkic identity. Georgians, on the other hand, had key positions in the Transcaucasian Federation, the control and action mandates of which expanded in 1929, and they were able to make it a Georgian-oriented entity, thus also benefitting from the opportunities provided by indigenization policy. As for Armenia and Armenian people, this "affirmative action policy" had almost no impact and in some areas even produced a reverse effect, as instead of indigenization of the cadres, persons of other ethnicities started gaining positions in the Communist party and governance system of the Armenian SSR. Thus, under the Transcaucasian Federation the Soviet Armenia found itself at the bottom of the concealed internal priorities list.

ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սամվել Մանուկյան*

Բանալի բառեր՝ աշխարհաքաղաքական կողմնորոշում, հասարակական գիտակցություն, աշխարհայացքային դիրքորոշումներ, ազգային հիմնախնդիրներ, կառավարում, մաթեմատիկական մոդելավորում, Եվրասիական տնտեսական միություն:

2014թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի նախագահը Մինսկում ստորագրեց Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) Հայաստանի անդամակցելու փաստաթուղթը: Առաջին հայացքից կարելի է ենթադրել, որ դրանով իսկ Հայաստանի և ԵՏՄ-ի միջև տնտեսական հարաբերությունները անարգել կզարգանան: Սակայն աշխարհում տեղի է ունենում աշխարհաքաղաքական լարվածությունների և հակասությունների աճ: Արևմուտքը՝ ԱՄՆ գլխավորությամբ, հզոր ճնշումներ է սկսել Ռուսաստանի Դաշնության նկատմամբ, որի նպատակն է կազմալուծել ռուսական Մեծ տարածքի վերականգնումը՝ ԵՏՄ տեսքով: Այդ ճնշումներն ակնհայտորեն համակարգային ռազմավարական ծրագրի մաս են կազմում: Այդ ռազմավարության շրջանակներում ակնհայտ է, որ հզորանալու է նաև «փափուկ ուժի» կիրառումը Ռուսաստանում և նրա դաշնակից երկրներում, այդ թվում նաև Հայաստանում: Փափուկ ուժի հիմքը հասարակական դիրքորոշումներն են և դրանց կառավարումը: Դրանց հիման վրա են կազմավորվում հասարակական և քաղաքացիական խմբերն ու շարժումները, որոնք, ըստ անհրաժեշտության, փոխակերպվում են գունավոր հեղափոխությունների: Ահա թե ինչու է կարևոր հասարակական դիրքորոշումների, մասնավորապես՝ ռուսամետ կողմնորոշման կառավարման հնարավորությունների ուսումնասիրությունը, որի օրինակը ներկայացված է հոդվածում:

---

* *IPSC* Քաղաքական և սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտ, վերլուծաբան, սոց.գ.թ.:

Հոդվածի առաջին մասում ներկայացված է Հայաստանի հասարակությունում ինտեգրացիոն դիրքորոշումների կառավարման ռազմավարական շրջանակը հասարակական գիտակցությունում առկա աշխարհայացքային պատկերացումների միջոցով, իսկ երկրորդ մասում՝ Հայաստանի ներկա ազգային խնդիրների համատեքստում:

Մաս 1. Հասարակության աշխարհայացքային դիրքորոշումները և ինտեգրացիոն կողմնորոշման կառավարումը

Ինչպես ցույց են տվել սոցիոլոգիական հետազոտությունները.

- **եթե Հայաստանի հասարակությանը պարտադրվում է փոխբացառող ընտրություն կատարել եվրասիական և եվրոպական ինտեգրացիոն նախագծների միջև, ապա այն գերադասում է եվրասիական ինտեգրացիան,**

որը հասարակության առօրյա գիտակցությունում նույնացված է որպես ռուսական Մեծ տարածք: Այսպես՝ ըստ «Կյանքի որակը Հայաստանի Հանրապետությունում, 2011թ.» հետազոտության (դեկտեմբեր, 2011) արդյունքների, **փոխբացառող ընտրության դեպքում** ռուսամետ դիրքորոշում ուներ հարցվածների (Հայաստանի 18 և ավելի տարիք ունեցող քաղաքացիների) 74.1%-ը, ըստ «Հայաստանի հասարակության դիրքորոշումները եվրասիական և եվրոպական ինտեգրացիաների նկատմամբ» հետազոտության (հոկտեմբեր, 2013)՝ 74.8%-ը, իսկ ըստ «Կյանքի որակը Հայաստանի Հանրապետությունում, 2013թ.» հետազոտության (հունվար, 2014)՝ նորից 74.8%-ը: Ռուսամետ դիրքորոշման նման բարձր մակարդակը վկայում է, որ հայ-ռուսական 200-ամյա հարաբերությունների ընթացքում հայ ժողովրդի պատմական հիշողությունում կազմավորվել է «**բարեկամ երկրի**» էթնիկ կոնստանտ, որի բովանդակային հիմքն է Ռուսաստանը:

Մյուս կողմից, նույն հետազոտություններից հայտնի է, որ ռուսամետ դիրքորոշումը համեմատաբար ավելի ցածր է երիտասարդների շրջանում, համեմատաբար ավելի բարեկեցիկ, համեմատաբար ավելի բարձր կրթամակարդակով հասարակական շերտերում և Երևանում, ընդ որում.

- **որքան ավելի հեռու է հայկական ավանդական ազգային մշակույթից տվյալ սոցիալական խմբի ենթամշակույթը, այնքան այդ խմբում ավելի ցածր է ռուսամետ կողմնորոշումը (Գծապատկեր 1):**

Գծապատկեր 1

Ռուսամետ կողմնորոշումները Հայաստանի տարբեր սոցիալական խմբերում



Ռուսամետ (կամ եվրոպամետ) կողմնորոշումների նման պայմանավորվածությունը սոցիալ-ժողովրդագրական բնութագրերով և ենթամշակութային պատկանելությամբ հեշտ է մեկնաբանվում: Հետազոտական տվյալների ընդհանրացումը հանգեցնում է այն եզրակացությանը, որ.

- **որքան ավելի բարձր է տվյալ սոցիալական խմբի ներկայացուցչի համար ավելի հարուստ, ավելի կարգավորված և ավելի անվտանգ (ինչպես այն ընդհանուր առմամբ դիրքավորված է հասարակական գիտակցությունում) եվրոպական հասարակությունում «իր տեղը գտնելու» հավանականությունը [հնարավորության չափի գնահատականը], այնքան այդ խմբում [մնացած հավասար պայմաններում] ցածր է ռուսամետ կողմնորոշումը:**

Ընդ որում,

- **քանի որ արդի, առնվազն 10 տարվա հետազոտությունները ցույց են տվել, որ ռուսամետ կողմնորոշումը հասարակության երիտասարդ շերտերում միշտ համեմատաբար ավելի ցածր է, հետևաբար, հասարակական գիտակցությունում առկա ընդհանուր միտումն է ժամանակի ընթացքում Հայաստանի հասարակությունում ռուսամետ կողմնորոշման նվազումը:**

Ակնհայտ է, որ համեմատաբար ավելի երիտասարդ, բարեկեցիկ և կրթված հասարակական շերտերում ռուսամետ կողմնորոշման նվազման միտումներն ավելի քան քառորդ դար տևած և ներկայում շարունակվող, տնտեսական հարաբերություններում՝ լիբերալ, իսկ արժեքային համակարգում՝ պոստմոդեռնիստական գաղափարախոսական հարացույցի ինտենսիվ ինֆորմացիոն-մշակութային էքսպանսիայի հետևանք են: Այդ էքսպանսիայի խնդիրներն են ազգի պատմական հիշողության, ավանդական մշակութային հարացույցի և հասարակական գիտակցության կազմալուծումը, որոնց բաղադրիչն է նաև ռուսամետ կողմնորոշումը, և Հայաստանում **«դասական ծայրամասային պետությանը» յուրահատուկ բնութագրերով լիբերալ սպառողական հասարակության կազմավորումը**:

Այդպիսի էքսպանսիա տեղի է ունենում ամբողջ աշխարհում: Դրա նպատակներն են ծայրամասային երկրների կառավարելիության աճը և այդ երկրների երիտասարդ, կրթված և բարեկեցիկ շերտերի («որակյալ մարդկային ռեսուրսի») հաշվին սեփական ժողովրդագրական, տնտեսական և գիտատեխնիկական ու տեխնոլոգիական խնդիրների լուծումը, այսինքն՝ վերջին հաշվով, աշխարհամակարգի արդի կենտրոնի կողմից մնացած աշխարհի նկատմամբ սեփական գերիշխանության պահպանումը:

Քանի որ Հայաստանի և հայ ժողովրդի **պատմական փորձն** ապացուցել է, որ Հայաստանի ինտեգրումը ռուսական Մեծ տարածքում հանդիսացել է հայ ժողովրդի անվտանգության և բարգավաճման երաշխիքը, հետևաբար.

- **Հայաստանի հասարակությունում ինտեգրացիոն դիրքորոշումների առկա միտումները խարխլում են Հայաստանի ազգային անվտանգության հիմքերը,**

  հետևաբար արդիական խնդիր է այն, թե.

- **ինչպե՞ս կառավարել Հայաստանի հասարակական գիտակցությունում առկա միտումներն այնպես, որպեսզի ամրապնդվեն և աճեն ռուսամետ կողմնորոշումները:**

Հոդվածում ներկայացված են այդ հարցի ուսումնասիրության մի քանի արդյունքներ: Այդ արդյունքները ստացվել են, մի կողմից՝ ռուսամետ դիրքորոշումների, իսկ մյուս կողմից՝ հասարակական հարաբերությունների, քաղաքականության և պատմական փորձի վերաբերյալ Հայաստանի հասարա-

կական գիտակցությունում առկա դիրքորոշումների և հասարակական արժեքների միջև փոխադարձ կապերի մաթեմատիկական մոդելավորման միջոցով: Փոխկապվածություններն ուսումնասիրվել են ինչպես Հայաստանի ամբողջ հասարակությունում, այնպես էլ առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերում:

Հետազոտությունում հարցվողներին ներկայացվում էին տարբեր աշխարհայացքային դրույթների ձևակերպումներ, չափվում էր դրանց հետ համաձայնության կամ անհամաձայնության աստիճանը: Աղյուսակ 1-ում ներկայացված են այդ դրույթները, դրանց հետ համաձայն հարցվածների քանակը, ինչպես նաև այդ դրույթների հետ համաձայնության ազդեցության ուժը ռուսամետ կողմնորոշման աճի վրա: Որքան ավելի մեծ է Աղյուսակ 1-ի չորրորդ սյունակի վանդակներում գրված թիվը, այնքան ավելի ուժեղ է տվյալ դիրքորոշման ազդեցության ուժը ռուսամետ կողմնորոշման վրա: Ընդ որում, եթե թիվը դրական է, ապա տվյալ դիրքորոշման հետ համաձայնությունը բարձրացնում է հարցվողի ռուսամետ կողմնորոշման առկայության հավանականությունը, իսկ եթե բացասական է, ապա նվազեցնում է: Վանդակում «+0»-ն նշանակում է, որ ռուսամետ դիրքորոշման վրա տվյալ դիրքորոշման ազդեցությունն ամբողջ հասարակության մասշտաբով չի հայտնաբերվել, սակայն այն բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերում, որտեղ այդպիսի ազդեցություն հայտնաբերվել է, այն ունեցել է դրական նշան: Համանման կերպով, «- 0»-ն նշանակում է, որ ռուսամետ դիրքորոշման վրա տվյալ դիրքորոշման ազդեցությունն ամբողջ հասարակության մասշտաբով չի հայտնաբերվել, սակայն այն բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերում, որտեղ հայտնաբերվել է այդպիսի ազդեցություն, այն ունեցել է բացասական նշան[1]: Առանձին սոցիալ-ժողովրդագրական և ենթամշակութային խմբերում ռուսամետ դիրքորոշումների վրա ազդող 18 մոդելները տրված են Աղյուսակ 2-ից Աղյուսակ 6-ում.

[1] Ըստ էության, Աղյուսակի 4-րդ սյունակում տրված է բազմաչափ գծային ռեգրեսիա, որի կախյալ փոփոխականն է «ռուսամետ կողմնորոշումը», իսկ անկախ փոփոխականներն են առաջին սյունակում տրված դրույթները: 4-րդ սյունակում տրված գործակիցները համապատասխան դրույթի ստանդարտեցված գործակիցներն են:

Աղյուսակ 1

Հայաստանի հասարակությունում աշխարհայացքային, քաղաքական և արժեքային դիրքորոշումները և դրանց ազդեցությունը ռուսամետ կողմնորոշման վրա

Հարց. «Որքանո՞վ եք Դուք համաձայն կամ որքանո՞վ համաձայն չեք հետևյալ դրույթներին»	**Համա-ձայն են**	**Հարցի միջոցով գնահատվող կոնցեպտը**	**Ռուսամետ դիրքորոշման վրա ազդե-ցության ուժը[1]**
«Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպական միության հետ (կախյալ փոփոխական)	75%	**Ռուսամետ կողմնորոշում**	-
1. «ԽՍՀՄ կազմալուծումից մենք ավելի շատ կորցրեցինք, քան շահեցինք»	79%	Ռուսական Մեծ տարածքում գտնվելու պատմական փորձի գնահատականը	0.174
2. «Ինչ էլ որ ասեն ու խոսեն, վերջին հաշվով ամեն ինչ որոշում է փողը»	85%	«Փողի քաղաքակրթության» էության ադեկվատ ընկալում	0.099
3. «Տոկոսով պարտք տալը փող աշխատելու անարդար ձև է»	77%	Վաշխառուական աշխարհայացքի մերժում	0.069
4. «Այսօր Հայաստանին պետք է ոչ թե ժողովրդավարություն, այլ ուժեղ ձեռքով կառավարում»	73%	Կարգավորված հասարակության պահանջ	0.076
5. «Այսօրվա կապիտալիստական համակարգը գերադասելի է սոցիալիստականից»	33%	Դիրքորոշումը «սոցիալիզմ – կապիտալիզմ» սանդղակում	-0
6. «Պետությունը պաշտպանում է առավելապես հասարակ մարդկանց շահերը»	17%	[Դրույթի հետ անհամաձայնությունը արտահայտում է անձի] օտարվածությունը պետությունից	+0
7. «Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է Ձեզ նման մարդկանց շահերը»	34%	[Դրույթին անհամաձայնությունը արտահայտում է անձի] օտարվածությունը կուսակցական համակարգից	0.113

[1] Գծային ռեգրեսիայի ստանդարտեցված գործակիցները: Տրված են այն գործակիցները, որոնք վիճակագրորեն նշանակալի են α≤0.05 մակարդակում:

Հարց. «Որքանո՞վ եք Դուք համաձայն կամ որքանո՞վ համաձայն չեք հետևյալ դրույթներին»	Համա-ձայն են	Հարցի միջոցով գնահատվող կոնցեպտը	Ռուսամետ դիրքորոշման վրա ազդե-ցության ուժը
«Գերադասելի է, որ Հայաստա-նը միավորվի ավելի շուտ Ռու-սաստանի, քան Եվրոպական միության հետ (կախյալ փոփո-խական)	75%	**Ռուսամետ կողմնորոշում**	-
8. «ՀՀ կուսակցությունները պաշտպանում են ոչ թե ժողովրդի, այլ իրենց ղեկավարների շահերը»	86%	Կուսակցական համակարգի վերնախավային բնույթը	+0
9. «Հայաստանում իշխանափո-խությունը կբարելավի սովո-րական մարդկանց վիճակը»	48%	Իշխանության նկատմամբ ոչ լոյալություն	-0.072
10. «Հայաստանի ամենահա-րուստ մարդիկ խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը»	73%	Տնտեսական վերնախա-վերի դերի բացասական գնահատական	±0

Նախ, դիտարկենք Հայաստանի հասարակությունում առկա աշխարհայացքային դիրքորոշումները և արժեքները: Աղյուսակ 1-ի տվյալների հպանցիկ դիտարկումից բխում է, որ.

- **Հայաստանի հասարակությունը ճիշտ է ընկալում արդի գլոբալ քաղաքակրթության էությունը՝ դա «փողի քաղաքակրթություն» է (85%): Ընդ որում, հասարակության երեք քառորդի (77%) համար անընդունելի է փողի քաղաքակրթության տնտեսական հիմքը՝ «տոկոսով փող պարտք տալը»: Հասարակության երկու երրորդը (67%) համարում է, որ «սոցիալիստական համակարգը գերադասելի է կապիտալիստականից»:**
- **Հասարակության երեք քառորդը (73%) ցանկանում է ապրել «ուժեղ ձեռքով» կարգավորված հասարակությունում:**
- **Մարդկանց համարյա 80%-ը Հայաստանը ռուսական Մեծ տարածքում ընդգրկվածության ժամանակաշրջանը համարում է հասարակության համար ավելի բարենպաստ, քան նրա ներկայիս վիճակը:**
- **Մարդիկ համարում են, որ պետությունը պաշտպանում է վերնախավերի շահերը (83%):**
- **Նրանք բացասական են գնահատում վերնախավերի դերը:**

- **Մասնավորապես, տնտեսական վերնախավերի դերը բացասական է գնահատում հարցվածների 83%-ը:**
- **Իրեն օտարված է զգում կուսակցական համակարգից 66%-ը, որը, մարդկանց կարծիքով, «առաջ է տանում կուսակցական առաջնորդների շահերը» (86%):**
- **Համապատասխանաբար, հասարակությունում լոյալությունն ու ոչ լոյալությունը իշխանությանը մոտավորապես նույն մակարդակի վրա են**[1]:

Աղյուսակ 1-ի չորրորդ սյան տվյալները բացահայտում են ռուսամետ ինտեգրացիոն դիրքորոշումների դինամիկայի մի շարք առանձնահատկությունները: Այդ տվյալներից բխում է, որ **երբ աճում է.**

1. ռուսական Մեծ տարածքում գտնվելու պատմական փորձի գնահատականը,
2. «փողի քաղաքակրթության» էության ադեկվատ ընկալումը,
3. վաշխառուական աշխարհայացքի մերժումը,
4. կարգավորված հասարակության պահանջը և
5. կողմնորոշումը դեպի սոցիալիզմ,

ապա աճում է նաև ռուսամետ դիրքորոշումը:

Մյուս կողմից, երբ աճում է.

6. պետությունից օտարվածության մակարդակը,
7. կուսակցական համակարգից օտարվածության մակարդակը,
8. կուսակցական համակարգի վերնախավային լինելու դիրքորոշումների մակարդակը և
9. ոչ լոյալությունն իշխանություններին,

ապա ռուսամետ դիրքորոշումների մակարդակը նվազում է:

Ռուսամետ դիրքորոշումների վրա ազդեցության տեսակետից ամբիվալենտ է միայն.

10. տնտեսական վերնախավերի նկատմամբ բացասական դիրքորոշումը:

[1] Հարկ է նշել, որ իշխանություններին լոյալության զգալի մասնաբաժինը պայմանավորված է կուսակցական համակարգի նկատմամբ ընդհանուր բարձր անվստահությամբ, որի մասն են կազմում ընդդիմադիր կուսակցությունները: Այդ պատճառով մի կուսակցության իշխանության փոխարինումը մեկ այլ կուսակցության իշխանությամբ մարդիկ համարում են անիմաստ, որն էլ վերածվում է գործող իշանության նկատմամբ լոյալության:

Մասնավորապես, բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում (Աղյուսակ 3) և բարեկեցության վերին տերցիլում (Աղյուսակ 4) որքան ավելի բացասական է գնահատվում տնտեսական վերնախավերի դերը, այնքան նվազում է ռուսամետ դիրքորոշումը: Իսկ «արվարձանային» և «ռոք» ենթամշակութային խմբերում, ընդհակառակը, որքան ավելի բացասական է գնահատվում տնտեսական վերնախավերի դերը, այնքան աճում է ռուսամետ կողմնորոշումը (Աղյուսակ 6):

Քննարկենք երկու հարց: Առաջին՝ ինչո՞ւ են դիտարկված աշխարհայացքային դիրքորոշումներն ազդում ռուսամետ (կամ եվրոպամետ) կողմնորոշման վրա: Եվ երկրորդ՝ ի՞նչն է պայմանավորում այդ ազդեցության բնույթը (ուղղությունը):

Նախ, դիտարկենք 1-5 «**գաղափարախոսական» [կառավարող] փոփոխականները**:

Հայաստանի հասարակությունը ոչ միայն ադեկվատ է ընկալում կապիտալիզմի, այսինքն՝ փողի վրա հիմնված քաղաքակրթության բուն էությունը, այլև չի ցանկանում ապրել այդպիսի հասարակությունում: Տնտեսական լիբերալիզմը (= «փողի քաղաքակրթությունը») ժամանակակից հայ հասարակություն ներմուծվեց Արևմուտքից, ընդ որում՝ «ժողովրդավարության» հետ միասին: Սակայն շուտով պարզ դարձավ, որ **փողի քաղաքակրթությունում ժողովրդավարությունը նույնպես ապրանք է**, ընդ որում՝ բավական թանկ ապրանք: Ով շատ փող ունի, կարող է ավելի շատ «ժողովրդավարություն» գնել՝ իր ձայնը դարձնելով «ավելի լսելի», իսկ իրեն՝ բավարար նշանակալի: Հասարակ մարդու համար «ժողովրդավարությունը» դարձավ շատ փող ունեցող մարդկանց նկատմամբ ամենաթողության համարժեքը: Ժողովուրդն իմաստուն է՝ նա հասկացավ, որ շատ քչերը կարող են շատ փող «աշխատել» [այսինքն՝ այնքան, որքան անհրաժեշտ է «ժողովրդավարություն» գնելու, իսկ ավելի լայն իմաստով՝ պատվարժան կերպով ապրելու համար] փողի քաղաքակրթության «առաջնորդ երկրների» հումքային կցորդ հանդիսացող երկրում, այսինքն այստեղ՝ Հայաստանում: Այդ պատճառով էլ նրանց համար հասարակության պարզ կարգավորումը՝ օրինականության հաստատումը «ուժեղ ձեռքով», մնացած հավասար պայմաններում, գերադասելի է քչերի համար հասանելի «ժողովրդավարությունից»:

Իսկ հնարավո՞ր է արդյոք «փողի քաղաքակրթությանն» այլընտրանք քաղաքակրթություն: Հայաստանի հասարակության երկու երրորդը գիտե, որ դա հնարավոր է, քանի որ նա **տեսել է այդպիսի հասարակություն.** հասարակություն**,** որտեղ «փողը ամենակարևորը չէր», որտեղ փողը չէր, որ վերջին հաշվով «ամեն ինչ որոշում էր», որտեղ վարկային տոկոսը տնտեսությունում ուներ չնչին նշանակություն, իսկ մարդկանց միջև հարաբերություններում համարվում էր նողկանքի արժանի, որտեղ «ուժեղ ձեռքը» հաճախ բավական խիստ պատժում էր և՛ փող, և՛ իշխանություն ունեցողներին: Նրանք այդ տեսել են Խորհրդային Միությունում [որը ռուսական Մեծ տարածքի իդեովարիացիաներից էր] սոցիալիզմի ժամանակ: Իսկ Ռուսաստանն առօրյա գիտակցությունում շաղկապված է ինչպես Խորհրդային Միությանը, այնպես էլ սոցիալիզմին:

Վերոշարադրյալն էլ արտապատկերվել է մաթեմատիկական մոդելներում՝ ինչպես ռուսամետ կողմնորոշումը պայմանավորող գործոնների բովանդակությունում, այնպես էլ դրանց ազդեցության բնույթում (ուղղությունում):

Այժմ դիտարկենք 6-10 **«քաղաքական» [կառավարող] փոփոխականները:**

Ինչո՞ւ օտարվածությունը պետությունից, կուսակցական համակարգից և ոչ լոյալությունն իշխանություններին նվազեցնում են ռուսամետ կողմնորոշումը: Մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ ցույց են տվել, որ Հայաստանում իշխանություններից օտարվածությունն ավելի մեծ է, իսկ լոյալությունը համեմատաբար ցածր այն հասարակական շերտերում, որոնցում համեմատաբար ավելի ցածր է նաև ռուսամետ կողմնորոշումը, այսինքն՝ երիտասարդները, բարձրագույն կրթությամբ անձինք և Երևանի բնակչությունը, ինչը և արտահայտվել է մոդելներում:

Տնտեսական վերնախավերի դերի գնահատականի ամբիվալենտությունը պայմանավորված է նրանով, որ համեմատաբար ավելի կրթված և ավելի բարեկեցիկ անձինք համարում են, որ «օլիգարխների սանձահարումը» հնարավոր է եվրոպական քաղաքական մշակույթում: Այդ պատճառով, որքան ավելի բացասական են նրանք գնահատում տնտեսական վերնախավերի դերը, այնքան նրանց շրջանում ավելի է աճում եվրոպամետ դիրքորոշումը (համապատասխանաբար՝ նվազում ռուսամետը): Իսկ «արվարձանային» ենթամշակույթի անձանց համար «օլիգարխներից» բխող խնդիրները լուծվում են Ռուսաստանում արտագնա աշխատանքների հնարավորությամբ: Այդ պատճառով, որքան ավելի բացասական են նրանք գնահատում «օլիգարխնե-

րի» դերը, այնքան նրանց համար կարևորվում է Ռուսաստանում աշխատելու հնարավորությունը և, հետևաբար, ռուսամետ կողմնորոշումը:

«Ռոք» ենթամշակույթի անձանց մի շարք բնութագրերի խորացված վերլուծությունը ցույց տվեց, որ հասարակական և քաղաքական խնդիրների լուծումներում նրանք հակված են առավել «արմատական» միջոցների կիրառմանը: Մյուս կողմից, հայտնի է, որ օլիգարխների վճռական սանձահարումը հատկանշական է ռուսական, այլ ոչ թե եվրոպական քաղաքական մշակույթին, ինչը, հավանաբար, համապատասխանում է այդ փոքրաքանակ, սակայն շատ ակտիվ խմբի աշխարհայացքին և կենսակերպին:

Աղյուսակ 2-ից Աղյուսակ 6-ի համապատասխան սյունակների տվյալները ցույց են տալիս, թե որ գործոնն ինչ ուժով և ինչ ուղղությամբ է ազդում ռուսամետ կողմնորոշման վրա **այն հասարակական խմբերում, որտեղ այդ կողմնորոշումները համեմատաբար ավելի ցածր են**, մասնավորապես՝ 18-30 տարեկանների շրջանում (Աղյուսակ 2), բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում (Աղյուսակ 3), առավել բարեկեցիկ անձանց շրջանում (Աղյուսակ 4), Երևանի բնակչության շրջանում (Աղյուսակ 5) և ավանդական ազգային մշակույթից առավել հեռու գտնվող ենթամշակութային խմբերում (Աղյուսակ 6): Ընթերցողի համար դժվարություն չի ներկայացնի աղյուսակային տվյալների ինքնուրույն մեկնաբանությունը:

Աղյուսակ 2

Ռուսամետ դիրքորոշումների վրա ազդող գործոնները տարիքային խմբերում

«Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպական միության հետ (կախյալ փոփոխական)	**18-29**	**30-45**	**46-60**
1. «ԽՍՀՄ կազմալուծումից մենք ավելի շատ կորցրեցինք, քան շահեցինք»	0.183	0.138	0.202
7. «Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է Ձեզ նման մարդկանց շահերը»	0.129	0.129	-
4. «Այսօր Հայաստանին պետք է ոչ թե ժողովրդավարություն, այլ ուժեղ ձեռքով կառավարում»	0.098	0.093	-
2. «Ինչ էլ որ ասեն ու խոսեն, վերջին հաշվով ամեն ինչ որոշում է փողը»	-	0.116	0.102
6. «Պետությունը պաշտպանում է առավելապես հասարակ մարդկանց շահերը»	-	-	0.116
5. «Այսօրվա կապիտալիստական համակարգը գերադասելի է սոցիալիստականից»	-	- 0.125	-

Աղյուսակ 3

Ռուսամետ դիրքորոշումների վրա ազդող գործոնները կրթամակարդակային խմբերում

«Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպական միության հետ (կախյալ փոփոխական)	**Միջ-նա-կարգ**	**Միջին մաս-նագ.**	**Բարձ-րա-գույն**
1. «ԽՍՀՄ կազմալուծումից մենք ավելի շատ կորցրեցինք, քան շահեցինք»	-	-	0.354
10. «Հայաստանի ամենահարուստ մարդիկ խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը»	-	-	-0.112
2. «Ինչ էլ որ ասեն ու խոսեն, վերջին հաշվով ամեն ինչ որոշում է փողը»	0.195	0.132	-
7. «Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է Ձեզ նման մարդկանց շահերը»	0.108	-	-
4. «Այսօր Հայաստանին պետք է ոչ թե ժողովրդավարություն, այլ ուժեղ ձեռքով կառավարում»	-	0.122	-

Աղյուսակ 4

Ռուսամետ դիրքորոշումների վրա ազդող գործոնները բարեկեցության խմբերում

«Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպական միության հետ (կախյալ փոփոխական)	**Ներքին տերցիլ**	**Միջին տերցիլ**	**Վերին տերցիլ**
1. «ԽՍՀՄ կազմալուծումից մենք ավելի շատ կորցրեցինք, քան շահեցինք»	-	0.148	0.221
2. «Ինչ էլ որ ասեն ու խոսեն, վերջին հաշվով ամեն ինչ որոշում է փողը»	0.188	-	0.191
3. «Տոկոսով պարտք տալը փող աշխատելու անարդար ձև է»	-	-	0.130
6. «Պետությունը պաշտպանում է առավելապես հասարակ մարդկանց շահերը»	-	-	0.113
10. «Հայաստանի ամենահարուստ մարդիկ խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը»	-	-	-0.104
7. «Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է Ձեզ նման մարդկանց շահերը»	0.111	0.117	-
4. «Այսօր Հայաստանին պետք է ոչ թե ժողովրդավարություն, այլ ուժեղ ձեռքով կառավարում»	-	0.210	-

Աղյուսակ 5

Ռուսամետ դիրքորոշումների վրա ազդող գործոնները բնակավայրի տիպերում

«Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպական միության հետ (կախյալ փոփոխական)	**Երևան**	**Քաղաք**	**Գյուղ**
1. «ԽՍՀՄ կազմալուծումից մենք ավելի շատ կորցրեցինք, քան շահեցինք»	0.237	-	-
3. «Տոկոսով պարտք տալը փող աշխատելու անարդար ձև է»	0.148	-	-
6. «Պետությունը պաշտպանում է առավելապես հասարակ մարդկանց շահերը»	0.119	-	-
4. «Այսօր Հայաստանին պետք է ոչ թե ժողովրդավարություն, այլ ուժեղ ձեռքով կառավարում»	0.099	0.182	-
2. «Ինչ էլ որ ասեն ու խոսեն, վերջին հաշվով ամեն ինչ որոշում է փողը»	-	0.222	0.158
8. «ՀՀ կուսակցությունները պաշտպանում են ոչ թե ժողովրդի, այլ իրենց ղեկավարների շահերը»	-	-	0.162
7. «Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է Ձեզ նման մարդկանց շահերը»	-	-	0.146

Պարզ է, որ.

- **Աղյուսակների տվյալներն իրենցից ներկայացնում են Հայաստանի հասարակությունում որպես ամբողջություն** (Աղյուսակ 1) **և հասարակական յուրաքանչյուր խմբում** (Աղյուսակ 2-ից Աղյուսակ 6) **ռուսամետ կողմնորոշումների կառավարման ռազմավարական հարացույցները:**

Այնուամենայնիվ, ընդգծենք աղյուսակային տվյալներից (մաթեմատիկական մոդելներից) բխող առավել կարևոր եզրակացությունները.

- **բոլոր այն հասարակական խմբերում, որտեղ ռուսամետ կողմնորոշումը համեմատաբար ցածր է, դրա բարձրացմանը նպաստող ամենահզոր գործոնն է խորհրդային ժամանակաշրջանի Հայաստանի պատմության վերաբերյալ տեղեկացվածությունը:**
- Նշենք, որ դրանք այն խմբերն են (երիտասարդական, կրթված, բարեկեցիկ և երևանաբնակ), **որոնցում կենտրոնացված են ներկայիս և ապագայի հասարակական վերնախավերը**, այսինքն՝ նրանք, ովքեր, ըստ սահմանման, առավել նշանակալի ազդեցություն ունեն հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացների վրա:

Աղյուսակ 6

Ռուսամետ դիրքորոշումների վրա ազդող գործոնները ենթամշակութային խմբերում

«Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպական միության հետ (կախյալ փոփոխական)	**Ենթամշակույթներ**					
	Ամբողջ	դպրոցական	դպրոցական	«ոչվնաց-ոչվնաց»	«փոփ»	«ՀԱՄ»
3. «Տոկոսով պարտք տալը փող աշխատելու անարդար ձև է»	0.170	-	-	-	-	-
2. «Ինչ էլ որ ասեն ու խոսեն, վերջին հաշվով ամեն ինչ որոշում է փողը»	0.157	0.178	-	-	-	-
1. «ԽՍՀՄ կազմալուծումից մենք ավելի շատ կորցրեցինք, քան շահեցինք»	-	0.206	0.272	-	0.226	-
5. «Այսօրվա կապիտալիստական համակարգը գերադասելի է սոցիալիստականից»	-	-	-0.249	-	-	-
7. «Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է Ձեզ նման մարդկանց շահերը»	-	-	-	0.217	-	-
10. «Հայաստանի ամենահարուստ մարդիկ խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը»	-	-	-	0.130	-	0.412
4. «Այսօր Հայաստանին պետք է ոչ թե ժողովրդավարություն, այլ ուժեղ ձեռքով կառավարում»	-	-	-	-	0.163	0.446
9. «Հայաստանում իշխանափոխությունը կբարելավի սովորական մարդկանց վիճակը»	-	-	-	-	-0.122	-0.306

Ստացված արդյունքները հուշում են նաև, թե ինչ և ինչպես անել.

- **անհրաժեշտ է ամբողջականացնել Հայաստանում երիտասարդ սերնդի (մինչև 35 տարեկաններ) պատմական հիշողությունն իր այն հատվածով, որը վերաբերում է Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանին:**

Դրա համար հարկավոր է Հայաստանի տեղեկատվական դաշտում և կրթական համակարգում ընդգրկել խորհրդային ժամանակաշրջանի պատմության, տնտեսության, մշակույթի և սոցիալական հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները, հայեցակարգերն ու գաղափարները, իսկ

ավելի լայն համատեքստում՝ XIX դարի երկրորդ կեսի և ամբողջ XX դարի պատմությունը: Մասնավորապես, հարկ է օգտագործել խորհրդային գեղարվեստական ֆիլմերի և խրոնիկայի հզոր ներուժը, վերիմաստավորել և վերակազմել պատմության և գրականության դպրոցական ծրագրերն ու դասագրքերը, վերափոխել համալսարանական հասարակագիտական առարկաների ամբողջ կորպուսը, մասնավորապես տեխնիկական և բնագիտական մասնագիտությունների ուսանողների համար մշակել պարտադիր և ֆակուլտատիվ հասարակագիտական ծրագրեր[1]:

Ակնհայտ է, որ բնակչության լայն շրջանակների հետ տեղեկատվական-կրթական աշխատանքներ իրականացնելու համար արդյունավետ կարող է լինել «Գիտելիք» ընկերության տիպի կառույցի կազմավորումը: Նոր տեղեկատվական և կրթական տեխնոլոգիաներն ունակ են քանիցս ընդլայնել բնակչության ընդգրկումը նման կառույցի գործունեության շրջանակում: Այդ կառույցը կարող է կազմավորվել ինչպես Եվրասիական տնտեսական միության առանձին երկրներում, այնպես էլ այդ միության արդեն առկա կառույցների ներքո: Կառույցի գործունեության շրջանակներում հարկ է հաշվի առնել, որ կրթադաստիարակչական ամենահզոր ազդեցությունն ունի դասախոսի և լսարանի ուղղակի շփումը:

Հայաստանի երիտասարդության պատմական հիշողության ամբողջականության վերականգնումն, անշուշտ, ավելի լայն խնդրի մի հատվածն է:

Մեթոդաբանական տեսակետից անհրաժեշտ է հաշվի առնել, որ արդի ցանկացած ազգային կամ միջազգային լուրջ խնդիր անհրաժեշտ է դիտարկել միասնական հասարակագիտական հայեցակարգերում, որտեղ համադրված են պատմական, տնտեսական, սոցիոլոգիական, քաղաքագիտական և մշակութաբանական տեսակետները: Հայաստանյան խնդիրների ներազգային տեսակետները պարտադիր կերպով պետք է դիտարկվեն նաև գլոբալ և տարածաշրջանային համատեքստերում և դրանց գոնե հիմնական դերակատարների տեսակետներից:

[1] Հիմքեր կան ենթադրելու, որ այդ ուսանողներն են, ովքեր ունակ են առավել ադեկվատ ընկալելու հասարակագիտական տեսությունները և դրանց հիման վրա իմաստավորելու իրականությունը, առավել ևս, որ այդ տեսություններից շատերն իրենց հայեցակարգային հիմքերը փոխառել են բնական գիտություններից: Այդ մասնագետներն ունեն ավելի տրամաբանական, ներդաշնակ և կարգապահ մտածելակերպ, որը համապատասխան տեղեկությունների առկայության դեպքում նվազ ենթակա է ինֆորմացիոն մանիպուլյացիաներին:

Դրանով իսկ, **ինստիտուցիոնալ տեսակետից** կարևորվում են բազմապրոֆիլ ազգային ուղեղային կենտրոնների առկայությունը և դրանց համագործակցությունը ոչ միայն միմյանց, այլև ակադեմիական ինստիտուտների և համալսարանական ամբիոնների ու կենտրոնների միջև, ինչպես նաև տարբեր ոլորտներում (կրթական, առողջապահական, սոցիալական, տնտեսական) ազգային ռազմավարություններ մշակող **ազգային [պետական] ինստիտուտների հետ**:

Հատկապես կարևոր է ձերբազատվել այն պրակտիկայից, երբ միջազգային ֆինանսական կառույցների ճնշումների ներքո **ազգային ինստիտուտները և նախարարություններն** ազգային ոլորտային քաղաքականությունները մշակում են միջազգային կառույցների փորձագետների հայեցակարգային պարտադրության և վերահսկողության ներքո: Միջազգային կառույցների ճնշումները հակակշռելու տեսակետից արդյունավետ կարող է դիտվել ազգային ուղեղային կենտրոնների, ակադեմիական ինստիտուտների և համալսարանական ամբիոնների ու կենտրոնների ընդգրկումը քաղաքականությունների մշակման և փորձաքննության գործընթացներում:

Մոդելներից բխող երկրորդ կարևոր եզրակացությունն այն է, որ.

- **դասական ենթամշակութային խմբում սոցիալիստական դիրքորոշումների աճը բարձրացնում է ռուսամետ կողմնորոշումը:**

Նախ հարկ է նշել, որ.

- **դասական ենթամշակութային խումբը մտավորական վերնախավի կիզակետն է:**

Ներկայում, երբ գլոբալ միտումները ցույց են տալիս, որ հասունանում է սոցիալական և տնտեսական հասարակարգի նոր հարացույցների փնտրման անհրաժեշտությունը, սոցիալիզմի տեսության և պրակտիկայի վերիմաստավորումը վերածվում է այդ հարացույցների մշակման անհրաժեշտ պայմանի: Այդ պատճառով հույժ կարևոր են դառնում հասարակական այնպիսի դիսկուրսի ընդլայնումն ու խորացումը, որի բովանդակությունն ընդգրկում է սոցիալիզմի ազգային և միջազգային փորձը, ինչպես նաև այդ բովանդակության ընդգրկումը պատմություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա և քաղաքագիտություն առարկաների համալսարանական համապատասխան հատուկ կուրսերում: Դրանք ոչ միայն նոր կազմավորվող մտավորական վերնախա-

վում կբարձրացնեն ռուսամետ կողմնորոշումը, այլև լայն դաշտ կբացեն նոր հասարակագիտական մշակումների համար, որոնցում արդեն վաղուց «**ժանրի ճգնաժամ է**» գլոբալ ընդգրկմամբ:

Դա հատկապես կարևոր է նոր կազմավորվող Մեծ տարածքում, որտեղ արդեն անհրաժեշտություն է դարձել նոր, այդ թվում ինտելեկտուալ գերճիգի անհրաժեշտությունը:

Մաս 2. Հայաստանի ազգային հիմնախնդիրները և ինտեգրացիոն կողմնորոշումների կառավարումը

Հոդվածի առաջին մասում դիտարկվեցին հասարակության ինտեգրացիոն դիրքորոշումների վրա հասարակական գիտակցությունում առկա աշխարհայացքային դիրքորոշումների և քաղաքական կոնյունկտուրայի (քաղաքական, կուսակցական և տնտեսական վերնախավերից օտարվածության և քաղաքական լոյալության) ազդեցության բնույթն ու ուժը: Ներկայացվեցին նաև այդ դիրքորոշումների միջոցով հասարակության ինտեգրացիոն կողմնորոշումների կառավարման ռազմավարական հարացույցները:

Բնական է ենթադրել, որ Հայաստանի հասարակությունում ինտեգրացիոն կողմնորոշման վրա ազդում են նաև այն հիմնարար ազգային խնդիրները, որոնց արդյունավետ լուծումները հնարավոր չեն առանց Հայաստանի ընդգրկման որևէ Մեծ տարածքում:

Այն հարցը, թե ռուսական կամ եվրոպական Մեծ տարածքներից որն է ավելի բարենպաստ Հայաստանի ազգային հիմնախնդիրների լուծման տեսակետից, դիտարկվել է «Հայաստանի հասարակության դիրքորոշումները եվրասիական և եվրոպական ինտեգրացիայի նկատմամբ» հետազոտությունում[1]: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Հայաստանի հասարակությունն ազգային հիմնախնդիրների լուծման տեսակետից ռուսական Մեծ տարածքի հետ ինտեգրումը, ընդհանուր առմամբ, շատ ավելի գերադասելի է համարում եվրոպականից: Հասարակական դիրքորոշումների կոնֆիգուրացիան ներկայացված է Գծապատկեր 2-ում: Գծապատկերից երևում է, որ հասարակական գիտակցությունում ռուսական Մեծ տարածքի հետ ինտեգրումը գերադասելի է Հայաստանի համար հետևյալ հիմնախնդիրների տեսակետից.

1. որպես դաշնակից թուրք-ադրբեջանական ռազմական վտանգի դեպքում,

[1] http://www.soyuzinfo.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf

2. որպես Հայաստանի դաշնակից Ղարաբաղյան հակամարտությունում,
3. Հայաստանի արդյունաբերության զարգացման ոլորտում,
   իսկ եվրոպական Մեծ տարածքն ավելի գերադասելի է.
4. Հայաստանի գիտության զարգացման և
5. իրավական պետության կայացման ոլորտներում:
   Բացի դրանից,
6. Հայաստանի հասարակության համար գազի և էլեկտրաէներգիայի ցածր գները (որոնք հնարավոր են ռուսական Մեծ տարածքում) գերադասելի են եվրոպական ապրանքների ցածր գներից և
7. Հայաստանի հասարակության համար շատ կարևոր է դեպի Ռուսաստան աշխատանքային միգրացիայի հնարավորությունը:

Գծապատկեր 2

Ռուսաստանի և Եվրոպական միության հետ համագործակցության գերադասելիությունը տարբեր ոլորտներում



Այնուամենայնիվ, ռուսական Մեծ տարածքի գրավչությունը համեմատաբար ավելի ցածր է երիտասարդ, ավելի բարեկեցիկ, ավելի կրթված շերտերում և երևանաբնակների շրջանում: Հետևաբար,

- **ժամանակի ընթացքում Հայաստանի հասարակությունում ռուսական Մեծ տարածքի գրավչությունը միտված է նվազման:**

Ակնհայտ է, որ եթե անձը համարում է, որ տվյալ Մեծ տարածքը գերադասելի է նշված յոթ ազգային հիմնախնդիրներից յուրաքանչյուրի տեսակետից, ապա, մնացած հավասար պայմաններում, նրա մոտ ա՛յդ Մեծ տարածքի հետ ինտեգրման հակվածության հավանականությունը կլինի ավելի մեծ: Այդ պատճառով ազգային խնդիրների լուծման ոլորտում տվյալ Մեծ տարածքի գերադասելիության դիրքորոշման կառավարումը [ամրապնդումը կամ աճը] հանդիսանում է հասարակության ինտեգրացիոն կողմնորոշումների կառավարման գործոն, հետևաբար, ազգային անվտանգության տեսակետից ունի ռազմավարական նշանակություն:

Սակայն հասարակական դիրքորոշումների, հատկապես հասարակության կենսական շահերին վերաբերող դիրքորոշումների փոփոխությունը դժվարին և ռեսուրսատար խնդիր է: Այդ պատճառով կարևոր է գիտենալ, թե դիտարկված դիրքորոշումներից որո՞նք ունեն ինտեգրացիոն դիրքորոշումների կառավարման ամենամեծ ներուժը:

Մյուս կողմից, տարբեր հասարակական խմբերի համար դիտարկված ազգային խնդիրներն ունեն տարբեր արժեք և նշանակություն և, հետևաբար, այդ խմբերում ինտեգրացիոն կողմնորոշումների կառավարման տարբեր պոտենցիալներ:

Այսպիսով, առաջանում են կոնկրետ հարցեր.

- **Հայաստանի հասարակությունում և դրա առանձին սոցիալական խմբերում ինտեգրացիոն կողմնորոշումների կառավարման ի՞նչ պոտենցիալ ունի դիտարկված յոթ ազգային խնդիրներին վերաբերող դիրքորոշումներից յուրաքանչյուրը:**

Այլ կերպ՝ հաշվի առնելով ռեսուրսային սահմանափակումները, անհրաժեշտ է որոշել, թե հասարակական որ խմբի հետ ինչի մասին պետք է խոսել, ինչպես խոսել և ինչքան խոսել՝ ստանալու համար անհրաժեշտ ինտեգրացիոն դիրքորոշումների ամրապնդման և աճի առավելագույն արդյունքը:

Ստորև ներկայացված են այդ հարցի ուսումնասիրության արդյունքները:

Կառուցվել են մաթեմատիկական մոդելներ, որոնք ցույց են տալիս, թե որքանով կարող է աճել ռուսամետ կողմնորոշումն ամբողջ հասարակությունում կամ կոնկրետ սոցիալ-ժողովրդագրական խմբում՝ կախված նրանից, թե որքանով է աճել տվյալ ազգային հիմնախնդիրը ռուսական Մեծ տա-

բածքում լուծելու դիրքորոշումը: Կառուցված մոդելները ներկայացված են Աղյուսակ 7-ում[1].

Աղյուսակ 7

Հայաստանի հասարակությունում և սոցիալ-ժողովրդագրական խմբերում ինտեգրացիոն կողմնորոշումների կառավարման մոդելները

Սոցիալական խմբեր	բացասական դիրքորոշում -վերելքանցումներին	մինչև ՀՆԱ	դրամեթաղաքա-նշան մինչև Եվրոպի սաշ	վերջնական մարդու իրա-ունք	ՆԳ վերջ վիճակ և մինչև ՆԳ.	բացասական դիրքորոշում	դրամեթաղաքական միավորումներին ազգանունների
Ընդամենը	0.250	0.175	0.149	0.132	0.083	-	-
Տարիք							
18-29	0.159	0.206	0.139	0.192	-	-	-
30-44	0.196	0.176	0.166	0.153	0.249	-	-
45-59	0.379	0.183	0.169				
60 <	0.323	0.193	-	-	-	-	-
Սեռ							
Տղամարդիկ	0.190	0.224	0.152	-	-	0.138	0.086
Կանայք	0.270	0.146	0.140	0.130	0.079	-	-
Կրթություն							
Միջնակարգ	0.201	0.221	0.150	0.203	-	-	-
Միջին մասնագիտական	0.350		-	-	0.178	-	-
Թերի բարձրագույն	-	0.275	-	-		-	-
Բարձրագույն	0.275	0.206	0.215	-	-	-	-

[1] Ուսումնասիրվել են երկու տիպի մոդելներ: Նախ, կառուցվել են լոգիստիկ ռեգրեսիոն մոդելներ, որոնք առավել ադեկվատ են առկա տվյալների կառուցվածքին: Սակայն, քանի որ այդ մոդելները բավական յուրահատուկ են ընկալման և մեկնաբանության համար, այդ պատճառով կառուցվել են նաև գծային ռեգրեսիոն մոդելները: Համապատասխան մոդելների համեմատությունը ցույց տվեց, որ լոգիստիկ և գծային մոդելների սպեցիֆիկացիաները նույնական են: Նույնական էին նաև համապատասխան մոդելներում համապատասխան ռեգրեսիոն գործակիցների ռանգերը: Հետևաբար, կառուցված գծային ռեգրեսիոն մոդելները նույնպես ադեկվատ են և չեն աղավաղում կախյալ և անկախ փոփոխականների միջև կապերի կոնֆիգուրացիաները:
Աղյուսակներում տրված են գծային ռեգրեսիաների ստանդարտացված գործակիցները: Ներկայացված են այն գործակիցները, որոնք վիճակագրորեն նշանակալի են α≤0.05 մակարդակում:

Սոցիալական խմբեր	Հանրապետության -ավերվողությունը	ՀՀ մարզերի	Ադրբեջանական -ոշնորհ վիճակը	Վերջերի մարդ- -ուժի դիրքը	Ղեկի վրան Ս.Էլեոնորայի և մյուսների	Հանրապետության գոյությունը	Ադրբեջանական վերլուծությունը ղեկավարելու
Ընդամենը	0.250	0.175	0.149	0.132	0.083	-	-
Բնակավայրի տիպ							
Երևան	0.264	0.282	0.123	-	-	-	0.103
Քաղաք	0.285	0.149	0.120	0.108	0.150	-	-
Գյուղ	0.198	-	-	0.223	-	-	-
Բարեկեցություն							
Միջինից ցածր	0.231	0.173	0.164	0.118	-	-	-
Միջին	0.243	0.184	0.166	0.152	0.089	-	-
Միջինից բարձր	0.317	0.178	-	-	0.180	-	-
Զբաղվածության տիպը							
Վարձու աշխատողներ	0.254	0.193	0.179	-	-	-	-
Ինքնազբաղ-վածներ	0.350	0.210	-	-	-	-	-
Գործազուրկներ	0.286		0.226	0.274	-	-	-
Ուսանողներ	-	0.328	-	-	-	-	-
Թոշակառուներ	0.337	-	-	-		-	-
Չաշխատողներ	0.166	0.260	-	-	0.198	-	-
Կախյալ փոփոխական՝ «Կողմնորոշումը դեպի ռուսական Մեծ տարածքը»							

Աղյուսակում յուրաքանչյուր տողը մեկ մոդել է ներկայացնում: Առաջին տողում տրված է Հայաստանի ամբողջ հասարակության (18 և ավելի տարեկան բնակչության) համար կառուցված մոդելը: Մնացած տողերում ներկայացված են առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերի համար կառուցված մոդելները: Աղյուսակի սյունակներում ներկայացված են այն ազգային խնդիրները, որոնց նկատմամբ դիրքորոշումների փոփոխությունն ունակ է առաջացնել ռուսամետ կողմնորոշումների փոփոխություն:

Որքան ավելի մեծ է բացարձակ արժեքով գործակիցը, այնքան ուժեղ է համապատասխան դիրքորոշման փոփոխության ազդեցությունը ռուսամետ

կողմնորոշման վրա: Աղյուսակի բոլոր սյունակների և տողերի գործակիցնե-րը համադրելի են միմյանց հետ: Վարդագույն են այն վանդակները, որոնց համապատասխանող ազգային խնդիրների նկատմամբ դիրքորոշումներն առավել հզոր ազդեցություն ունեն ռուսամետ կողմնորոշման վրա տվյալ սոցիալ-ժողովրդագրական խմբում:

Նշենք Աղյուսակ 7-ի մոդելներից բխող կարևորագույն հետևությունները.

- **Հայաստանի հասարակությունում՝ որպես ամբողջություն, ռուսամետ կողմնորոշման ամենահզոր պոտենցիալն ունի այն դիրքորոշումը, որ «ռուսական Մեծ տարածքում ընդգրկումը կնպաստի Հայաստանի արդյունաբերության զարգացմանը»:**
- **Հայաստանի հասարակությունում՝ որպես ամբողջություն, ռուսամետ կողմնորոշման աճին նպաստող հզորությամբ երկրորդ դիրքորոշումն այն է, որ «Ղարաբաղյան հիմնախնդրում Ռուսաստանն ավելի հուսալի դաշնակից է, քան Եվրոպական միությունը»:**

Գծապատկեր 3

Սոցիալ-ժողովրդագրական խմբերում տարբեր դիրքորոշումների ազդեցությունների հարաբերական հզորությունները ռուսամետ կողմնորոշման վրա: «Ղարաբաղյան հիմնախնդրում դաշնակից» գործոնի ազդեցությունը ուսանողական խմբում = 100:



Դիտարկենք ռուսամետ կողմնորոշման աճին նպաստող գործոններն այն սոցիալ-ժողովրդագրական խմբերում, որտեղ այդ կողմնորոշումը համե-

մատաբար ավելի ցածր է (Գծապատկեր 3): Գծապատկերում դիրքորոշումների ազդեցությունները նորմավորված են այնպես, որպեսզի ամենահզոր գործոնի ազդեցությունը հավասար լինի 100-ի, ինչը դյուրինացնում է գործոնների հարաբերական հզորությունների ընկալումը:

Գծապատկերի տվյալներից բխում են հետևյալ եզրակացությունները.

- **այն դիրքորոշումը, որ «ռուսական Մեծ տարածքն ավելի բարենպաստ է Հայաստանի արդյունաբերության զարգացման համար, քան եվրոպականը», ռուսամետ կողմնորոշումը բարձրացնող ամենահզոր գործոնն է «պրոբլեմատիկ» հինգ խմբերից [որտեղ ռուսամետ կողմնորոշումը համեմատաբար ցածր է] երեքում՝ համեմատաբար ավելի կրթված, համեմատաբար ավելի բարեկեցիկ խմբերում և երևանաբնակների շրջանում:**

Ստացված արդյունքից ելնելով՝ նշենք, որ Հայաստանի և Ռուսաստանի արդյունաբերական համալիրների ինտեգրացիայի տեղեկատվական ապահովումը հույժ կարևոր նշանակություն ունի ինտեգրացիոն գործընթացի նախնական փուլում:

Անհրաժեշտ է Հայաստանի և Ռուսաստանի արդյունաբերական պոտենցիալների վերինտեգրման հայեցակարգերի և պլանների և՛ հանրամատչելի, և՛ պրոֆեսիոնալ լայն ու ինտենսիվ հանրային քննարկում: Հարկավոր է հանրությանը և մասնագետներին ներկայացնել կոնկրետ նախագծերի մշակման և իրականացման ընթացքը: Հատկապես կարևոր է կոնկրետ «մասնավոր» պլաններն իրականացնելիս հաղթահարել բիզնեսին հատուկ գաղտնապահությունը: Կարևոր է հանրությանն ապացուցել, որ Հայաստանի և Ռուսաստանի տնտեսական ինտեգրումը պարզապես մի քանի օլիգարխիկ խմբերի հարստացման միջոց չէ, ովքեր չեն կարողացել «հարմար դիրքավորվել» դեպի Արևմուտք տանող դռների հետևում առաջացած կոմպրադորական հերթերում, այլ այնպիսի քաղաքականություն է, որի նպատակն է ամբողջ հասարակության բարեկեցությունը (հիշենք, որ Հայաստանի հասարակության 73%-ը համարում է, որ «Հայաստանի ամենահարուստ մարդիկ խոչընդոտում են երկրի զարգացմանը»[1]): Պետք է խուսափել որևէ կուսակցության կողմից վերինտեգրման գաղափարախոսության և ռազմավարության բռնա-

[1] http://www.soyuzinfo.am/upload/pdf/2014_Upravleniye%20integracionnymi%20ustanovkami%20v%20armyanskom%20obshestve.pdf , էջ 3, Աղյուսակ 2:

գրավումից (հիշենք, որ հասարակության 86%-ը համարում է, որ «կուսակցությունները պաշտպանում են ոչ թե ժողովրդի, այլ իրենց առաջնորդների շահերը»): Անհրաժեշտ է խուսափել գործընթացի գերատեսչական գաղտնիացումից (հիշենք, որ հասարակության միայն 17%-ն է համարում, որ «պետությունը պաշտպանում է հասարակ մարդկանց շահերը»):

Նշված համատեքստում՝

- **հատկանշական է, որ այդպես էլ ոչ ոք չտեսավ Հայաստանի և Եվրոպական միության ասոցիացման պայմանագիրը, այդ թվում նաև դրա տնտեսական բաղադրիչը,**

չնայած դրա հրապարակումը ծայրահեղ անհրաժեշտ էր ոչ միայն հասարակության հետ ինտեգրացիոն կողմնորոշումների վերաբերյալ երկխոսության տեսակետից, այլև այսօր էլ, տեղեկատվական դաշտում Եվրասիական տնտեսական միության դեմ տարվող հզոր քարոզչական գրոհների համատեքստում, մնում է հույժ կարևոր՝ ԵՏՄ-ում Հայաստանի ինտեգրացիոն գործընթացի մասին հասարակությանն ադեկվատ տեղեկացման տեսակետից:

Անհրաժեշտ է արդյունաբերական վերամիավորման խնդիրների քննարկումներում ընդգրկել տնտեսության իրական հատվածից գիտակ մարդկանց, ովքեր, չնայած քառորդ դար տևած օստրակիզմին, այնուամենայնիվ, կարողացել են մնալ տնտեսության իրական հատվածում, ինչպես նաև գիտատեխնիկական մտավորականությանը, որը գիտե և հիշում է ռուսական բարձր տեխնոլոգիական տնտեսության այն կլաստերները, որտեղ կարող է պահանջված լինել Հայաստանի գիտատեխնիկական պոտենցիալը: Հենց ա՛յդ մարդիկ պետք է վերածվեն արդյունաբերական վերինտեգրման հարցերում կարծիքների առաջնորդների: Անհրաժեշտ է լիբերալ «մակրոտնտեսագետների» փոխարեն, ովքեր մտածում են բացառապես «դրամավարկային քաղաքականության» տերմիններով և հանուն «գների ինդեքսի կայունության» պատրաստ են թաղել ցանկացած արդյունաբերական քաղաքականություն, խոսքը տալ այն տնտեսագետներին, ովքեր ունեն արդյունաբերության տարբեր ճյուղերի պլանավորման, կազմակերպման և կառավարման փորձ և հասկանում են, թե ինչ է նշանակում **տնտեսության կոմպլեքսային պլանավորում:**

- **Այնուամենայնիվ, միշտ պետք է հիշել, որ տեղեկատվական քաղաքականությունը չի կարող ունենալ երկարատև արդյունավետություն, եթե այն չի համապատասխանում իրականությանը:**

Հետևաբար, Հայաստանի իշխանությունները պետք է անհապաղ սկսեն արդյունաբերական ինտեգրացման հետ կապված աշխատանքները՝ այդ մասին ինտենսիվորեն տեղեկացնելով հասարակության լայն շերտերին:

Գծապատկեր 3-ի տվյալներից բխող երկրորդ կարևոր եզրակացությունն այն է, որ.

- **դիրքորոշումը, որ «Ղարաբաղյան հիմնահարցում Ռուսաստանն ավելի հուսալի դաշնակից է, քան Եվրոպական միությունը», 18-20 տարեկան երիտասարդների և ուսանողության խմբերում ռուսամետ կողմնորոշումը բարձրացնող ամենահզոր գործոնն է:**

Այս արդյունքը հուշում է, թե ինչ խութերից պետք է խուսափել եվրասիական տնտեսական ինտեգրացիայի գործընթացում:

Վերջին քառորդ դարի ընթացքում Ղարաբաղյան հիմնահարցն ունեցել է և մինչև այսօր էլ ունի Հայաստանի ներքաղաքական վիճակի ապակայունացման ամենամեծ պոտենցիալը: Այդ հարցում անհամապատասխան դիրքորոշումը դարձավ 1998թ. Հայաստանի առաջին նախագահի պաշտոնաթողության պատճառը: Այսօր եվրոպական ինտեգրացիայի կողմնակիցներն առաջ են քաշում այն թեզը, որ Հայաստանի անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը կարող է խոչընդոտել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական հարաբերություններին: Այդ իդեոլոգեմի տարածումը կարող է հզոր ազդեցություն գործել ոչ միայն ուսանողական «հատուկ» խմբի վրա, այլև փոխել ինտեգրացիոն կողմնորոշումների կոնֆիգուրացիան Հայաստանի հասարակական գիտակցությունում (տե՛ս Աղյուսակ 7-ի երրորդ սյան տվյալները): Այդ պատճառով եվրասիական ինտեգրացիայի քաղաքական գործընթացում հարկ է, որպեսզի դրա մասնակիցները հույժ նրբանկատ լինեն ոչ միայն հանրային հայտարարություններում, այլև որոշումներում: Ներկայում աշխարհաքաղաքական իրավիճակն ամբողջ Եվրասիայում լարված է և շարունակում է սրվել: Դեռևս հիմքեր չկան ենթադրելու, թե տեսանելի ապագայում այդ լարվածությունը կարող է թուլանալ: Այդ պատճառով հարկ է նկատի ունենալ, որ Եվրասիական տնտեսական միությունում սեփական դիրքերի ամրապնդման նպատակով Ղարաբաղյան հիմնահարցի նման կրիտիկական աշխարհաքաղաքական հանգույցների չկշռադատված գրգռումը կարող է այդ միության ընդդիմադիր-

ների կողմից օգտագործվել Հայաստանում ներքաղաքական իրավիճակի ապակայունացման և Հայաստանի ինտեգրացիոն վեկտորի փոփոխության նպատակով: Հետխորհրդային տարածքում կան այդպիսի օրինակներ:

Մյուս կողմից, եթե ենթադրենք, որ ԵՏՄ գործընթացում որոշ ուժերի համար կրիտիկական աշխարհաքաղաքական հանգույցի՝ ԼՂՀ հիմնախնդրի գրգռումն ունի ռազմավարական ուղղվածություն և նպատակ, ապա հարկ է հաշվի առնել դրա հնարավոր հետևանքների մի քանի սցենարներ, օրինակ՝ հետևյալը:

Այսօր Հայաստանի Հանրապետություն – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն տանդեմը Անդրկովկասում եվրասիական ինտեգրացիայի առաջխաղացման ամենահուսալի հենարանն է: Այն միաժամանակ նաև աշխարհաքաղաքական գործընթացների և կառուցվածքների յուրահատուկ *տրիգգեր* է (փոխանջատիչ): Ղարաբաղյան հանգույցում ներկայիս ստատուս-քվոյի փոփոխությունը՝ անկախ նրանից, թե որ ինտեգրացիոն նախագծում՝ եվրոպական, թե եվրասիական, այն տեղի կունենա, մի կարգ կնվազեցնի Հայաստանի աշխարհաքաղաքական սուբյեկտությունը: Այդ դեպքում, թե՛ ինքնաբերաբար, թե՛ եվրասիական ինտեգրացիայի ընդդիմադիրների աջակցությամբ, բնականորեն, աշխարհաքաղաքական և քաղաքակրթական տրամաբանության հիման վրա, կձևավորվի Եվրասիական միությանը մրցակից մեկ այլ ինտեգրացիոն նախագիծ՝ թյուրքականը[1]: Քանի դեռ ակտուալ է Արևմուտքի կողմից նախաձեռնված «Իսլամական խալիֆայություն» նախագիծը, որը սպառնում է Միջին Արևելքի, Միջին Ասիայի և Հարավային Ասիայի բոլոր աշխարհիկ պետություններին՝ անկախ նրանց քաղաքակրթական կամ ենթաքաղաքակրթական պատկանելությունից, թյուրքական ինտեգրացիոն նախագիծը հավանաբար կընթանա «ֆոնային ռեժիմում», սակայն «Իսլամա-

[1] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների կողմից 2004-2013թթ. ընթացքում Ադրբեջանում իրականացված 10 հետազոտությունները ցույց են տվել, որ ադրբեջանցիների 90%-ից ավելին Թուրքիան համարում է Ադրբեջանի կարևորագույն ռազմավարական գործընկերն ու դաշնակիցը, իսկ իրենց ընկալում են որպես թյուրքական քաղաքակրթական տարածքի անդամ: Տե՛ս *Manukyan S., Kyureghyan E.,* “Armenians, Georgians and Azerbaijanis on the Civilizational Crossroad: Searching for “Caucasian Identity”. Mathematical Analysis.” *The 39th World Congress of the International Institute of Sociology: “Sociology at the Crossroads”*, *Herald of Yerevan University: “Sociology, Economics”* N(1) 130.5 (2010), pp. 20-25, կամ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների 2004-2013թթ. տվյալների հավաքագրման նախաձեռնություն և Կովկասյան բարոմետր ծրագրերի տվյալների շտեմարանները. http://www.crrc.am/research-and-surveys/caucasusbarometer/documentation

կան խալիֆայության» վտանգի նվազեցմանը զուգընթաց (անկախ նրանից, թե երբ դա տեղի կունենա)՝ կսկսի աճել թյուրքական ինտեգրացիոն նախագծի և՛ ներքին (քաղաքակրթական և միջպետական), և՛ արտաքին (Արևմուտքի համար) ֆունկցիոնալությունը:

Հետևաբար, թեթևամիտ կլիներ ներկայում և ռազմավարական հեռանկարում եվրասիական ինտեգրացիայի քաղաքական և աշխարհաքաղաքական ամբողջականությունն ու կայունությունն ապահովող «ՀՀ – ԼՂՀ» ենթահամակարգի փոխանակումը ակնհայտորեն կարճատև հեռանկարում տակտիկական նշանակություն ունեցող որևէ օգուտի հետ:

Ռուսական Մեծ տարածքի XX դարի պատմությունը լի է այդպիսի օրինակներով, որոնք ներկայում արյունալի իրադարձություններով հիշեցնում են նախկինում տեղի ունեցած նմանատիպ անհամարժեք փոխանակումների մասին:

Սեպտեմբեր, 2014թ.

ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սամվել Մանուկյան

Ամփոփագիր

Հայաստանի հասարակությունն ինտեգրացիան Ռուսաստանի կողմից ձևավորվող աշխարհաքաղաքական և տնտեսական տարածքում գերադասում է Եվրոպական միության հետ ինտեգրացիայից: Այնուամենայնիվ, վերջին քառորդ դարի ընթացքում Հայաստանի ընդգրկումը գլոբալ տեղեկատվական-մշակութային տարածքում Հայաստանի երիտասարդության շրջանում առաջացրել է այդ դիրքորոշումների փոխակերպում: Հոդվածում, սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների հիման վրա կառուցված մաթեմատիկական մոդելների միջոցով, կազմավորվել են Հայաստանի հասարակությունում և դրա առանձին սոցիալական շերտերում ինտեգրացիոն կողմնորոշումների կառավարման ռազմավարական հարացույցները: Որպես ինտեգրացիոն կողմնորոշումների կառավարման փոփոխականներ են դիտարկվել հասարակությունում առկա աշխարհայացքային դիրքորոշումները, ինչպես նաև այլընտրանքային ինտեգրացիոն նախագծերի բնութագրերը Հայաստանի ազգային հիմնախնդիրների լուծման ոլորտում:

УПРАВЛЕНИЕ ИНТЕГРАЦИОННЫМИ ОРИЕНТАЦИЯМИ В ОБЩЕСТВЕ АРМЕНИИ

Самвел Манукян

Резюме

Армянское общество в целом предпочитает интеграцию в Российское Большое пространство интеграции в Европейское Большое пространство. Тем не менее за последнюю четверть века вследствие включения Армении в глобальное информационно-культурное пространство среди армянской молодежи происходит трансформация конфигурации интеграционных ориентаций. В статье посредством использования математических моделей, построенных на основе баз данных социологических опросов, разработаны стратегические парадигмы управления интеграционными ориентациями в армянском обществе в целом и в его отдельных социальных слоях. В качестве управляющих переменных интеграционных ориентаций рассмотрены как мировоззренческие установки в армянском обществе, так и приоритеты альтернативных интеграционных проектов для решения фундаментальных национальных проблем Армении.

INTEGRATION ORIENTATIONS MANAGEMENT IN ARMENIAN SOCIETY

Samvel Manukyan

Resume

Orientation towards integration with the Russian geopolitical space in Armenian society prevails over the one towards integration with the European space. However, involvement of the Armenian society in the global information/cultural space during the last quarter of a century period leads to transformation of the integration orientations' configuration among the Armenian youth. The paradigms of integration orientations management in Armenian society as a whole and its certain social groups are developed in the article based on the mathematical models constructed using the databases of sociological surveys. The world-view attitudes in Armenian society and priorities of alternative integration projects for solution of Armenian national problems are utilized as control factors.

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Դավիթ Սարգսյան*

Բանալի բառեր ՝ եվրոպական ինտեգրում, «Արևելյան գործընկերություն», Եվրոպայի կերպար, հանրային-քաղաքական դիսկուրս, աշխարհաքաղաքական երկընտրանք, ինտեգրացիոն ուղեգիծ, Ասոցացման պայմանագիր:

Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունն ու մասնակցությունն աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերին անխուսափելի է. որևէ երկիր չի կարող լինել անջատ, կտրված տարածաշրջանից և աշխարհից: Բացի պետական-պաշտոնական օղակներից, որոնք իրավասու են զբաղվելու երկրի ինտեգրացիոն գործընթացների կարգաբերմամբ և դրանցում Հայաստանի տեղի ու դերի սահմանմամբ, վերջին տարիներին հայաստանյան հասարակական-քաղաքական շրջանակները ևս ակտիվորեն քննարկում և վերլուծում են մեր պետության աշխարհաքաղաքական կողմնորոշման հնարավոր տարբերակները, փորձում գտնել դրանցից առավել հիմնավորն ու օգտավետը: Հայրենական լրատվամիջոցները ոչ միայն նմանատիպ հանրային-քաղաքական քննարկումների կիզակետում են, այլև հաճախ հենց իրենք են օրակարգ առաջադրում՝ երկրի իշխանությանն ու ընդդիմությանն ստիպելով քաղաքական որոշակի դիրքորոշում որդեգրել, վերջինիս առկայության դեպքում էլ հիմնավորել այն:

Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման և ինտեգրացիոն ուղեգծի ընտրության թեմայի հետևողական արծարծումները հայրենական մամուլի կողմից ինքնանպատակ չեն: Նախ, հարցի վերհանումը և համակողմանի քննարկումը շատ լրատվամիջոցներում դիտարկվում են մեր երկրի ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև աշխարհաքաղաքական կարևորության, քաղաքակրթական և գաղափարախոսական մակարդակի, երբեմն ան-

* ԵՊՀ Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի ասպիրանտ:

գամ ազգային ճակատագրի և պատմական առաքելության ծիրում: Ինտենսիվորեն քննարկվում է հայաստանյան հասարակության ինքնանույնականացման հարցը եվրոպական կամ եվրասիական արժեհամակարգին մերձենալու համատեքստում, մինչդեռ ինքնաբավության վարկածը գրեթե չի շրջանառվում: Պետական կարգը, սոցիալական և տնտեսական ապահովվածությունը, իշխանությունների լեգիտիմությունը, ժողովրդավարության և մարդու իրավունքների վիճակն ու խոսքի ազատությունը ևս հաճախ մեր մամուլի կողմից վերագրվում են բացառապես ՀՀ ինտեգրացիոն կողմնորոշմանը:

Իր հերթին, արտասահմանյան (ռուսաստանյան և արևմտյան) լրատվադաշտը ևս ակտիվորեն ներգրավված է տարածաշրջանային տեղեկատվական և քարոզչահոգեբանական գործողությունների թնջուկում: Հայաստանը, լինելով և՛ եվրոպական, և՛ եվրասիական վերպետական կազմավորումների հետաքրքրության ոլորտում, հաճախ է հայտնվում արևմտյան և ռուսական լրատվամիջոցների թողարկումներում: Իհարկե, պայմանավորված պաշտոնական Երևանի արտաքին քաղաքականության ուղեգծի երբեմնակի փոփոխություններով՝ եվրոպական և ռուսաստանյան ԶԼՄ-ն ժամանակ առ ժամանակ հետևողական չեն գտնվում ներքին լսարաններում Հայաստանի կերպարի կերտման հարցում, էական է դառնում ընդամենը Հայաստանի երկարաժամկետ հավատարմությունն իրենց: Մասնավորապես, նման կերպ վարվեցին եվրոպական շատ լրատվամիջոցներ 2013թ. սեպտեմբերին, երբ Հայաստանի իշխանությունները մտադրություն հայտնեցին անդամակցել Մաքսային միությանը: ՌԴ-ն և ռուսաստանյան մամուլն, իրենց հերթին, բավական զգայուն են Հայաստանի և եվրոպական կառույցների փոխհարաբերությունների խորացման որևէ միտման ի հայտ գալու դեպքում:

Հայաստանյան նորօրյա մամուլի տարեգրությունը թեև սկսվում է 1988-89թթ., անկախ հանրապետությանը՝ 1991-ից, սակայն եվրոպական թեմատիկան և Եվրոպայի հետ հարաբերություններն ամենևին էլ առաջնային տեղ չեն զբաղեցրել մեր ԶԼՄ-ում ընդհուպ մինչև 1990-ականների վերջը, երբ երկիրն զբաղված էր արցախյան գոյապայքարով, Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացմամբ, էներգետիկ ճգնաժամի և սոցիալ-տնտեսական աղետալի իրավիճակի հաղթահարմամբ, ԶԼՄ-ն էլ, բնականաբար, այդ ամենի լուսաբանմամբ: 1990-ականների սկզբին լրագրողները կա՛մ սահմանափակվում էին եվրոպական կառույցների մասին պաշտոնական տեղեկատվության

տրամադրմամբ, այն էլ՝ հայաստանյան իշխանությունների հետ գործակցության համատեքստում, կա՛մ էլ Եվրոպայի խորհրդանշական, իրականությունից որոշակիորեն կտրված կերպար էին կերտում:

Արցախյան պատերազմի տարիներին եվրոպական կառույցների և երկրների լրատվական հիշատակումները գրեթե մշտապես պայմանավորված էին հակամարտության հանգուցալուծման հարցում դրանց ունեցած դերով: Այսպես, Մեծ Բրիտանիան, որն առանձնապես ակտիվ ու հետաքրքրված չէր տարածաշրջանով, մամուլի էջերում ներկայանում էր բացառապես հայ ժողովրդի բարեկամ, Լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսի կերպարով: Հայաստանյան ընթերցողի համար ինչ ասես չարժե «Երկիր» թերթի 1993-ի հունվարի 6-ի համարի ամենախոսուն վերնագիրը՝ «Բարոնուհի Քոքս. «Ուրախ եմ, որ Սուրբ ծնունդը կանցկացնեմ Ղարաբաղում»[1]: Ընդհանուր առմամբ, եվրոպական բոլոր կառույցները՝ Եվրախորհրդարանը, ԵԱՀԽ-ն (հետագայում՝ ԵԱՀԿ-ն), Եվրոպայի խորհուրդը, ինչպես նաև առանձին եվրոպական երկրներ, օրինակ՝ Ֆրանսիան կամ Իտալիան, նորանկախ Հայաստանի ԶԼՄ-ն ներկայացնում են հիմնականում հայության օրախնդիր հոգսերի՝ պատերազմի, երկրաշարժի, սոցիալ-տնտեսական ճգնաժամի ֆոնին նրանց ցուցաբերած հետաքրքրության համատեքստում: Հանրապետական մամուլում լայնորեն լուսաբանվեցին ԵԱՀԿ 1994թ. Բուդապեշտի և 1996թ. Լիսաբոնի գագաթաժողովները, որոնցում անդրադարձ կար նաև արցախյան հիմնախնդրին: 1999թ. ստամբուլյան գագաթաժողովի լայն լուսաբանմանը խոչընդոտեց մամուլի և հանրության ուշադրության շեղումը դեպի հոկտեմբերի 27-ի ԱԺ ահաբեկչությունն ու դրա աղետալի հետևանքները:

Ընդհանուր առմամբ, ինտեգրացիոն գործընթացների մասին 1990-ականների ԶԼՄ լրատվական հրապարակումներում ոչ միայն խոսք չկար, այլև, հակառակը, նոր փլուզված Միության բեկորների վրա հայաստանյան մամուլին չափից դուրս անիրատեսական էր թվում որևէ վերպետական կառույցում ներգրավվելը: 1990-ականների երկրորդ հնգամյակը Հայաստանի ներքաղաքական կյանքում շատ ավելի հակասական ու դրամատիկ ստացվեց, և մամուլն էլ հիմնականում թիրախավորեց ներհայկական դեպքերն ու դեմքերը: Զանգվածային լսարանի համար եվրահանձնակատարները կարծիքի առաջնորդներ չէին, իսկ հայաստանյան իշխանություններին ուղղված

[1] http://ankakhutyun.am/archives/5143, «Երկիր», 6 հունվարի, 1993, 1 (343):

նրանց դիտողություններից և առաջարկություններից մամուլն առավել կարևորում էր բուն ներքաղաքական գործընթացներն ու դրանց շուրջ երկրի առաջատար քաղաքական գործիչների տեսակետները: Ասենք, 1999-ին կնքված Հայաստան-ԵՄ Գործընկերության և համաձայնության համաձայնագիրը, որը, փաստացի, Եվրոպական միության հետ մեր երկրի առաջին լուրջ նորմատիվ փաստաթուղթն էր, գրեթե աննկատ մնաց ներհայաստանյան դրամատիկ իրադարձությունների ֆոնին:

1990-ականներին հայաստանյան մամուլն այդպես էլ Եվրոպայի՝ որոշակիորեն ձևավորված և իմաստավորված միասնական կերպար չձևավորեց: Հին աշխարհից եկող լրատվական ազդակները մեր լրատվամիջոցների էջերին կամ եթերում հայտնվում էին հատվածաբար, տարերայնորեն, և լրագրողական համայնքն առանձնապես մտահոգված չէր եվրոպական երկրների կամ կառույցների կերպարի հետևողական կերտմամբ: Հանրային քննարկումները բևեռացված չէին ռուսամետ և արևմտամետ թևերի, և թեև խորհրդային անցյալի վերադարձի մասին խոսք չկար, սակայն դեպի Եվրոպա արվող երերուն քայլերը կարծես նույնպես չէին ամրագրվում մամուլի ոգևորիչ հրապարակախոսությամբ, քանի որ Եվրոպայի կերպարն անորոշ, հեղհեղուկ և վերացական էր:

2001թ. հունվարին Հայաստանի՝ Եվրոպայի խորհրդի անդամ դառնալն ու ԵԽԽՎ-ում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը լայնորեն լուսաբանվեցին հանրապետական բոլոր լրատվամիջոցներով: ԵԽ-ին Հայաստանի անդամակցության օրերին տեղական մամուլը մեծ ոգևորությամբ գրեց այն մասին, որ մեր երկիրը հաջողությամբ է հանձնել մոտ հինգ տարի տևած բարեփոխումների յուրատեսակ «քննությունը», որը հատկապես ԵԽԽՎ-ի կողմից խոշորացույցի տակ դիտարկվում էր 1998թ. իշխանափոխությունից հետո: Երկրի առաջատար լրատվամիջոցները լուսաբանեցին նաև 2004-ին ԵՄ «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրի մեկնարկը երեք հարավկովկասյան երկրներում և 2006-ին ծրագրի անհատական պլանի հաստատումը Հայաստանի հետ, թեև մամուլն այս հարցում առանձնակի ուշադրություն և հետևողականություն չցուցաբերեց և սահմանափակվեց միայն պաշտոնական, արարողակարգային մանրամասներով[1]:

[1] Отчет по мониторингу освещения СМИ Армении программ “Европейская политика соседства” и Фонда “Вызовы тысячелетия”, Ереван: Ереванский пресс-клуб, 2006.

Եվրոպայի խորհրդին անդամակցությամբ Հայաստանի հանրային-քաղաքական դիսկուրսում աստիճանաբար տիրապետող դարձավ մեր երկրի եվրոպական կողմնորոշման դիրքորոշումը, որը գրեթե անվիճելիորեն ընդունվում էր և՛ իշխանությունների, և՛ մտավորականության, և՛ մամուլի կողմից: Լրատվամիջոցները գրեթե միշտ դրական լույսով էին ներկայացնում ինչպես եվրոպական քաղաքակրթական արժեքները, քաղաքական մշակույթն ու տնտեսական ենթակառուցվածքները, այնպես էլ Հայաստանին դրանց հավատարմության ձգտումը, մեր երկրում իրականացվող լայնածավալ բարեփոխումներն ու եվրոպացի գործընկերների խրախուսական հայտարարությունները: Ռուսաստանի նախաձեռնությամբ հետխորհրդային տարածքում ստեղծված ԱՊՀ-ն, ՀԱՊԿ-ը, ԵվրԱզԷս-ը հայրենական և անգամ ռուսաստանյան մամուլի կողմից ոչ միայն չէին դիտարկվում որպես աշխարհաքաղաքական կողմնորոշման այլընտրանք Եվրոպային, այլև կասկածի տակ էր առնվում այդ կառույցների արդյունավետությունը:

Հայաստանյան լրատվադաշտի համար եվրոպական թեմատիկայի և Եվրոպայի հետ Հայաստանի հարաբերությունների լուսաբանման յուրատեսակ նոր մեկնակետ կարելի է համարել 2008-2009թթ., երբ Եվրոպական միությունը որդեգրեց արևելաեվրոպական և հարավկովկասյան հետխորհրդային երկրների հետ մերձեցման քաղաքականությունը, ինչն էլ անխուսափելիորեն հանգեցրեց Եվրոպայի կերպարի վերիմաստավորման: Բնականաբար, հայրենական մամուլը զգալիորեն վերանայեց նաև Ռուսաստանի կերպարը՝ դրանով փաստացի բացելով աշխարհաքաղաքական երկընտրանքի թեման հայաստանյան հասարակությունում:

2009թ. մայիսին Պրահայում տեղի ունեցած «Արևելյան գործընկերության» հիմնադիր համագումարը թեև լայնորեն լուսաբանվեց հայաստանյան ԶԼՄ-ում, սակայն մամուլի ուշադրությունը կենտրոնացած էր ոչ թե Եվրոպայի հետ Հայաստանի հարաբերությունների ձևաչափի ճշգրտման, այլ, օրինակ, հայ-թուրքական հարաբերությունների, արցախյան հակամարտության կարգավորման, ներքաղաքական իրավիճակի հարցերում եվրահանձնակատարների դիրքորոշման վրա: Նախագահ Սերժ Սարգսյանի ունեցած հանդիպումներն ու ելույթները Պրահայում, հետագա շրջանում՝ նաև Բրյուսելում և Ստրասբուրգում, հայկական մեդիա-դաշտին առավելապես հետաքրքրում

էին ոչ թե Հայաստան-ԵՄ գործողությունների անհատական ծրագրի, «Արևելյան գործընկերության» ենթադրյալ ընթացքի կամ ծրագրի մյուս մասնակիցների նկատմամբ մեր դիրքերի շահեկանության թեմաների ծիրում, այլ հենց երկրի անվտանգային և սոցիալական կարիքներին առնչվող խնդիրների եվրոպական ընկալումների համատեքստում[1]:

Ընդհանուր առմամբ, «Արևելյան գործընկերության» հիմնադիր համագումարի հայաստանյան լուսաբանումը հուշում էր, որ մեդիան գործ ունի եթե ոչ շարքային, հերթական, ապա գոնե որևէ էական հանգրվան չնշանավորող եվրոպական միջոցառման հետ: Հատուկենտ լրատվամիջոցներ, ընդհակառակը, ուռճացնում էին մեկնարկող ծրագրի նշանակությունը՝ այն համարելով բոլոր նախորդ նախաձեռնությունների՝ գունավոր հեղափոխությունների կազմակերպման, հնարավոր ցնցումների ու հակամարտությունների ընդհանուր հայտարարը, որը տարաբաժանելու էր Ռուսաստանն ու Արևմտյան Եվրոպան[2]:

2010թ. հունիսին՝ Ասոցացման պայմանագրի բանակցությունների մեկնարկից օրեր և անգամ շաբաթներ առաջ, հայաստանյան մեդիան լուրջ ուշադրություն է ցուցաբերում նախանշված գործընթացի նկատմամբ, մանավանդ որ ԵՄ-ից եկող տեղեկատվական ազդակները հուսադրող ու լավատեսական էին: ԶԼՄ-ն անթաքույց ոգևորությամբ գրում են, որ բանակցությունները դեռ չսկսված՝ Հայաստանին արդեն առաջարկում են 2010-ի վերջին նախաձեռնել նաև ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի պատրաստում և կնքում[3]: Հետաքրքրական է, որ բանակցությունների մեկնարկից մի քանի օր անց՝ հուլիսի 1-ին, ստեղծվում է ՌԴ, Ղազախստանի և Բելառուսի Մաքսային միությունը, որի շուրջ զարգացումները հայաստանյան մեդիայում լուսաբանվում են ընդամենը որպես միջազգային լրահոսի նորություն: Հետագայում ՀՀ-ն իր կազմ ներառած Եվրասիական միությունն այդ պահին հայրենական մամուլի կողմից չէր ընկալվում որպես

[1] http://www.azatutyun.am/content/article/1624507.html, Նախագահ Սարգսյանը հանդիպումներ է ունեցել Բարոզոյի և Սոլանայի հետ:

[2] http://www.lragir.am/index/arm/0/comments/view/26936,
Արևելյան գործընկերություն. ծրագիր և ինտրիգ:

[3] http://www.n-idea.am/arm/news/4293/hoilisi-19-in-meknarkum-en-asocacman-hamadzaynagri-shurj-em-i-het-banakcutyunnery.html,
Հուլիսի 19-ին մեկնարկում են Ասոցացման համաձայնագրի շուրջ ԵՄ-ի հետ բանակցությունները:

«Արևելյան գործընկերությանը» մրցակից կամ այլընտրանքային կառույց, իսկ դրան լիիրավ անդամակցելու մեր հնարավորությունը մամուլը դեռևս գրեթե չէր դիտարկում:

Բնականաբար, բանակցությունների փակ ընթացքը և այդպես էլ չհրապարակված Ասոցացման պայմանագրի նախագիծը պետք է ստիպեին լրագրողներին օգտվել բաց, հասանելի տեղեկատվությունից: Այդպիսին էին, օրինակ, ԵՄ-ի հետ առևտրի և ապրանքաշրջանառության ցուցանիշները կամ միգրացիոն հոսքերի վիճակագրությունը: Այսպես, առաջատար պարբերականներից «168 ժամը» դեռևս 2009-ից վարում էր «Եվրոպական պատուհան» շարքը, որում պարբերաբար ներկայացվում էին Հայաստանի և եվրոպական կառույցների փոխգործակցության մանրամասներն ու մեր օգուտները դրանից: Անգամ Ասոցացման պայմանագրի ստորագրումից հրաժարվելուց հետո էլ մամուլը, այս անգամ արդեն՝ որոշակի ափսոսանքի և կորսված հնարավորությունների տոնայնությամբ, ներկայացնում էր ինֆոգրաֆիկաներ, սլայդներ, դիագրամներ, տեսողականացման այլ միջոցներ՝ ցուցադրելով, թե ինչ կշահեինք մենք պայմանագրի ստորագրման դեպքում:

Ընդհանուր առմամբ, 2013թ. սեպտեմբերի 3-ին հաջորդած մեդիատրամադրությունները կարելի է բնորոշել մեկ բառով՝ հիասթափություն: Մինչ այդ՝ հուլիսին, հրապարակվել էր, որ ԵՄ-ն ու Հայաստանը բարեհաջող ավարտել են երեք տարի տևած Ասոցացման և Խոր ու համապարփակ ազատ առևտրի գոտու պայմանագրերի բանակցությունները: Մամուլը կանխատեսում էր, որ շուտով կձևավորվի ԵՄ-Հայաստան առևտրային հարաբերությունների նոր շրջանակ, պայմանագրի ստորագրումը թույլ կտա ամրապնդել Հայաստանի տնտեսական ինտեգրումը ԵՄ-ին, հայրենական տնտեսությունը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին: Հայաստանյան մամուլը թարգմանաբար ներկայացնում էր անգամ ռուսաստանյան մեդիայի որոշ հրապարակումներ, որոնք տարակուսանք էին հայտնում Ասոցացման պայմանագիրը տապալելու՝ Երևանի որոշման կապակցությամբ:

«Արևելյան գործընկերության» գործողության ընթացքում մամուլի համար տեղեկատվության անգնահատելի աղբյուր էին ՀՀ-ում հավատարմագրված ԵՄ երկրների դիվանագետները, որոնք երբեմն կարող էին շեղվել Բրյուսելի և Ստրասբուրգի ավանդական դիվանագիտական լեզվառճից և

սուր ու քննադատական հայտարարություններ անել պաշտոնական Երևանի որոշ գործողությունների հասցեին: Ծրագիրը նախաձեռնած երկրներից Լեհաստանը՝ ի դեմս ՀՀ-ում այդ երկրի դեսպան Զդիսլավ Ռաչինսկու, առանձնահատուկ ընդգծված ուշադրություն էր ցուցաբերում Հայաստան-ԵՄ զարգացումների նկատմամբ, և լրագրողների համար Երևանի արձանագրած հաջողությունների մասին դեսպանի կարծիքը, թերևս, նույնքան սկզբունքային կարևորություն ուներ, որքան Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավարներ Ռաուլ դը Լուցենբերգերինը, ապա՝ Տրայան Հրիսթեայինը: Լեհ դիվանագետի հետ գրեթե ցանկացած հարցազրույց սկսվում և ավարտվում էր «Արևելյան գործընկերությանը» Հայաստանի մասնակցության շուրջ հաջողությունների քննարկմամբ և ապա միայն՝ հայ-լեհական հարաբերություններին անդրադարձով[1]:

ՌԴ, Ղազախստանի և Բելառուսի ձևավորած Մաքսային միության առաջին քայլերին զուգընթաց՝ արդեն 2011թ. հայկական մամուլում անհանգստություն է առաջ գալիս, թե ՀՀ-ն հետ կկանգնի ԵՄ-ի հետ հարաբերությունների սերտացումից և կընտրի զարգացման եվրասիական ուղին: Բանակցությունների գրեթե ողջ ընթացքում և ընդհուպ մինչև 2013թ. սեպտեմբեր՝ հայրենական մեդիա-դաշտը հնարավորինս ուռճացնում և գունազարդում է ՀՀ աշխարհաքաղաքական ընտրության անխուսափելիության թեման՝ իշխանություններին փաստացի առաջադրելով «կա՛մ-կա՛մ» բանաձևը: Լրատվամիջոցների առավել նեղ շրջանակ, իր հերթին, վերապահումով էր նայում Հայաստան-ԵՄ բանակցությունների նպատակահարմարությանը՝ նախապատվությունը տալով Մաքսային միությանը մեր ներգրավմանը: Հետաքրքրական է, որ այդ մասին խոսվում էր անգամ մինչև Ասոցացման պայմանագրի նախաստորագրումից Հայաստանի հրաժարումը: Այսպես, ռուսամետ դիրքորոշմամբ աչքի ընկնող «Սոյուզինֆո» կայքը, հղում կատարելով Եվրահանձնաժողովի անանուն ներկայացուցիչների, նշում է, թե Ասոցացված անդամակցություն հասկացությունն արհեստածին է, քանի որ ԵՄ-ում գոյություն ունեն թեկնածու և պոտենցիալ թեկնածու բնութագրիչները, իսկ ՀՀ-ի համար Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու պայմանագիրը մեծ հեռանկարներ չի խոստանում, քանի որ եվրոպական շուկա մուտք գործելու

[1] http://www.mediamax.am/am/news/interviews/2640/, Լեհաստանի դեսպան. «Արևելյան գործընկերությունը» բարեփոխումներ իրականացնելու հրավեր է»:

համար պետք է թողարկել եվրոպական չափանիշներով մրցունակ արտադրանք, որը մենք չունենք[1]:

Ծրագրի գործողության ընթացքում որոշ հայրենական լրատվամիջոցներ ընդարձակ անդրադարձներ են հրապարակում նաև մասնակից մյուս երկրների հաջողությունների թեմայով՝ բնականաբար, դրանք համեմատության մեջ դնելով Երևանի հետ: Այս առումով բավական հետաքրքրական են Եվրամիության հետ Ադրբեջանի՝ որպես մեզ հետ հակամարտող երկրի, գործակցության լուսաբանումները: Օրինակ, Երևանում և Բաքվում Մեծ Բրիտանիայի դեսպանությունների ուժերով Հայաստանի «Հետք» և Ադրբեջանի «Նովոյե վրեմյա» պարբերականներում հրապարակվում է 40-ական հարցազրույց անկախ փորձագետների և պաշտոնյաների հետ Եվրամիության հետ գործակցության վերաբերյալ[2]: Հայաստանյան լրատվամիջոցները հնարավորինս ուշադիր էին նաև եվրահանձնակատարների՝ տարբեր առիթներով Ադրբեջանին ուղղված երբեմնակի քննադատությունների նկատմամբ: Օրինակ, 2014թ. հուլիսին հայրենական և հենց ադրբեջանական մամուլը փոթորկում է ծրագրի նախաձեռնող երկրներից մեկի՝ Շվեդիայի ԱԳ նախարար Կառլ Բիլդտի հայտարարությունը, որով նա կասկածի տակ է առնում «Արևելյան գործընկերությանը» մասնակցելու Ադրբեջանի անկեղծ ձգտումը՝ դա պայմանավորելով երկրում տիրող բռնապետական վարչակարգով[3]:

2014թ. առաջին ամիսներին հայկական մեդիայի աչքի առջև էին ուկրաինական ներքաղաքական ճգնաժամը, իշխանափոխությունն ու երկրի հարավ-արևելքում մոլեգնող պատերազմը: Եթե ոչ ամենօրյա լրատվության, ապա գոնե փորձագիտավերլուծական մակարդակում ընկալելի էր, որ այդ ամենն արդյունք է «Արևելյան գործընկերության» անդամ այդ երկրի ինտեգրացիոն ուղեգծի ընտրության շուրջ անխոհեմ սակարկումների ու երկրի իշխանությունների անհեռատեսության: Այս համատեքստում հայ լրագրողներն ու սյունակագիրները, թեև ընդհանուր առմամբ հիացած չէին Մաքսային միությանը մեր անդամակցության հեռանկարով, սակայն օրինակ բերելով

[1] http://www.soyuzinfo.am/arm/analitics/detail.php?ELEMENT_ID=564, ՀՀ-ն ՌԴ նոր նախաձեռնությունների և ԵՄ «Արևելյան գործընկերության» ընտրության առջև:

[2] http://hetq.am/arm/news/3273/arevelyan-gortsynkerutyan-tsragiry-evropakan-taratsutyan-miakoxmani-ogtagortsman-mijoc-che.html, Արևելյան գործընկերության ծրագիրը եվրոպական տարածության միակողմանի օգտագործման միջոց չէ:

[3] http://yerkirmedia.am/index.php?act=news&lan=hy&id=21262, Շվեդիայի արտգործնախարարը կասկածի տակ է առել ԵՄ Արևելյան գործընկերություն ծրագրին մասնակցելու Ադրբեջանի անկեղծ ձգտումը:

ուկրաինական սցենարի ողբերգականությունը՝ ըմբռնումով էին մոտենում անվտանգային գործոնի առաջնայնությանը և հիմնականում դրանով էլ պայմանավորում մեր ինտեգրացիոն ուղեգծի արմատական շեղումը դեպի Ռուսաստանի նախաձեռնած վերպետական կառույց[1]:

2014թ. երկրորդ կեսից ԶԼՄ վերլուծական հրապարակումներում եվրաինտեգրման հարցում նահանջողական տրամադրություններն աստիճանաբար վերափոխվում են նոր հնարավորությունների և ծրագրերի քննարկումների: Բացի այդ, Եվրամիության հեղինակությունը հայրենական մամուլի էջերում արդեն այնքան անառարկելի ու անվերապահ չէր, որքան ծրագրի մեկնարկին՝ 2009-ին: Բացի Հայաստանից, Բելառուսի և Ադրբեջանի՝ Ասոցացման պայմանագրի ստորագրումից հրաժարումը, Ուկրաինայում տիրող խոր անկայունությունն ստիպում են հայ փորձագիտական մտքին կասկածել նաև ԵՄ նպատակների անկեղծությանը և Եվրոպայում քաղաքական կամքի առկայությանը՝ բարեփոխելու այս երկրները[2]: Որոշ լրատվամիջոցներ անգամ ընդհանրացումներ են անում առ այն, որ ծրագրի տապալումից հետո Եվրամիությունն իր սահմանների մոտ ունի շատ ավելի անբարենպաստ և աննպատակահարմար վիճակ, քան դրա մեկնարկի պահին[3]: Գտնվում են նաև եվրոպացի վերլուծաբաններ, որոնք հայաստանյան մամուլի էջերում հանդես են գալիս «Արևելյան գործընկերության» քննադատությամբ՝ կոչ անելով բարեփոխել այն[4]:

Հայրենական մամուլը, թեև հպանցիկ, անդրադառնում է «Արևելյան գործընկերության» տապալումից հետո 2014թ. փետրվարին ԵՄ մշակած նոր ծրագրին, որն անվանում է «Եվրոպական փաթեթ» կամ «20 կետերը՝ Վիլնյուսից հետո»: Ըստ դրա՝ ԵՄ-ը համագործակցության նոր, տարբերակված մոտեցում էր ցուցաբերելու Հայաստանի նկատմամբ և նախապատրաստելու էր նոր համաձայնագրի կնքումը[5]: Եվրահանձնակատարների, ԵՄ երկրների

[1] http://ankakh.com/article/902/ashkharhn-aysor-haytnvyel-e-%C2%ABsarre-patyerazm-layths%C2%BB-vitjakum, Աշխարհն այսօր հայտնվել է «սառը պատերազմ լայթս» վիճակում:

[2] http://mitk.am/2014/11/08/%D5%AB%D5%9...,
Ի՞նչն էր սխալ, և ի՞նչը ԵՄ-ն այնքան էլ լավ չէր հաշվարկել:

[3] http://www.azg.am/AM/2015031314, Բոլորը՝ զումարած Ռուսաստան:

[4] http://www.mediamax.am/am/news/foreignpolicy/8963/, ԵՄ-ը չպետք է Արևելյան գործընկերությունն առաջ տանի սխալ ուղղությամբ, կարծում է լատվիացի գործիչը:

[5] http://168.am/2014/02/13/329315.html, «Արևելյան գործընկերության 20 կետերը՝ Վիլնյուսից հետո» (ամբողջական փաստաթուղթ):

պաշտոնյաների և դեսպանների հետ հարցազրույցներում գերիշխող թեմաներ էին Եվրամիության կորսված հավատի վերականգնումը պաշտոնական Երևանի նկատմամբ[1], Հայաստան-ԵՄ հարաբերությունների վերալիցքավորումը և նոր մեկնարկը[2], նոր համաձայնագրի կնքման նպատակահարմարությունը[3]: 2015թ. մարտին հրապարակված «Արևելյան գործընկերության» մասնակից վեց երկրների եվրաինտեգրման ինդեքսում Հայաստանի զբաղեցրած չորրորդ հորիզոնականը՝ ասոցացված Մոլդովայից, Վրաստանից և Ուկրաինայից հետո և չասոցացված Ադրբեջանից ու Բելառուսից առաջ, կանխատեսելի էր, և դրա հիման վրա հայաստանյան մամուլն ինտենսիվորեն զբաղվում է երկու ամիս անց՝ 2015թ. մայիսին կայանալիք ԵՄ «Արևելյան գործընկերության» Ռիգայի գագաթաժողովի շուրջ սպասվող զարգացումներով[4]:

Ապրիլ, 2015թ.

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Դավիթ Սարգսյան

Ամփոփագիր

Հոդվածը ներկայացնում է հայաստանյան ԶԼՄ տեղն ու դերը Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման դիսկուրսում, մասնավորապես՝ հայրենական մամուլի կողմից Հայաստանի եվրոպական ինտեգրման ուղեգծի մեկնաբանումները, Եվրոպական միության՝ որպես գործընկերոջ, կերպարի ձևավորման օրինաչափությունները, տեղական ԶԼՄ-ում Հայաստանի և եվրոպական ինտեգրացիոն նախագծերի առնչությունների անդրադարձների առանձնահատկությունները: Ուրվագծվում են Հայաստանի անկախության առաջին երկու տասնամյակներում ինտեգրացիոն գործընթացների նախապատմության և արտաքին քաղաքականության եվրոպական ուղեգծի լրագրային արձագանքների հիմնական օրինաչափությունները և հայաստանյան մեդիա-դաշտի կողմից ինտեգրացիոն գործընթացների ընկալումների հիմնական առանձնահատկությունները:

[1] http://www.mediamax.am/am/news/interviews/12446/, Զդիսլավ Ռաչինսկի. Հայաստանը պետք է համոզի ԵՄ-ին, որ վստահելի գործընկեր է:

[2] http://www.mediamax.am/am/news/interviews/13065/, Էդգարս Ռինկևիչս. Կարևոր է վերանայել ԵՄ-Հայաստան կապերի հիմքը:

[3] http://www.mediamax.am/am/news/interviews/12566/, Լինաս Լինկյավիչյուս. «Կտեսնենք՝ արդյո՞ք ՀՀ-ԵՄ նոր համաձայնագրի կարիք կա»:

[4] http://interpress.am/eastern-partnership/, ԱլԳ քաղհասարակության ֆորում. նոր հրապարակումը գնահատում է Արևելյան գործընկերների եվրոպական ինտեգրումը:

ВОСПРИЯТИЕ ЕВРОПЕЙСКОЙ ИНТЕГРАЦИИ В АРМЯНСКОЙ ПРЕССЕ

Давид Саргсян

Резюме

В статье рассматривается роль СМИ Армении в дискурсе геополитического выбора страны, в частности, трактовка местной прессой процесса европейской интеграции Армении, особенности формирования образа Европейского союза как партнера, а также специфика освещения точек соприкосновения политики Армении и европейских интеграционных проектов в местных СМИ. Даны также основные векторы журналистских подходов европейской внешнеполитической повестки дня первых двух десятилетий истории независимой Армении.

PERCEPTION OF THE EUROPEAN INTEGRATION IN THE ARMENIAN PRESS

Davit Sargsyan

Resume

The article discusses the role of the Armenian media in the local discourse of the geopolitical choice. Particularly, the main issues are media comments and interpretations of the so-called “European integration path” of Armenia, the process of image-making of the European Union as a partner of Armenia, the coverage of the links between Armenian policies and European integration global projects, especially the Eastern Partnership. The main features of the media coverage of the European integration path and Armenian media perceptions of the integration processes in the first decades of Armenia’s independence are provided.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*, ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
   - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   - *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 21.04.2015թ.
Թիվ 2 (60), 2015թ.
Տպաքանակը՝ 200։

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում